

Henrik Hovhannisyan

ACTORS at SELF-DISCERNMENT

An Essay

YEREVAN – 2020

ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈԹԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԵՐԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՃԱՆԱԳՈՒՄԸ

Էսակ

**ԵՐԵՎԱՆ – 2020
«Եղիթ-Պրինտ» հրատարակություն**

ՀՏԴ 792

ԳՄԴ 85.33

Հ 51

Հրատարակում է Երևանի թատրոնի և կինոյի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հովհաննիսյան Հ.

Հ 854 Դերասանի ինքնաճանաչումը. Էսսե, Երևան,
«Էդիթ-Պրինտ» հրատ., 2020, 164 էջ:

Հեղինակը քննության է առնում դերասանի արվեստի բնույթն իր ուսումնառության շրջանի և հետազայի կենդանի օրինակների ու զրույցների հիման վրա: Նկատի են առնված Վարդան Աճեմյանի և Արմեն Գուլակյանի ստեղծագործական սկզբունքներն ու աշխատանքի եղանակները հիմնված կ. Ստանիսլավսկու ուսմունքի ստեղծագործական կիրառման վրա: Ընտրված է պարզ զրույցի ու երկխոսությունների եղանակը և ուղղված է թատերական կրթության հետևողներին:

ՀՏԴ 792

ԳՄԴ 85.33

ISBN 978-9939-75-549-6

© Հովհաննիսյան Հ., 2020

ՄՈՒՏՔ

Երևանի ամենամաքուր թաղամասում, համայսարանի, պոլիտեխնիկական ինստիտուտի, Հանրային գրադարանի ու կոնսերվատորիայի կողքին ինձ ձգում էր թատերական ինստիտուտի եռահարկ, ծիրանագույն շենքն իր խաղաղ փակուղում։ Մտածում էի, որ այդտեղ ամեն ինչ գեղեցիկ է՝ մարդիկ, իրեր, հարաբերություններ, որ այդտեղ գրադաճ են աշխարհում ամենախորհրդավոր գործով, և ինձ պատրաստում էի դրա համար։ Հետեւում էի բոյոր ներկայացումների քննարկումներին Արվեստի աշխատողների տանը, կարգում էի թատրոնին վերաբերող ամեն ինչ և մի օր էլ ձեռքս անցավ Ստանիսլավսկու «Դերասանի ինքնին աշխատանքը»։ Դա կապ չուներ իմ ներշնչումների հետ և ինձ գգաստագրեց։ Պարզվում էր, որ դերասանի աշխատանքը բարոյագես ամենապատասխանատու վիճակն է մարդուս համար։ Ներկայացնել ճշմարիտ հոգեկան կյանք հանրության հայցքի առջև։ Հնարավոր բան է։ Հեղինակի այն խոսքը, թե հագարներն են մտնում բեմ, դառնում արհեստագոր, ու հագարից մեկն է մոտենում արվեստի, մտածել էր տալիս՝ արժե՞… Ակսեցի հոգեբանական ճշմարտության չափանիշով դիտել բոլոր ներկայացումները, և շատ քիչ բան էր դիմանում քննության։ Իսկ քննարկումներն ընթանում էին առավելապես բարոյագաղափարական թեքումով։

Եկ այդպես մասսայական քննարկման էր անցել նաիրի Զարյանի «Փորձագաղտ» պիեսը Վարդան Աճեմյանի բեմադրությամբ (1953 թ.)։ Քննարկվում էր ամենուրեք, խոսում էին լրագրողները, ուսուցիչները, ուսանողները, աշակերտները։ Մի քննարկման, ուր ներկա էին Աճեմյանը, Գուրգեն Զանիբեկյանն ու Դավիթ Մալյանը, խոսեցի ես

իմ սովորած մասնագիտական հասկացություններով, դարձա հեղինակին, թե ինչու դրամատիկական վիճակը յուժվում է հեռախոսի դատախազական գանգով, ակնարկեցի մելքերկու բեմական անցում։ Աճեմյանը ծիծաղեց ու ծափ գարկեց։ Ես լոեցի։

— Շարունակիր, — ասաց, — լավ ես ասում։
Քննարկման ավարտին նա մոտեցավ ինձ, ձեռքը դցեց
ուսիս։

- Դու թատերագետ ես։
- Դիմելու եմ թատերական ինստիտուտ, — ասացի։
- Գործ չունես, կդնաս համալսարան։

Հաջորդ տարի ավարտելու էր Աճեմյանի կուրսը, և իր կուրսն էր հավաքելու Արմեն Գուլակյանը։ Նա թատրոնից հեռացված էր։ Զգրված օրենք էր. եթե հեռացված էր կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարը, փոխվելու էին բոլոր կարեոր ղեկավարները։ Գույակյանը հեռացված էր մայր թատրոնի գլխավոր ռեժիսորի պաշտոնից և մնում էր միայն ինստիտուտում։ Ուսանողներից ոմանց արամադրել էին նրա դեմ կոմսոմոլի ժողովում։ Ասում էին՝ վատ մարդ է, բեմը գրավել է, ծառայեցնում է իր դասարանին։ Լսում էի խոսքեր ու մտածում, որ պետք է հեռու մնայ այդ մարդուց։ Մոտիկից ճանաչում էի երեք տարի առաջ (1951 թ.) նրա կուրսն ավարտած ու թատրոնում հաստատված Խորեն Աբրահամյանին։

— Ի՞նչ ես ասում, վատ մա՞րդ, — ասաց Խորենը։ — Վատը նրա դեմ խոսողներն են։ Նրա նման ռեժիսոր ու թատրոնի ղեկավար ես չեմ ճանաչում։ Մոսկվայի թատրոններում էի չկա։

Այս գրույցից հետո վերացավ իմ նախապաշարմունքը Գուլակյանի հանդեպ։ Մտքումս էր նաև Աճեմյանի խոսքը՝ «գնա համալսարան»։ Ես փնտրում էի իմ համալսարանը համալսարանից հեռու մի տեղ։ Բայց ինձ զգաստացնում էր Ստանիսլավսկու մշակած խստակրոն

Համակարգու որպես չափանիշ՝ ճշմարտության։ Ի վերջո ինքս վճռեցի խնդիրը, երբ հանդիպեցի ինձ հետ քննության պատրաստվող Արմեն Ջիգարխանյանին։ Երկու խոսքից իրար հասկացանք։ Հրաշալի էին մեր զրույցները, մեր ձգտումները վեհ, և ինստիտուտի ծառագարդ, փոքրիկ բակն այդ օրերից դարձավ մեր ակադեմիան։

— Եթե թատերագիտական ֆակուլտետը փակված չլիներ, — ասացի մի օր, — վատ չէր լինի, հա՞...

— Ոչ, — ասաց Արմենը, — արվեստում միայն ստեղծագործող պիտի լինես։ Ես այս խոսքը լսել եմ մի թատերագետից՝ Մոսկվայում ապրող Բաբկեն Հարությունյանից։

Մտածեցի՝ յափ է, որ չկա թատերագիտականը։ Անկեղծագա ինքս ինձ հետ ու չէի սպասում այն սառը ջրին, որ լցվելու էր գյխիս քննության առաջին տուրում։ Կորցրի երկու միավոր, երկրորդ տուրում ևս մեկը։ Միջնորդությունները բացահայտ էին, հսկողություն չկար, մարդիկ ազատ մտնում էին քննասենյակ, խոսում, հարցերը յուժում, դուրս գալիս։ Կողքից ինձ հարցրին ու զարմացան։

— Մարդ չունե՞ս։

Այդ մարդն իմ կարծիքով Աճեմյանն էր լինելու, բայց նա այդտեղ չէր։ Քննությունն ընդունում էր երկրորդական կարգի մի ռեժիսոր, իսկ բեմական խոսքի գնահատականը որոշում էր ագռավի ձայնով արտասանող մի տիկին։ Փլում էր իմ երազանքի պայտար։ Գնացի Աճեմյանի մոտ։ Նա ինձ ընդունեց ուրախությամբ, բայց լսեց անտարբեր ու հեգնական։

— Երևանում համալսարան չկա՞։ Քո տեղը թատերագիտությունն է, գնա համալսարան, ֆիլոլոգիական ֆակուլտետ։ Գնա և կիմանաս՝ քեզ ինչ է պետք։

— Իմ համալսարանն այստեղ է, — ասացի։

— Պետք է առողջ նայել հարցին։ Կարելի է սովորել թատերական ինստիտուտում, գերազանցությամբ ավարտել

ու դերասան չդառնալ, և կարելի է դերասան դառնալ առանց թատերական ինստիտուտում սովորելու:

Աճեմյանն ինձ ճանապարհեց կրկնելով նույն խոսքը.

— Պետք է առողջ նայել հարցին:

Քննություններն ավարտվեցին, ինձ մեկ միավոր էր պակասում, անունս ցուցակում չկար: Առանց հապաղելու մտառեկտորի՝ Արա Սարգսյանի առանձնասենյակը, իրնդրեցի դասի նստելու թույլտվություն, ազատ ունկնդրի իրավունքով: Ոեկտորը ներկա էր եղել քննությանը, միջնորդություններին տեղյակ էր և պատկերացում ուներ բոլորի մասին: Նայեց արձանագրությունները, համեմատեց, կանգ առավ բեմական խոսքի գնահատականի վրա...

— Տարբերությունը մեծ չէ, — ասաց ու ինձ թույլ տվեց լինել պայմանական ուսանող:

Ես մուտք էի գործում իմ երազանքի «պայատր» ի հեճուկս, թե՞ ճակատագրի հեգնանքով, մտքումս Աճեմյանի խոսքը. «գնա համալսարան, կիմանաս՝ քեզ ինչ է պետք»:

Այս, ինչի հանդիպեցի այնտեղ, դժվար էր նմանեցնել համալսարանական կրթության: Ինստիտուտ ասվածը մի ուսումնարան էր և թատերական դպրոց: Միջավայրը բարեկիրթ էր, չկար աղմուկ, բարձրաձայն խոսակցություն, նույնը բակում, որտեղ երբեմն իրենց նկարակալն էին դնում գեղանկարչական բաժնի ուսանողները: Ես մեկ տարի ազատ ունկնդիր եղա Աճեմյանի դասարանում, ապա երեք տարի յիարժեք ուսանող Գույակյանի դասարանում, և այն, ինչ ստացա այդ դպրոցում, չէի գտնելու թատրոնին վերաբերող որևէ գրքում: Դա գործնական փորձ էր ու խոսք, պարզ ու առօրեական, երբեմն սուր ու հեգնական: Դա իմ նախակրթությունն էր, որտեղ գործնականի ու տեսականի սահմանն ինքս էի որոշելու: Դա արմատապես տարբեր էր այն թատերագիտությունից, որը մտածվել էր բեմից դուրս: Հետագայում բախվելու էի այն իրողությանը, որ իմ՝ հետազոտողիս զննումները չունեն իրենց

Համատեքստը թատրոնի շուրջը կուտակված գրականության մեջ։ Ուստի որոշեցի խոսել բեմական արվեստի մասին ամենապարզ գրույցի եղանակով, իմ ուսումնառությունից բերված փաստացի օրինակներով, որ թանկ են ամեն տեսությունից։

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԸ ԹԱՏՐՈՆՆ ԻՐԵՆՈՒՄ

Վարդա՞նը ... Մարդը եվրոպա չի տեսել,
 եթե Եվրոպա տեսած լիներ...
 Վահրամ Փափազյան

Եթե պատրաստ չես, նրանից ոչինչ չես
 կարող սովորել, իսկ եթե պատրաստ ես, օ՛,
 շատ բան կարող ես վերցնել: Նա ամբող-
 ջապես թատրոնի մարդ է:

Յուլիկ Ամերիկյան

Երկու շաբաթ էր արդեն, դասերն սկսվել էին, Աճեմ-
 յանը չէր երեռւմ: Հետո իմացանք. դժգոհ էր, որ ինքը չի
 րնարել իր ուսանողներին: Վերջապես մի օր եկավ տասն-
 հինգ րոպե ուշացումով: Բարեկեց, նստեց, վառեց ծխախո-
 տը, ծուխը բաց թողեց օղակ-օղակ, նայեց ծխի օղակներին,
 ապա առաստաղին ու դարձավ լսարանին.

– Այդպե՞ս, շատ եք, – ասաց ու նայեց ինձ, – դու է՞՛
 էստեղ ես, Հովհաննիսյան:

Այս խոսքը յուրջ էր, թե կատակ, ինձ չդիպավ: Համոզ-
 ված էի, որ այդտեղ պիտի լինեի և կարծում էի՝ համոզելու
 եմ Աճեմյանին, որ լուռ նստել էր, ծխում էր ու նայում էր
 մեզ, մենք էլ իրեն ուրախ ու հուսալից հայացքներով: Կրկնեց նույն խոսքը՝ «շատ եք», վեր կացավ, հետ ու
 առաջ քայլեց, հայացքն առաստաղին: Խումբը տասնչորս
 հոգուց ավել չպետք է լիներ, մինչդեռ նրա դիմաց նստած
 էին քսանչորսը: Խցկվել էինք «երեսի զոռով», և խցկած-
 ներին մեջ միայն ինձ գիտեր: Հետո էի հասկանալու, որ նա
 մտածում էր խումբը զտելու և նոր բնտրություն անելու
 մասին: Հետագայում նկատելու էի, որ Աճեմյանը ոչ մի

պատահական խոսք չի ասում, ոչ մի բառ, և յսարանին ուղղված նրա առաջին խոսքն էլ իր խնդիրն ուներ:

– Զեզանից ովքե՞ր են խաղացել թատրոնում կամ որ՝... ակումբային և այլ, և այլ խմբերում:

Խաղացողները վստահ ներկայացան, բացի մեկից, որ պրոֆեսիոնալ բեմում էր եղել տասներկու տարեկանից:

– Ի՞նչ եք խաղացել:

– Դոննա Աննա.

– Ի՞նչ:

– Պուշկինի «Քարե հյուրը»:

– Որտե՞ղ:

– Արարեկիրի ակումբում:

Աճեմյանը զվարթացավ.

– Էստեղ Դոն Գուան էլ կա՞:

– Կա, – պատասխանեց Արարեկիրի Դոն Գուանը:

– Օչո՛...

Աճեմյանը երկիմաստ ժապտում էր և ծխախոտի ծուխը օղակ-օղակ փչում առաստաղին: Ոմանք խաղացված դերերի անուններ տրվեցին: Աճեմյանը մի քիչ յուեց, գրպանից հանեց թագբեհը, պատեց, գրպանը դրեց, վեր կացավ.

– Զեզ կարելի է կոչումներ տալ. պատրաստի դերասաններ եք, յուրդ դերեր եք խաղացել, փորձ ունեք, վաստակ ունեք և այլ, և այլ:

Հեգնանքով էր խոսում, բայց հաջորդ նախադասությունն արտասանեց շատ յուրդ.

– Մոռացեք, ինչ խաղացել եք, մոռացեք: Լսե՞լ եք, մի բառ կա «դիլետանտիզմ»: Գնացեք, կարդացեք, կիմանաք՝ ինչ է նշանակում: Ինձ հետաքրքրում են նրանք, ովքեր ոչ մի թատրոնում ոչ մի դեր չեն խաղացել:

Նա երկար չբացատրեց իր միտքը: Այնքանն ասաց, որ դիլետանտը հեշտությամբ սովորում է խաղի արտաքին մի քանի կերպաձևեր և կրկնում մեքենայորեն. պատրաստի և կրկնվող կերպաձևերը բացառում են ստեղծագործությու-

նր, և նա, ով սովորել է ակումբային խաղի այդ եղանակին, նրա երգը երգված է. նա չի կարող հասկանալ ներքինից արտաքինը գնացող խաղը, եթե հասկանա էլ, չի կարող յուրացնել: Աճեմյանը գործածեց «շտամպ» բառը, բացարձեց՝ ինչ է այդ, ասաց, որ շատ թատրոններում, առավել ևս ակումբային բեմերում, խաղում են պարզունակ ու էժանագին կերպաձևերով, և այդպես դաստիարակված «փարպետները» նույնն են մնում ամբողջ կյանքում, տարիքն առնում, և նրանց ասում են «փորձված»:

Աճեմյանն այսքանով ավարտեց իր առաջին դասի ասելիքն ու արագ, զանգից տասնհինգ րոպե չուտ գնաց, կարծես փախավ, ազատվեց: Հաջորդ դասին եկավ դարձյալ ուշացած և էլի շուտ գնաց: Պարզվեց, որ դա նրա սովորությունն է: Գայիս էր արագ, ձեռքին մի բան՝ թագբեհ կամ փայտի կտոր խաղացնելով: Թվում էր, թե մի բան ունի դրսում թողած, ավելի կարևոր, քան դասը: Պարզ երևում էր, որ գժգոհ է քննության արդյունքներից՝ իր դիմաց իր ուղած խումբը չէ: Նա իր նախաձեռնությամբ բնդունելություն կազմակերպեց, և կուրսում ավելացան նոր ուսանողներ Գուժ Մանուկյանը, Գայլա Նովենցը, Յուլիա Ենգիբարյանը և նրանց կողքին մի մեծամարմին ուսւաղիկ, հայկական ազգանունով՝ Ղաղոբյան, հայերեն չիմացող: Խումբը մեծացավ, աշխատանքը դժվարացավ:

Աճեմյանի ամբողջ վարքագծում կար մի տեսակ րոպեականություն ու հեղնանք, որ ասում էր, թե ինչ որ անում ենք, յուրջ չէ, իսկականը չէ: Եվ ո՞րն էր իսկականը: Դա իմացա երրորդ, թե չորրորդ դասին: Աճեմյանը կանգնեց ամբիոնի մոտ և յուրջ ու կենտրոնացած խոսեց մի քառասուն րոպե անրնդմեց: Այն, ինչ ասում էր, կարծես նորություն չէր, ծանոթ էր Ստանիսլավսկու «Արհեստից»: Բայց Աճեմյանի ասածը շատ ավելի հետաքրքիր էր ու տրամադրող: Դա ամենահետաքրքիր խոսքն էր, որ երբեք լսել եմ մեր թատրոնի մարդկանցից ու հենց

Աճեմյանից: Տեսական մտքի բացառիկ ու բոպեական մի ճառագայթում էր դա: Աճեմյանը խոսում էր բեմական ճշմարտության մասին՝ այն մասին, թե ինչ ասել է առաջադրված պայմանական պահի էսթետիկական գգացում և դրության օրգանականություն, երբ մարդը պահն ընդունում է այնպես, կարծես նոր է ապրում և ուզում է այդպես ապրել: Խոսքը խաղային հակագդման ու փոխհաղորդակցման մասին էր, գործող անձի վարքագծի ամբողջականության, անրնդմիջության, նպատակայնության մասին: Չեմ գրառել և չեմ ուզում որևէ ուղղակի ձեակերպում բերել, չեմ ուզում հորինել: Նա մի միտք էր զարդացնում, այն է՝ արվեստը բացառում է կրկնությունը, բացառում է մակերեսային ցուցադրականությունը: Այսպես խոսեց, խոսեց ու կանդ առափ, նայեց հարցական՝ պե՞տք էր, թե՞ պետք չէր.

— Լավ, հետո...

Ասաց ու արագ դուրս գնաց, ինչպես միշտ, առանց ցտեսություն ասելու:

Մի օր էլ հանեց «Կազբեկի» տուփը, ծխախոտը վառեց ու նայում էր տուփի նկարին, կարծես նոր էր տեսնում: Ես նկատել էի նրա այդ սովորությունը՝ ծանոթ, ամեն օր տեսած առարկային նայել անծանոթի նման, զննել որպես նորություն: Այդպես նայեց նկարին ու մեզ հարց տվեց.

— Ի՞նչ բան է արվեստը, ձեր կարծիքով:

Նա համառորեն պատասխանի էր սպասում:

— Ի՞նչն է ձեզ բերել այստեղ, ի՞նչ եք փնտրում, ի՞նչ եք ուզում...

Նա ծխախոտի տուփը նկարի կողմով պահեց մեր առջե.

— Սա ի՞նչ է, արվե՞ստ է, թե՞ արվեստ չէ:

— Արվեստ չէ, — շտապեց պատասխանել մեկը:

— Ինչի՞ց իմացար: Ինչո՞ւ:

— Արվեստ է, — ասաց մեկ ուրիշը:

— Ինչո՞վ:

Պատասխան չկա:

— Շտամպ է,— կամացուկ, կիսակատակ ասաց մյուսը:
— Բառ է, սովորել եք... Շտամպ: Իհարկե, գործարանը
շտամպ խփելով բաց է թողել այս տուփից հարյուր
հազարներով: Արան ասում են «շիրպոտրեք», մասսայա-
կան արտադրություն: Արվեստն ի՞նչ կապ ունի մասսա-
յական արտադրության, յայն սպառման առարկաների
հետ: Սա յայն սպառման առարկա է, արվեստ չէ:

Նա յոեց ու հարցական նայեց.

— Ուրեմն, սա արվեստ չէ, հա՞... ի՞նչ եք կարծում:
Ես ջանում եմ ճիշտ ճիշել, զնարավորին չափ ճիշտ
վերարտադրել վաթունվեց տարի առաջ յսածս, որ եղել է
գեղագիտության իմ առաջին դասը:

— Ուշադիր նայեք այս նկարին,— ասաց:— Ի՞նչ եք
տեսնում: Գիշերային մուգ կապույտ, սառը երկինք, ձյու-
նապատ յեռ, միայնակ ձիավոր՝ սև ստվեր: Տեսնո՞ւմ եք
սառնությունը... Լեռը սառույցի մեծ բեկորի նման, ձին
գալթում է սառցապատ ճանապարհին... Նկարիչը տեսել է
իր երեակայության մեջ, կամ վերարտադրել է տեսածը,
որպես հիշողություն, վերապրել է մի գգացում և ստեղծել
է արվեստի գործ, անկրկնելի, որ մի հատ է, իր մոտ կամ
որևէ տեղ: Դա այն է, ինչ հեղինակինն է: Սա հեղինակինը
չէ, գործարանային կրկնությունն է: Այստեղ ոչ մի
գգացում էլ չկա: Հարյուր հազարավոր օրինակներով բազ-
մացվել է և ամեն ախմախի գրպանում կա, բնկած է փողո-
ցում, աղբանոցում: Սա այլևս արվեստ չէ, շիրպոտրեք է:
Օրիգինալը մեկն է: Սա որոշ գաղափար է տալիս օրիգի-
նալի մասին: Չենք կարող ասել, թե որքանով է մոտ օրի-
գինալին:

Կարևորը ստեղծագործության կենդանի հետքն էր, որ
այստեղ չէր կարող պահպանված յինել: Ամեն մի պատ-
ճենահանում սպանում է այդ հետքը, այն է՝ բուն ար-

Վեստր: Այս էր Աճեմյանի միտքը, և, այդ մտքից ելնելով,
նա չէր բնդունում կինոն:

— Կինոն ի՞նչ է, շիրպոտրեր, արվեստ չէ:

Աճեմյանի այս խոսքը, նույն բառի շեշտումով, լսել եմ
նաև այս գրույցից քսան տարի հետո 1974-ին: Կինոն չըն-
դունելու պատճառը գուցե այն էր, որ այնտեղ եղածը
եղած է, Հնարավոր չէ ջնջել, նորից գրել, ինչպես թատ-
րոնում: Որքան կարողացել եմ նկատել, Աճեմյանին ավելի
էր ներշնչում ստեղծագործության կենդանի բնթացքը,
քան վերջնական արդյունքը: Չեմ հիշում դեպք, որ նա
հիացած լիներ իր որևէ բեմադրությամբ: Նա բեմադրում
էր Հայտնագործելով ու ջնջելով և կանգ էր առնում որևէ
տարբերակի, բայց իս ոչ լավագույնի վրա: Փորձերի կեն-
դանի բնթացքը և միջամտելու հնարավորությունն ամեն
ինչ էր Աճեմյանի համար: Ընթացքը նպատակ էր, և ինքը
պետք է մշտապես ընթացքի մեջ լիներ:

— Ներկայացման կրկնությունը պատճենահանում չէ,—
ասում էր Աճեմյանը, թատրոնը հակադրելով կինոյին:—
Թատրոնում ստեղծագործական ակտոր տեղի է ունենում
առաջին ու վերջին անգամ:

Նա մի անգամ այսպիսի հարց տվեց.

— Ի՞նչ է արտադրում թատրոնը:

Լուռ մնացինք:

— Թատրոնի ստեղծածի անունն ի՞նչ է: Անունը տվեք:

— Արվեստ, — ասաց մեկը:

— Դե լավ, է՛... արվեստ: Կոնկրետ առարկայի անունը
տվեք:

— Բեմադրություն:

— Դա բնդհանուր խոսք է: Դուք ասեք բեմադրության
նպատակը ո՞րն է, արդյունքը, հետապնդվող արդյունքը...

Երեսում էր, որ մտքում մի բառ ունի և ուզում է այդ
բառը, այդ միակ գոյական անունը լսել մեզանից: Կարծես

Հանելուկ էր առաջարկել, որի պատասխանը յինելու էր մեկ բառ:

— Այ, օրինակ, կոշիկի ֆաբրիկան արտադրում է կոշիկ: Դա նրա արտադրանքի անունն է: Թատրոնի արտադրածն ի՞նչ է:

Ի վերջո ինքը պատասխանեց իր հարցին,

— Մարդ:

Չասաց «կերպար», «տիպ», «բնավորություն», «գործող անձ»: Թատրոնը պետք է տարբերվեր թատերագրությունից, նաև կերպարվեստից, որոնց օբյեկտը նույնպես մարդն է: Աճեմյանի հարցադրման մեջ մի շատ կարևոր երանգ կար, որ հուշեց ինքը մեկ ածական ավելացնելով.

— Կենդանի՝ մարդ:

Նրա խոսքի շարունակությունը, որի ձևակերպումներն ու մանրամասները չեմ հիշում, այն մասին էր, որ թատրոնը սոսկ «սինթետիկ արվեստ» անվանողները շատ քիչ բան են ասում, չեն մոտենում բեմական արվեստի սպեցիֆիկումին՝ այն հատկությանը, որով նա տարբերվում է բոլոր արվեստներից:

— Կինոն նույնպես սինթետիկ արվեստ է, հետո ի՞նչ...

Պարզ է, շարժման պատկերային գրառումը, ինչ արդյունք ու տպավորություն էլ տա, կենդանի մարդ ստեղծել չի կարող, չի կարող հեռանալ շարժայուսանկարից, հետեարար և չի կարող փոխարինել մարդուն: Ես ուզում եմ շարունակել Աճեմյանի հարցադրումը ժամ Լուի Բարոյի խոսքերով. «Թատրոնը մարդկային կենդանի վարքագծի արվեստն է»: Ասելով, ուրեմն, «սինթեզ», տարածական ու ժամանակային, խոսքային ու պատկերային ձևերի համադրություն, ոչինչ չենք ասում, եթե մեզ հայտնի չէ համադրության ամբողջացյալը:

— Թատրոնի արդարացումը, — ասաց Աճեմյանը, — կենդանի մարդն է, որպես նպատակ և արդյունք: Թատրոնը հետաքրքիր և հարուստ է այնքանով, որքանով հետա-

քրրքիր և հարուստ է այդ արդյունքը՝ կենդանի մարդր։
Այս է, ուրիշ ոչինչ։ Վերջ։

Ասաց «վերջ» և շարունակեց.

— Մնացած բոլոր կոմպոնենտները (նա այս բառը գործածեց)՝ բեմ, գեկոր, լույս, երաժշտություն և այլ, և այլ, և այլ… Պարզ է, ծառայում են մեկ նպատակի, ստորադասված են մարդուն։

Աճեմյանը խոսում էր բնդհատուն և արագ, կարճ դադարներով և երբեմն «ր’…» ձգելով։ Բանն ասում էր կարծես իմիջիայլոց, այնպես, որպես թե դիմացինի համար ամեն ինչ շատ պարզ է։ Նա ոչինչ չէր բացատրում երկար ու հանգամանալից, չէր փաստարկում, ապացուցում կամ ուսուցանում, այլ բնդամենը ակնարկում էր։ Նրա ակնարկները դիպուկ էին, անսխալ ուղղված էին նշանակետին։ Պետք էր կռաջել, եթե խոսքը չէր ավարտում։ Նրա հետ չփողը պետք է ունենար իր ներքին կոնտեքստը։ Ուսանողը դա չուներ և չէր կարող ունենալ, ուստի Աճեմյանն ուսանողի համար չէր, այլ իմացության ու փորձի որոշակի պաշար ունեցող մարդու։ Ի՞նչ էի ես կարդացել իմ ուսանողական առաջին տարում։ Մեկ-երկու գյուխ Ստանիսլավսկու «Դերասանի աշխատանքից» և նրա «Արհեստը» մի քանի անգամ, մանրամասն և ուշադիր։ Այս էր իմ կոնտեքստը, մյուս կողմից՝ 50-ական թվականների վարպետների, մասնավորապես Փափազյանի խաղը։ Աճեմյանը տալիս էր միայն Ստանիսլավսկու անունը, թերևս պահպանելու համար ընդունված ուսուցողական դավանանքը (դոգմատիկա)։ Հստ այդ դավանանքի, թատրոնում ռեալիզմից դուրս ոչինչ չէր կարող լինել, և այդ ռեալիզմը ենթադրում էր բացարձակ հավաստիություն, որին ներհակ էին և՛ Աճեմյանը, և՛ նրան շրջապատողները։ Ուսումնական փուլում, իհարկե, բնական է իրականության ճշգրիտ վերաբերության սկզբունքը, և նկարչի, և դերասանի համար։ Դրան էր հետեւում նաև Աճեմյանը։ Նա մեզ հանձ-

նարարեց կարդալ Ստանիսլավսկու «Իմ կյանքը արվեստում» գրքի առաջին գլուխը և հաջորդ օրը հարցրեց՝ ինչի մասին է, և դժողով մնաց.

— Չեք հասկացել: Իմ պահանջն էլ չեք հասկանում: Մի պատմեք գրվածը, բացատրեք իմաստը:

Նա սպասողական հայացքով նայեց իմ կողմը.

— Ի՞նչ կասես:

Ես ցույց տվեցի րնդգծածս տողերը. «Բեմում անիմաստ անգործության հետևանքով առաջացած անհարմարությունը, հավանորեն անգիտակցաբար, դեռ այն ժամանակ ես զգացի, և այն օրվանից մինչև այսօր ես ամենից շատ դրանից եմ վախենում»¹:

— Եզրակացությունդ...

— Անիմաստ անգործությունից ազատվում են իմաստավորված գործելով:

Աձեմյանի ուզած պատասխանը չէր: Նա պահանջում էր մեկնաբանություն և ինքը դիմեց մեկնաբանության, ելակետ ունենալով հեղինակի խոսքերը. «իբրև թե և ոչ թե իսկապես... ինչո՞ւ իբրև թե...»²:

— Ճշմարտության զգացումն ու գաղափարը պետք է ունենալ և իսկապես գործելու ցանկություն, որպեսզի ստացվի «իբրև թե»: Առանց ճշմարտության պահանջի չկա ոչ մի պայմանականություն: Հասկանալի՞ է:

Հասկանալի չէր և այն ժամանակ չէր էլ կարող հասկանալի լինել, որ պայմանականությունը գերասանի սոսկ խոսելակերպի ու գործելակերպի մեջ չի արտահայտվելու, այլև նրան շրջապատող անիրական միջավայրում. ենթադրվող առարկաներ, դեկոր, չորրորդ պատ և այն, այն ամենի մեջ, ինչը ստորադասված էր հիմնականին՝ կենդանի մարդուն: Առարկայական միջավայրի չգոյությունն էր լինելու պայմանականության պայմանը:

Ես սա մտածում եմ այսօր, երկխոսության մեջ մտնելով հիշողությանս հետ:

Խոսքս վերաբերում է իրական ու ենթադրվող հանգամանքների հակասությանը՝ թատրոնի մեծ առեղծվածներից մեկին, որի բացատրությունը չեն տալիս թատրոնի մարդիկ՝ ո՞չ ստեղծագործողները, ո՞չ քննադատները։ Ստեղծագործողները երբեմն զգում են մի բան. եթե գործողության մեջ առարկան աներևույթ է կամ պայմանական, դերակատարի վերաբերմունքը լինելու է իրականին շատ մոտ (Հավատացնելու համար, թե կա առարկան), իսկ եթե առարկան իրական է՝ «իբրև թե»։ Այս երկրորդը շատ նուրբ պահ է և դժվար է հասկացվում։

Այսպես կոչված «աֆեկտիվ» վարժությունները նպատակ ունեն սրելու հիշողությունը, պատկերացումն ու երևակայությունը իրային միջավայրից դուրս։

— Ո՞չ մի խոսք, ո՞չ մի նկարագրություն կամ բացատրություն…

Ասել է, թե վարժության մեջ խոսքի պայմաններ չպիտի լինեին, և խոսքի անհրաժեշտությունը չպիտի ծագեր։

— Ինստինկտ, միայն ինստինկտ։

Ոչ ոք պատրաստ չէր րմբունելու Աճեմյանի պահանջը, և բառն էլ հասկանալի չէր։ Պետք է գտնվեր հակագդման բնագդային կերպը որոշակի հանգամանքներում։ Դատողություն, նկարագրություն պետք չէր, պետք էր պարզ վերաբերմունք՝ ամենադժվար բանը։ Դրա տպավորությունը տալու համար պետք էր պատկերացնել առարկան, զգայքայր, գույնը, ջերմությունը և այլն։

Աճեմյանը մի օրինակ բերեց իր «Արա Գեղեցիկ» բեմադրությունից (Լենինականի թատրոնում)։ Մի տեսարանում դերակատար Գագագյանը խաղող է ուտում, բնդամենը մեկ հատիկ իր առջև դրվող բուտաֆորական ողկույզից՝ «իբրև թե»։ Այդ մեկ հատիկ խաղողը գոյություն չունի, դերասանի հիշողության ու պատկերացման մեջ է միայն, բայց…

— Ինչպես էր նա գգում կլորությունը, սառնությունը, քաղցրությունը և մի բան էլ՝ ատամի տակ ընկնող կորիզը և՝ զարմանք, թե ի՞նչ էր:

Նման օրինակներ կան թատերական գրականության մեջ: Իսկ եթե խաղողն իրական լիներ, ո՞վ կհավատար: Սա արդեն իմ հետագա եղրակացությունն է: Առարկայականությունը և իրականի գգացումը դերասանի մեջ կառաջացնեի՞ն արդյոք գգացմանը ձև տալու, պայմանականացնելու, տեսանելի դարձնելու ցանկությունն: Ինդիրն այն է, թե ե՞րբ է ավելի ակտիվ մարդու խաղային բնագդը իրակա՞ն, թե՞ անիրական հանգամանքներում: Բեմ ձգտող մարդը ներշնչված է յինում ինչ-որ խոսքերով, գալիս է արտասանելու ինչ-որ բան, բայց ահա նրան առաջարկում են անխոս իրավիճակներ՝ տեսնել չեղած բաներ, լսել չեղած ձայներ, շոշափել անտեսանելի առարկաներ:

Արդ, խոսքի՞ց, թե՞ լոռությունից է սկսվում ներկայացումը:

Աճեմյանի համար լոռությունից էր սկսվում:
Խոսքից առաջ եղել է լոռություն, և խոսքը եղել է լոռության մեջ:

— Տեսե՞լ եք երբեք Լևոն Զոհրաբյանին, — ասաց Աճեմյանը: — Նա շատ վատ է լսում: Գրեթե խույ է: Բայց ինչպես է նա լսում բեմում: Նրա պես լսող գերասան չկա:

Ի՞նչ էր դա նշանակում, չբացատրեց Աճեմյանը:

— Պատկերացրեք մի պահ, — ասաց նա, — որ նստած եք համերգային դահլիճում, երաժտություն եք լսում: Որոշ եք որտե՞ղ եք, ի՞նչ եք տեսնում, ի՞նչ եք լսում: Լսեք, լավ լսեք...

Մենք իբրև թե լսում էինք: Նա նայում էր մեր դեմքերին, ուզում էր մի բան կարդալ մեր աչքերում.

— Ի՞նչ եք տեսնում, — ասաց:

Տեսնվելիք բանի մասին ոչ ոք չէր մտածել: Հորինվեցին վերացական, մտացածին պատկերներ, որպես թե երա-

Ժրշտությունից ծնվող ձայնային պեյզաժներ՝ էլ ծով ու փոթորիկ, անտառ, գիշեր ու յուսին և ի՞նչ ասես, բացի այն կոնկրետ առարկայական միջավայրից, որտեղ իրականանում է երաժրշտությունը:

- Ի՞նչ եք տեսնում ձեր դիմաց, ոչինչ չե՞ք տեսնում...
- Գետը հոսում է...
- Ո՞ւմ եք տեսնում, ոչ մեկին չե՞ք տեսնում:
- ...
- Զարմանալի է: Ոչ մեկը դիրիժորին չի տեսնում:
- Ա՛...

– Իսկ ի՞նչ էիք կարծում:

Բաներ էինք հորինում իրերի իրականությունից դուրս, մինչդեռ խնդիրը շատ պարզ էր: Թվում էր, թե պարզ էր: Պետք էր փոխհարաբերություն ստեղծել ենթադրվող առարկայական միջավայրի հետ, տեսնել երևակայվող ակներևությունը.

- ... ձևանում եք, բաներ եք հորինում:

Աչա թե որտեղից է սկսվում անկեղծությունը, ոչ միայն գերասանի, նաև գրողի, նկարչի: Իրականությունը տեսնել անկեղծորեն, միևնույն է՝ երևակայվող, թե իրական, բարդ բան է:

- Մի ստեք, – ասում էր Աճեմյանը:

Հեշտ է ասել...

- Կարողացեք տեսնել, հիշել:

Այսպես կոչված «աֆեկտիվ գործողությունները» կամ էտյուդները երևում են անմիտ ու փուչ բաներ և ամայացնում են մարդու հոգին, եթե ուսուցանվում են միջակ մարդու միջոցով: Էտյուդներով ուսուցանողը պետք է տաղանդավոր մարդ լինի և բնական մարդ, ոչ թե թատրոնական քաղքենի (ինչպես իմ իմացած շատերը), այլապես բեմը դառնում է անապատ, բեմադրողը շատախոս ու դատարկաբան, գերասանը՝ ցամաք առուն ընկած գորտ:

ԱՃԵՄՅԱՆԻՆ ՀԵՏԱԵԼՈՎ ՀԱՍԿԱՑԱ, որ էտյուդ ասվածը պարզ մի վիճակ է աճելու, ծավալվելու ներակայությամբ (պոտենցիալ): Գտնել նման վիճակ կամ իմաստակիր մի պահ, նշանակում է գրել պիեսի առաջին նախադասությունը: Դա շատ դժվար բան է և, ըստ իս, իզուր է այդ բանը պահանջվում անփորձ ուսանողից: ԱՃԵՄՅԱՆՐ, թվում է, գիտեր կամ զգում էր այդ, և ինքն էր հորինում նման պահեր ու թելադրում ուսանողին: Նա հորինում էր զարմանալիորեն հեշտ, բացարձակորեն դատարկ տեղում, զրոյական կետից: Դա մարդկային պարզ բնազդների գործնական ուսումնասիրություն էր, էքսպերիմենտալ հոգեբանության դաս, որի մասին բնավ չէր մտածել ԱՃԵՄՅԱՆՐ, բայց առնչվել էր դրան մոսկովյան թատերական կրթության միջավայրում, եվգենի Վախիթանգովի անմիջական աշակերտի Ռուբեն Սիմոնովի դասարանում: Դա ուսական բեմական դպրոցի մի փոխակերպումն էր իր ելակետային սկզբունքով, այն է խոսքին ու խոսքային նյութին նախորդում է դրությունը, և խոսքն ի հայտ է գալիս որպես դրության ակամա դրսեւորում, որպես գործողության օրգանական, անբաժանելի տարր: Պետք էր լավ հետեւ բեմադրիչ ԱՃԵՄՅԱՆԻ երևակայության խաղերին: Այդ խաղերի ու բառային տարերքի մեջ էր թատրոնի էությունը՝ ոչ մի գրքում չբացատրված: Նա ուսանողական լսարանի փոքրիկ մի տարածության մեջ գործում էր ինչպես անսահմանության մեջ, մեկր մյուսի ետևից հայտնագործում դիրքային նորանոր հնարավորություններ, և ո՞րն էր ամենանպատակահարմարը: Պետք էր լավ հետեւ այս բնթագքին՝ բմբոնելու համար, որ թատրոնն ունի իր ներքին, սոսկ իրենից ծնվող կեցությունը, որ կյանքն այստեղ հորինվում է ինքն իրենից որպես ինքնին նպատակ, որ մարդր բեմում ինքն է հորինելու իր վիճակը և ինքնաստեղծվելու:

— Որտեղ կանգնեմ, էնտեղ՝ թատրոն:

Այս խոսքն ասել է Աճեմյանը մի անարժան «ախոյանի» և իմացել է՝ ինչ է ասում: Նա կրում էր իրենում թատրոնը ոչ որպես գաղափար (ինչպես ես հետագայում), այլ կեցության կերպ և ուր էլ լիներ, կյանքի դրվագները դիտում էր որպես թատրոն: Գրականության մարդ չէր, ոչինչ չէր գրում, և թատրոնն էլ նրա համար գրական տեքստի ինքնուրույն գոյություն, ապրվող իրականության գեղարվեստական շարունակությունը, որ իրականանում էր գրականության օգնությամբ և չէր վերադառնում գրականությանը: «Քառսից» բեմական պարտիտուր գուրս բերելը, որ արեց Աճեմյանը բավական արագ, տվեց կանոնավոր, բայց անհետաքրքիր արդյունք, ներկայացվեց նաև Մոսկվայում, բնդունվեց բարեհաճորեն, որպես 19-րդ դարի արժեք: Հստ իս, կատարելապես ակադեմիական էր Աճեմյանի բեմադրած «Ժայռ», որի շուրջը հիացմունք կար: Քիչ էր խաղացվել «Բալենու այգին», որի մասին Ռուբեն Զարյանն ասում էր՝ «տեսավ նա, ով տեսավ առաջին ներկայացումը»: Պարզվում էր, որ մշակված գրական տեքստը դժվար էր խաղարկվում Աճեմյանի ձեռքի տակ: Հետագա տարիներին տարօրինակ էր թվում Աճեմյանի հակումը դեպի օրվա խնդիրների շուրջ գրված կատակերգությունները, որոնց հեղինակների հույսը Աճեմյանի խաղային հնարագիտությունն էր՝ դրությունից դրություն դուրս բերելու մի հմտություն, որ դժվար էր տեսնել այլ բեմում:

Զուտ խաղային-ստեղծաբանական մտածողությունը նպատակահարմար էր ստուդիական պայմաններում: Դա փորձառական թատրոն էր Աճեմյանի համար, քան ուսուցում: Արտատեքստային վարժությունները նրան երեսն հափշտակում էին, երբեմն ձանձրացնում, և այս դեպքում նա սկսում էր տեքստ հորինել, որ կարծես հակառակ էր ուսուցման պարտադրված եղանակին: Աճեմյանը չէր դիմում ուսանողի ոչ մտքին, ոչ բնազդին: Նա իր երևա-

կայությամբ խաղացնում էր մարդուն ու, մեկ էլ տեսար, վեր կացավ, գնաց: Հաջորդ օրը յավ չէր հիշում ինչ է արել, սկսում էր մի ուրիշ բան, հետո հիշում, վերադառնում նախկինին: Նա իմպուլսային մտածողության մարդ էր, տիպական ներկայացուցիչն այն արվեստի, որտեղ ամեն ինչ տեղի է ունենում առաջին ու վերջին անգամ: Պետք էր չկորցնել պահը, որսալ գտնվածն ու մտնել տարերքի մեջ, չսպասել, հասկանալ, բայց ի՞նչը: Հետագայում եմ հասկացել, որ թատրոնն սկսվում է այդտեղից: Հասկացել եմ հանդիպելով 19-րդ դարի 60-ական թվականների գերասան Սեդրակ Մանդինյանի հետեւյալ խոսքին: «Գործողությունը գործվում է ինքն իրենից, ինչպես ծառն աճում է իր բնից²: Սա նշանակում էր բեմական արվեստի էությունը փնտրել իրենում իսկ, ոչ թե իրենից դուրս:

Աճեմյանի ռեժիսուրայի այս սկզբունքը հետագայում նկատել եմ նրա բեմադրություններում և ուրիշ ոչ մի տեղ: Պիեսի տեքստը նրա համար կողմնորոշիչ էր, բայց ոչ անդրադարձման օբյեկտ: Տեքստն ընթերցվում էր ընդամենը, իսկ գործողության պարտիտուրն ի հայտ էր գալիս ընթացքում, որպես վարքագծերի հարաբերություն: Դերասանին կարող էր թելադրվել մի քայլ, մի կարծես ոչ նշանակալից շարժում, և դա յինքը դրության խորին իմաստը: Այսպես, Վիլյամ Ռարոյանի «Իմ սիրտը յեռներում է» պիեսի բեմադրությունում (1961 թ.) հայ կինը ավելոր ձեռքին մաքրում է մաքուր բակր և ավանսցենի մոտ մի պահ բարձրացնում է ավելը, նայում ավելի ծայրին ու թույլ փչում, նայում օդում սավառնող մոծակին: Ի՞նչ է նշանակում: Բացատրություններ շատ կարող են յինք: Խաղային քայլը տեքստից դուրս է ու բացահայտում է տեքստի ամենախորին շերտը: Կարելի է սիմվոլը բացատրել, հանգել հոգեբանությունն ու փիլիսոփայությունը: Նման պահեր (ոչ միշտ այս խորության) կարելի էր տեսնել Աճեմյանի բեմադրություններում ու ստուդիական

փորձերում: Դրանք շատ անգամ կորչում, մոռացվում էին: Հարցնում ես ի՞նչ եղավ, լսողն ասում է՝ ի՞նչը: Կային տեսնողներ ու փնտրողներ, օրինակ՝ Խորեն Աբրահամյանը որոշ խաղային պահերի³: Ճիշտ էր Յոլակ Ամերիկյանը, որ ասում էր՝ Աճեմյանից սովորելու համար պետք էր պատրաստ լինել: Նման բաներն արվեստում չեն սովորում, այլ նկատում են, զգում, հասկանում սկզբունքը:

Աճեմյանը սովորեցնող չէր ու չէր սովորեցնում, խաղացնում էր: Մարդուն դնում էր տեքստից դուրս մի դրության մեջ, կարծես պատահական, և պատահականությունը հարաբերում էր տեքստին անուղղակիորեն: Սա նշանակում էր խաղալ դրության հետ: Դերասանը ներքաշվում էր խաղային տարերքի մեջ, և բացահայտվում էին նրա հնարավորությունները:

— Խարուսիկ է,— յսեցի մի անգամ թատերագետ Լևոն Խալաթյանի ակնարկը ոտքի վրա, ինստիտուտի միջանցքում:— Աճեմյանը խաղացնում է, իսկ խաղացողը խաբար չէ իրենից. ի՞նչ կարող է անել առանց Աճեմյանի:

Դժվար էր իմանալ Աճեմյանի ձեռքի տակ խաղացողի իրական օժտվածության չափը: Նա ինքնաստեղծվում էր տարերայնորեն, Աճեմյանի ցուցումներով, բայց ինքնաճանաչման գալիք⁴ էր... Իրեն խաղացնողին նա տեսնում ու բմբոնում էր այնքանով, որքանով ձեռնափայտը կարող է տեսնել ու բմբոնել իր տիրողը:

— Աճեմյանին ի՞նչ կա,— ասաց մի անգամ Հայկուհի Գարագաչը, — փայտը կվերցնի ձեռքը, մեկ էլ տեսար փայտից դերասան դուրս եկավ:

Կարլո Հայրիկի և Բուրատինոյի պատմությունն իգուր չէ հորինված:

Աճեմյանին դուր էր եկել տիկին Հայկուհու խոսքը, այնքան էր դուր եկել, որ առիթը գտավ մի օր օգտագործելու ըստ անհրաժեշտության.

— Գերանից դերասան սարքեցի:

Աճեմյանի խոսքը գուցե րստ արժանվուլն չէր, բայց սուր էր ու տեղին: Այս խոսքը թատրոնից դուրս եկավ, բնկավ բերանն այն հանդիսականի, որ անբացատրելի ատելություն ուներ «գերանի» հանդեպ, նրա նեղ ճակատից ու անշարժ զգից այն կողմ ուրիշ բան չէր տեսնում: Աճեմյանը տեսել էր, բայց հետո պարզվել էր, որ արտաքին նշաններն էլ մի բան ասում են մարդու մասին:

Այն կարծիքը, թե Աճեմյանը չունի սիստեմ, համակարգված մտածելակերպ, ստեղծվել էր ուսումնական միջավայրում և գուցե ճիշտ էր Աճեմյանի, որպես ուսուցանողի, հանդեպ: Աճեմյանն ուսուցանող չէր, ստեղծագործող էր, և նրա, որպես ստեղծագործողի, նկարագիրն ամբողջական էր, ինքնին համակարգված: Բնակորության անկազմակերպ գծերն ակնհայտ էին: Դա տեսնում էր ամեն ոք: Իսկ քանի⁹ մարդ էր տեսնում նրա ներքին կենտրոնացումը: Նա ինչ էլ հորիներ, չէր դիմում բեմական արվեստից դուրս, հայտարարողական միջոցների: Նրա երևակայությունը գործում էր դերասանի արվեստի բնությունից տրված սահմանակարգում: ոչ մի առկախ նշան, ոչ մի բերանբաց ակնարկ, ամեն ինչ րստ դրության, դրությունից ելնող, դրությունը զարգացնող, ոչ մի շարժում կամ անցում գործողության տոնայնությունից ու ոփթմից դուրս: Ամեն պահ գործում էր նրա ներքին ոփթմը, և ոփթմի մեջ էր քաշում դերասանին կամ ուսանողին: Հետագայում ես հիշելու էի շատ բան Աճեմյանի փորձերից և այն, որ ոփթմը ձեւային հիմքն է արվեստում, ու այդ հիմքում գործում է պյութագորյան թիվը որպես բնությունից եկող կարգավորիչ ուժ: Դա չեն սովորում ու սովորեցնում, այլ կրում են, և զգացողը թող զգա ու տեսնի, գուցե և մտածի:

Ի՞նչ էր մտածում Աճեմյանը, դժվար էր իմանալ, եթե ինքդ մի բան չգիտեիր: Նա կարող էր մի խոսք ասել, երբեմն մի բառ, և հասկացողը կհասկանար, թե ուր է

խսիում: Նրա ստեղծագործական բնագդը համակարգված էր ներքուստ, և այն, ինչ գործում էր նրա ստեղծագործական ենթագիտակցության մեջ, հակառակ էր իր, որպես թատրոնի գեղարվեստական դեկավարի, վիճակին: Նա կամա, թե ակամա դրված էր այդ վիճակում ու չգիտեր, թե որքանով է ճիշտ իր այդ վիճակը: Մի նշանավոր արվեստագետ, որ հիացում ուներ Աճեմյանի հանդեպ, ասել էր. «Նա իր տաղանդով կքանդի թատրոնը»: Ինչ էր նշանակում այդ խոսքը, հետո եմ հասկացել: Աճեմյանը, ըստ իս, իտալական կոմեդիա դելլ արտեի կապոկոմիկոյի նման էր, ինչպես մի Զիրոլամո Գոզզի, որ երիտասարդ Փափազյանին ասել էր. «ակադեմիադ վերջացրու, արի ինձ մոտ դերասան դարձիր»⁴:

Աճեմյանի համար ի՞նչ էր թատրոնը, կենդանի, փոփոխվող օրգանի՞զմ, թե՞ պետական հիմնարկություն: Աճեմյանը պետական հիմնարկության մարդ չէր: Այս էր նշանակում նրա մասին ասվածը: Իսկ խորհրդային երկրում թատրոնը միայն պետական կարող էր լինել, և այս դեպքում ամենատաղանդավորը պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական դեկավար: Աճեմյանը թերևս ամենատաղանդավորն էր, կուսակցության կենտրոնական կոմիտեն չէր սիսալվում, բայց Աճեմյանն ակադեմիստ չէր: Ակադեմիական բեմադրություն էր նրա «Ժայռը», որ մեծ գովեստների էր արժանանում, բայց միենույն է՝ Աճեմյանն իր բնագործությամբ ու աշխատանքի եղանակով, բայց իս, անտրեպրիզային ուժիսոր էր, ամեն բեմադրության համար առանձին խումբ կազմող, խաղացնող ու ցրող: Այդպիսին էր եղել նախաչեղափոխական թատրոնը հայ իրականության մեջ, իր դերասանական բարձր արժեքներով: Պետական թատրոնը տրվել էր որպես թանկ ձեռքբերում, ծաղկել Լևոն Քալանթարի, Արշակ Բուրջալյանի շնորհիվ և, սկսած 30-ական թվականներից մինչև 1953-ը, գաղափարական հարկադրանքի պայմաններում, թատրոնին

ակադեմիական նկարագիր էր տվել Արմեն Գուլակյանը։ Աճեմյանի համար դժվար չէր այդ պահպանելոր, բայց հետաքրքիր չէր։ Նա ազատ մարդ էր անազատության պայմաններում, հակված փորձարարության, և այդպիսին էր իր նոր հայտ՝ «Փորձադաշտը», որ գովերգվում էր ու քննադատվում։ Պաշտպանվում էր արդիականության գաղափարը։ Աճեմյանը շատ հանգիստ ու թեթև էր բնդունում գովեստն էլ, պարսավանքն էլ։ Ոչ վրդովմունք, ոչ գոհունակություն։ Ժպտում էր ու թագբեհոր ֆռուացնում։

Աճեմյանը չփխտեր այն ժամանակ, և ո՞վ գիտեր, որ Արևմուտքում, ստացիոնար թատրոնների կողքին գործում է անտրեպրիզը։ Դա նշանակում էր խումբ կազմել որևէ բեմադրության նկատառումով և հետո նորր կազմել րստ նոր մտահղացման։ Աճեմյանը (շատերը կարող են չհամաձայնել ինձ հետ) այդ ուեմիսուրայի կրողն էր ենթագիտակցորեն։ Այս միտքը ծագել է իմ մեջ հետագայում, և առիթ չեմ ունեցել հարցնելու իրեն, թե ի՞նչ կասեր։ Նա դեկավարվում էր պահի թելադրանքով և տեսնում էր ակներեն ու երևութականը նաև ակադեմիական արժեքներում։ Այդպես է՝ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնից ստացած ներշնչումով մտավ «Բալենու այգի» ու տպավորություն չթողեց։ Իր տարերքը չէր «Լիր արքան», որտեղ Փափազյանը չկարողացավ իր ուզածի պես լինել և, ինչպես գրեց հետագայում, դժգոհ էր Աճեմյանից⁵, հայտնի չէ՝ ինչո՞ւ։ Հետագայում առիթ եղավ այս մասին ակնարկելու։ Աճեմյանի պատասխանն այս էր.

— Այդ գերը ոչ ոք չի կարողացել խաղալ։ Բոլորն ասում են Սոյոմոն Միխոնելսոր... Տեքստը շատ ծանր է, գործողության երկու պյան և այլ, և այլ...

Իր բեմադրություններում Աճեմյանն ավելի շատ հետամուտ էր ակտուալ վիճակներին, շրջանգո՞ւմ էր, թե՞ չէր ուզում մտածել, որ կան պոտենցիալ վիճակներ՝ հեռանկարային, անտեսանելի, այնկողմնային։ Նրա ըոպեա-

կանությունը հակառակ էր դրան: Մտքում ամեն պահ ներկայացում էր կառուցում, ոչ թե գրական նյութ փնտրում: Շուրջը գեմքեր էր տեսնում, հաճախ անզնում էր թղթին, ու թղթից նայում էին ծանոթ մարդիկ՝ տիպականացված ու անհատականացված: Ճիշտ էր ասում «որտեղ կանգնեմ էնտեղ թատրոն»: Ի՞նչ էր դա նշանակում: Աձեմյանը դիտում էր իր շրջապատր բատ պահի և բատ այն ներկայացման, որ տվյալ պահին պտտվում էր նրա երևակայության մեջ: Նա ուներ իրականության իր տեսանկյունը՝ «բլից»: Գուցե դրանումն էր նրա թատրոնի մարդու հմայքն ու հետաքրքրությունը, բայց ո՛չ ստացիոնար թատրոն դեկավարողի, ո՛չ ապագայի համար դերասան պատրաստողի կամ բնարողի արժանիքը: Եկ քանի որ իր մտահղացումները հեղհեղուկ ու փոփոխական էին, փոփոխելի էր երևում նաև խմբի կազմը ամեն պահ: Ուսանողներից ոչ մեկի դիրքը կայուն չէր, նույնիսկ նրանց, ում հետ Աձեմյանն աշխատում էր երկար ու հանգամանալից: Այսպես, խմբի առաջնուհին, որ թվում էր, թե վաղը, մյուս օրը դառնալու է մի երկրորդ Մետաքսյա Սիմոնյան ազգային դրամայի հերոսուհու տիպար, իր այդ դիրքը պահպանեց մինչև ինստիտուտն ավարտելը: Աձեմյանը նրան տարավ թատրոն ու մոռացակ ինչու էր տարել: Նա մի օր մեկի հետ էր աշխատում, մյուս օրն ուրիշի հետ, մեկի հետ լուրջ և ուշադիր, մյուսի հետ՝ իմիջիայլոց, ոմանց հետ բնավ: Ես այդ երրորդ խմբի մեջ էի, և իմ վիճակն ինձ անհանգստացնում էր: Հիշեցրի մի անգամ, չլսելու տվեց: Ուներ այդպիսի սովորություն՝ չլսել, այն խոսքը, որի պատասխանը չուներ: Ոմանց համար դա վարակիչ եղավ. բնդօրինակեցին տաղանդավոր մարդու արատը: Ես դարձյալ հիշեցրի Աձեմյանին, ասաց.

— Գնա մտածիր:

Ասացի՝ մտածել եմ, և իմ մտածածն ուրիշի հետ է փորձում: Ծիծաղեց.

— Գործ չունես:

Ես նստած էի լսարանում սոսկ որպես հանդիսական, հաճախ իր կողքին: Զէ՞ր նկատում: Շատ լավ էլ նկատում էր: Երբ իրեն մի բան դուր էր գալիս կամ դուր չէր գալիս, նայում էր երեսիս, կարծիքս էր հարցնում՝ «ի՞նչ կասես», և ժպտում էր: Նա ինձ միշտ բարեռում էր ժպտաղեմ, որտեղ էլ լիներ՝ ինստիտուտի միջանցքում, դրսում կամ թատրոնում: Նրա հետ շփվելը հեշտ էր, ոչ մի պատճեց չէիր զգում: Բարեկամս էր, երբեմն հարցնում էր հորս որպիտությունը՝ «բարեիր հայրիկիդ», բայց ես, որպես դերասանական կուրսի ուսանող, նրա համար գոյություն չունեի: Կիսամյակն ավարտվում էր, ինչո՞վ էի ներկայանալու ստուգարքի:

Մի երեկո, երբ Աճեմյանը դասր կիսատ էր թողել և շտապում էր թատրոն, դուրս եկա իր հետ.

— Վարդան Նիկիտիչ, փորձեք, էլի՛... ինչո՞ւ ինձ հետ չեք փորձում:

Հասել էինք Մոսկովյան փողոցի խաղալիքների խանութի (ներկայումս Երվանդ Քոչարի թանգարանի) անկյունին: Ես համառում էի, ջանում էի մի բան համոզել, չէր ուզում լսել.

— Ինչո՞ւ:

— Դուրս եմ մնում:

— Ինչի՞դ է պետք, ի՞նչ ես անում:

— Պետք է:

Խոսքիս վրա դիմացից սուրաց տրոլեյբուսը, և Աճեմյանը չկար: Տրոլեյբուսն անցել էր, տեսա Աճեմյանի թիկունքը դիմացի մայթին: Գնացի, հասա...

Բաղրամյան պողոտա թեքվող տրամվայի գծերի մեջտեղում կանգնած էր մի մարդ, լայնեզր գլխարկով, գլուխը վեր, հսկայի նման: Մութ էր, կանգնած էր թիկունքով, դեմքը չէր երեռում: Նրա կողքին կանգնած էին երկու երիտասարդ: Նրանցից մեկը բռնել էր լայնեզր

գլխարկով մարդու թեր: Աճեմյանը կանգնել և այդ կողմն էր նայում.

— Նայիր, — ասազ:

— Թող, զավակս, ради бога,— լսեցի Հրաչյա Ներսիսյանի տաք ձայնը:

Խմած էր, կանգնել էր տրամվայի գծերի մեջտեղում։
Երիտասարդ ուղեկիցը բռնել էր թեր։

— Пашли, дети мои,— сказала Небесная ягненок на плече Егорки оправдываясь, — я не хотела, я не хотела...

Աճեմյանը կանգնած նայում էր:

— Դո՞ւ էլ այն կարծիքին ես, — ասաց Հայազքը չկտրելով հեռացող Ներսիսյանից, — դու է՞լ կարծում ես, որ Հրաչյան չկարողացավ Լիր արքա խաղալ: Ինչո՞վ Լիր չէ: Լիրն ուրիշ ինչպե՞ս է լինում:

Աճեմյանը բեմական տեսարան էր գտել Լիր արքայի համար: Իմ թեման չշարունակվեց: Բաժանվեցի Աճեմյանից իմ մտահոգությունը մոռագած և առավոտյան հիշեցի իր «ինչի՞դ է պետք» խոսքը: Ինձ մնում էր որոշել իմ դիրքն Աճեմյանի հանդեպ, ասել է՝ թատրոնի հանդեպ, կյանքի հանդեպ, կոչման ու նպատակի: Կարծում էի՝ թատրոնի բեմում է սկսվում կյանքը և այնտեղ էլ ափարտվում է:

Եկավ ստուգարքի օրը՝ 1954 թվի դեկտեմբերի 30-րդ Կիսատ, անմշակ, անիմաստ մի տեսարանով, անօգնական ու շփոթված, ինքս իմ աչքից ընկած, որպես անկոչ ու պատահական մեկը, ներկայացա պատկառելի հանձնաժողովին: Ինչե՞ր չի կարող անել ուժիսուրան մարդուս հետ: Աճեմյանի ուժիսուրան ինձ դրել էր հիմար վիճակում: Մտածում էի, որ պետք էր թողնել, հեռանալ, բայց ինչո՞ւ ես, եթե ոչ ուրիշները՝ գաղափարից ու ներշնչանքից հեռու մարդիկ, որ, ինչպես ապագան ցույց տվեց, չծաղկեցրին հայոց թատրոնի պարտեզը:

Ստուգարքն ավարտվել էր: Կանգնել, սպասում էինք միջանցքում, ոեկտորի առանձնասենյակի դռանը: Ես ինձ արդեն դուրս էի համարում: Դուրս եկավ Աճեմյանը գրգռված, շփոթված ու գունատ:

— Ինչո՞ւ եք կանգնել, ըլ՝... գնացեք,— ասաց դողացող ձայնով ու գնաց:

Մեզ ներս հրավիրեցին, հայտնեցին արդյունքները: Դուրս էինք մնում վեց հոգի, տղաներից միայն ես, և հինգ աղջիկների շարքում ամենաշնորհալին՝ Գալյա Նովենցը: Հնտրյալների մեջ ես տեսնում էի մեկ դերասան՝ Արմեն Ջիգարխանյանին:

Շատ մարդ չիմացավ գլխիս եկածը: Իմացողը մի խոսք էր ասում Աճեմյանի դեմ, որ ինձ դուր չէր գալիս: Մեկն ասում էր՝ ծանոթ մեջ գցիր: Ի՞նչ ծանոթ, ծանոթը ես էի, ինձնից էլ յավ ծանո՞թ: Իմ վիճակն անրմբոնելի էր առօրյա չափանիշներով: Իմ վիրավորանքն ու դառնությունը չէր փոխվում հակակրանքի թատրոնի մարդու հանդեպ: Եթե նրան ատեի, թատրոնն էի ատելու: Դառնացած էի, որ թատրոնի մարդն ինձ չի հասկացել, և հույս ունեի, որ հասկանալու է:

Աճեմյանի ստուգարքից հետո ես իրավունք չունեի մասնակցելու կիսամյակի քննություններին, բայց չհարցրի օրենք ու իրավունք: Ոչ ստուգման գրքույկ ունեի, ոչ էլ անունս կար ցուցակում, բայց ինքնագլուխ մտա, հանձնեցի առաջին քննությունը՝ արևմտաեվրոպական թատրոնի պատմություն, անտիկ շրջան՝ «գերագանց», նույն հաջողությամբ մյուսները, և մինչ կպարզվեր իմ ուսանող չլինելու, ես արդեն գերազանցիկ էի: Իմ օրինակին հետեցին որակազրկվածներից մի քանիսը տարբեր գնահատականներով: Ուսումնական մասում ցուցակները կարգի բերեցին, մենք այնտեղ չկայինք: Հանդիպեցի Խորեն Արշակամյանին:

— Դժբախտություն չի, — ասաց, — բայց Գալյա՞ն... Զարմանում եմ, չեմ հասկանում:

Երեկոյան Գալյան զանգահարեց ինձ.

— Ի՞նչ ենք անելու:

— Ոչինչ, — ասացի, — գնալու ենք դասի:

— Ես էլ գա՞մ:

— Իշարկե, անպայման:

Ինստիտուտի ղեկավարությունն արգելք չեղավ: Կարող էր, եթե օրենքին նայեր: Բարոյականությունը թույլ չտվեց քննությունները գերազանց հանձնողին դուրս անել: Իմ գերազանցս օգնել էր մյուսներին, որոնց մեջ, ես համոզված էի, օժտվածը Գալյան էր: Մենք մնացինք, մնացին նաև մյուսները: Երկրորդ կիսամյակում Աճեմյանը լսարան մտավ:

— Բոլորդ էյի էստեղ եք, հա՞...

Նրա վերաբերմունքը չփոխվեց, բայց ի՞նչ արած: Շարունակեց փորձերը նույն եղանակով, տարեվերջին մեկերկու տեսարան հորինեց, ինձ և մյուսներին ներկայացրեց քննության: Մեր տեսարանները մի բան չէին: Գալյան պասսիվ էր, կարծես ոչինչ չխոստացող: Ես հարմար չէի զգում ինձ, ներսումս դատարկություն էր: Քննությանը, ի զարմանայ մերում, ներկա էր Գուլակյանը:

Մինչ այդ մենք նրան տեսնում էինք բակում, նստարանին նստած, մենակ, անտանելի մուալլ, դիվական մոալյություն ուսքից գրուխ, ու նրան տեսնելիս լռում էինք կամ շատ ցածր էինք խոսում: Մտածում էի՝ լավ է, որ գործ չունենք այդ մարդու հետ: Բայց պարզվեց, որ նա լրջորեն հետաքրքրվում է մեզանով: Ուսումնական մասից Գուլակյանի ձայնն րնկավ ականջս.

— Վարդանն ում չի հավանում, ուղարկեք ինձ մոտ:

Գնահատականս էր «լավ»: Ինչպես պարզվեց, դա Աճեմյանի գնահատականը չէր, այլ Գուլակյանի: Նա

Ճևական գնահատականներ էր նշանակել, որպեսզի հավաքի իր խումբը, ի՞նչ սկզբունքով, հետո էի իմանալու:

Ուսումնական մասում ինձ ասացին՝ «Գուլակյանը քեզ նշանակել է կուրսի ավագ», և առջևս դրեցին «մերժվածներիս» ցուցակը. Հինգ աղջիկ, ես և երկրորդ կուրսում մնացած երկու տղա: Ասացին, որ Գուլակյանն ընդունելու է ևս երեքին: Դա յինելու էր սեպտեմբերի սկզբին: Այդպես էլ եղավ: Երեք տարին անցնելու էր Գուլակյանի ղեկավարությամբ: Ես մնում էի հակված Աճեմյանի կողմը: Մի անգամ ինձ հարցրեց, թե ինչպես եմ, ինչո՞վ եմ զբաղված, հիշեցրեց թատերագիտության մասին:

— Մտածիր: Ես գիտեմ ինչ եմ ասում:

Ի՞նչ չափանիշով էր մոտենում Աճեմյանը դերասանական անձին: Մտածել եմ նաև հետագայում, ի մի բերելով տարբեր ժամանակ նրանից լսած խոսքերը: Եթե խոսքը լուրջ արգեստին էր վերաբերում, նա մաքսիմալիստ էր, ուներ նուրբ, կայուն և ստույգ չափանիշներ: Նրա համար լուրջ ու խորն էր այն, ինչ պատկանում էր իր և նախորդ սերնդին, կամ այն, ինչ անցյալ էր դառնում: Այստեղ էր, որ իսկապես խիստ էր, և հետո գրուցելիս հասկանում էիր՝ ինչ ասել է թատրոն և դերասան:

Երկար չեմ գրուցել հետո ուսանող ժամանակ, ինքն էլ երկար գրուցի մարդ չէր, բայց նրա ոչ մի խոսքը, ոչ մի հարեանցի ակնարկը պատահական չէր, եթե անգամ կիսատ էր կամ չձևակերպված, մտածել էր տալիս:

Մի անգամ երեկոյան քայլում էինք ու գրուցում Աճեմյանի հետ ներկայիս կոնսերվատորիայի դիմացի այգում (կոնսերվատորիայի չենքը դեռ չկար): Ուսանողներից մեկը՝ թիֆիսեցի, հիացած խոսում էր մեզ անծանոթ մի դերասանի՝ Բաբկեն Ներսիսյանի մասին և այն է՝ դնում էր Փափազյանի կողքին:

— Երբեք՝ ո՛չ մի դեպքում, — ասաց Աճեմյանը, — ո՛չ մի կապ, ո՛չ մի ընդհանուր բան...

— Ինչո՞ւ, — համառում էր թիֆլիսեցին:

Աճեմյանը խուսափում էր պատասխանից, բայց պատասխանեց.

— Արտաքին տպավորությամբ մի շփոթվեք: Որոշ մաներաներ, ֆասոններ... Դրանք ոչինչ չեն նշանակում: Եվ առհասարակ խուսափեք նման համեմատություններից:

Դարձյալ մի հիացական խոսք ասաց թիֆլիսեցին, և Աճեմյանը տվեց իր անսպասելի, մեզ համար անհասկանալի վճիռը.

— Նա չի մտնի հայ թատրոնի պատմության մեջ:

Ես չհասկացա, թե ինչ էր նշանակում այս խոսքը: Ոչ մեկը չհասկացավ:

— Ինչո՞ւ, — հարցրեց թիֆլիսեցին. — Թիֆլիսում է դրա՞ համար...

Աճեմյանը տվեց ավելի անհասկանալի պատասխան.

— Նրա գիծը զբաղված է իրենից առաջ:

— Ի՞նչ նշանակություն ունի, — շարունակեց թիֆլիսեցին և էլի բաներ ասաց, վկա բերեց երիտասարդությունը, ասաց՝ ապագան ցույց կտա:

— Նա ավարտված դերասան է, — ասաց Աճեմյանը: — Երիտասարդությունը ոչինչ չի նշանակում: Ուշացած է. Ֆրանց Մոռը, էդպես բաներ և այլ, և այլ...

Աճեմյանն, ինչպես միշտ, կիսատ թողեց խոսքը. միտքը պարզ էր իր համար: Ես չպատկերացրի անծանոթ դերասանի նկարագիրը, բայց քանի որ համեմատականը Փափագյանն էր, հիշողությանս մեջ մնացին Աճեմյանի խոսքերը և սպասումն անծանոթ, ուշացած արտիստի: Այդ գրույքում մի անուն էլ հոլովվեց՝ Լուսինյան: Աճեմյանը կարծես չյսելու տվեց: Ուրիշ անգամ էլ տրվեց այս անունը, Աճեմյանը ոչինչ չասաց: Երկու տարի անց Բարկեն Ներսիսյանը Սունդուկյանի թատրոնի բեմում տվեց իր փառավոր դեբյուտը. Մառլիսիոն՝ «Ծառերը կանգնած են մահանում» խսպանական պիեսում:

— ԱՇ, դերասան եմ ասել, — ասաց Արմեն Զիգարիսանցանը:

— Փափազյան կա՞,— հարցրեցի:

— ԶԵ՛, բայց... հա՛, համարյա թե, էնքան էլ հեռու չի...

Այս խոսքերը և Աճեմյանից երկու տարի առաջ լսածս մտքումս՝ գնացի, տեսա և... հա՛ էլի, համարյա թե... բայց մի բան այն չէր, ի՞նչ էր, չի գտնում ձևակերպումը: Փափազյանի անունը խանգարում էր: Հույժ տպավորիչ էր և այս էր ու այս, ինչ ուներ-չուներ, այդպես էլ գնաց: Խաղաց մի դեր ևս՝ Գևորգ «Նույն հարկի տակ» պիեսում, Միքայել «Քառսում», կրկնվող մաներայնությամբ, որ միայն տոնով էր տարբերվում պոլսեցիների ասած «Քֆեկտներու դպրոցից»: Այս արտաքին տպավորության տակ Ռուբեն Զարյանն շտապեց և տվեց իր հապճեպ, էմոցիոնայ գնահատականը.

— Նա փոխարինելու է Վաղարշյանին, Ներսիսյանին, գուցե և Փափազյանին: Իգուր չէ, որ նրա ազգանունը Ներսիսյան է:

Վաղարշյանը վրդովվեց, երբ լսեց այդ մասին: Հաջորդ օրը ինստիտուտի պրոֆեսորական սենյակից լսում էինք նրանց վեճը: Զարյանը խոսում էր ցածր, հետո ձայնը բարձրացավ, Վաղարշյանը, որ բարձր է խոսում, անցավ պաթետիկ տոնի:

— Նա բնդօրինակո՞ւմ է, ում ուզում է թող փոխարինի... Նա կարող է փոխարինել Ներսիսյանին, գուցե և Փափազյանին, բայց Վաղարշյանին փոխարինել չի կարող...

Եվ այսպես, վեճի առարկա արտիստը տարիներ շարունակ կրկնելու էր իր դեկորատիվ խաղը մինչև հեռուստատեսային Սայաթ-Նովա, և հասկանալու էի Աճեմյանի խոսքերի իմաստը. «Թրանց Մոռը, էդպես բաներ...»: Իսկ երբ թիֆլիսում տեսա Լուսինյանի Օթելլոն փափազյանական կեցվածքով ու կեղծված ձայնով, պարզ դարձավ

ինձ համար Աճեմյանի խուսափողական լոռվթյունը։ Հասկացա, որ բնդօրինակողը վերջնում է մեկ-երկու հատկանիշ, առավելապես բնդօրինակման աղբյուրի թերությունը և վարկարեկում աղբյուրը։ Հետագայում առիթներ եղան նկատելու, որ Աճեմյանը չէր սիրում խոսքի նյութ դարձնել չհավանած բանը։ Թվում էր՝ նա ամաչում է դրանից։ Գույակյանն էլ երկար չէր խոսում, կարճ էր բնութագրում կեղծիքը և մեկ-երկու բառով անխնա ծաղրում էր, կծու որակումներ էր տալիս թիֆլիսյան քաղաքային Փոլկորի ոճով. «արեի տակ հավի ծերտն էլ աբասի կերևա», կամ «զատկի ձվի կճեպը զատկի ձվի տեղ ծախող»։ Աճեմյանի սրտնեղեն ու ամաչելոր հետագայում ավելի յավ հասկացա։ Կեղծիքն իսկապես ամաչեցնող է, երբ հրապարակային է, ու ներկա ես որպես հանդիսական։ Թվում է ինքդ ես կեղծում քո անպատեհ ներկայությամբ, երբ քեզանից ակնկալում են ժպիտ ու ծափահարություն։ Մտածել եմ, որ թատրոնը սիրողը պետք է չտեսնի կեղծիքը կամ կարողանա դիմանալ նրա ներկայությանը, իմանալով, որ դա բեմում չափվում է տոննաներով, իսկ ճշմարտությունը գրամներով, և այդ գրամներն ստանալու համար է պահվում կեղծիքի որջն այդքան հանդիսավոր։

Չորս տարվա բնթացքում պարզելու էի, որ թատրոնի գաղափարն եմ սիրում, ոչ թե իրականությունը։ Ճիշտ էր Աճեմյանը, որ ինձ մղում էր թատերագիտության, և ի՞նչ իմանայի, որ դա իմ ճակատագիրն է։ Ես չի ճիշտ էի, որ մղվում էի բեմ, գաղափարից առաջ շոշափում իրականությունը։ Ժամանակ էր պետք ըմբռնելու համար, որ թատրոնի պատմությամբ ու տեսությամբ զբաղվելոր նրա գաղափարի պաշտպանությունն ու գտումն է։

Աճեմյանի հետ շատ էի հանդիպելու և զրուցելու։ Նա, բատ նախկին սովորության, դիմում էր ինձ ազգանունով, բարեներ ուղարկում հայրիկիս և ասում ինչո՞ւ եմ զբաղ-

վում պատմությամբ, ոչ թե քննադատությամբ։ Եվ մի անգամ էլ հանդիպեցի թատրոնում այդ առիթով։

Խոսում էինք «Պեպոյի» իր բեմադրության (1966 թ.) մասին։ Նա յուռ, զարմանալի ուշադրությամբ յսում էր ինձ։ Սպասում էի առարկության, բայց ոչ մի խոսքիս չառարկեց։ Նման բանի չէի հանդիպել ու հետագայում էլ չհանդիպեցի։ Մինչև օրս ոչ մի ռեժիսոր չի լսել ինձ այդպես՝ շփոթեցնելու աստիճան ուշադիր։ Ես երկու առարկություն ունեի։ Առաջինը վերաբերում էր Բարկեն Ներսիսյանի Պեպոյին՝ էթնոգրաֆիական պճնանքով, վստահ ու անկիրք։ Աճեմյանը լսեց ժպիտով և ինձ ծանոթ ամոթխածությամբ, կարծես ինքն էր խաղացողը։ Ասացի, որ ինձ տրամադրում է Խորեն Արրահամյանի Պեպոն՝ պարզ ու անհավակնոտ, հոգսի տակ ընկած բնական մարդ։

— Զմշկյանի գիծն է, — ասաց Աճեմյանը։

— Գուցե, — ասացի։ Ավանդականը միայն ոճին չի վերաբերում, գուցե ավելի շատ ներքին իմաստին։ Խորենի Պեպոն իր ներքին ընկնածությամբ, ու սրտնեղությամբ գուցե մոտ է Զմշկյանին։

— Ես նկատի ունեմ Դեմիրճյանի գրածը։ Իսկ եթե ավանդությանը նայենք...

— Արտաքուստ ավելի ավանդական է Ներսիսյանի Պեպոն, — ասացի։

— Տեսել է Խաչակ Ալիխանյանին, նրանից է գալիս։ Այստեղ ես հիշեցրի նրա տասներկու տարի առաջ ասած խոսքը. «Նրա գիծը զբաղեցված է իրենից առաջ»։ Զհիշեց, զարմացավ ու զվարթացավ։

— Ես էդպես բա՞ն եմ ասել, հա՞, ե՞րբ եմ ասել։

— Վաղուց, — ասացի, — 1954 թվին, երբ Բարկեն Ներսիսյանը գեռ թիֆի խոռում էր։

Աճեմյանը ծիծաղեց։

— Զէ՛, դու վտանգավոր մարդ ես եղել, չենք իմացել։ Բաներ ես հիշում, որ ի՞նչ իմանամ...

-
- Զարժե՞՞:
- Ո՞նց թե գիծը բռնված է: Ի՞նչ գիծ, ի՞նչ բան...
Ուրեմն, քո ասելով, Ալիխանյանը...
- Դա իմ խոսքը չէ:
- Դու ես հիշում: Ուրեմն, նա պիտի Թիֆլիսում էլ
մնա՞ր, եթե գիծը... Ի՞նչ ասացիր, զբաղեցվա՞ծ... Ո՞ր
գիծը...
- Ալիխանյանը Երևանում Պեպոյով սկսեց: Ինչո՞ւ
Երևանում չմնաց:
- Դժվար հարց է: Բայց ես համաձայն եմ: Բարկենի
Պեպոն իմ պատկերացրածը չի: Խորենն էլ, եթե կուզես
իմանալ, իմ պատկերացրածը չի: Զմշկյանի գիծը... Ես
մոտավոր բան եմ ասում: Ո՞վ է տեսել Զմշկյանին: Դե-
միրճյանի գրածով գիտենք:
- Իմ մյուս առարկությունը վերաբերում էր առաջին տե-
սարանին: Շուշանը բակում է, Կեկելը կտուրին: Գյուղա-
կան տեսարան է թիֆլիսյան համայնապատկերի ֆոնի
վրա: Սունդուկյանի նախատեսած իրավիճակները հիմնա-
կանում սենյակային են, ինչպես XIX դարի ամբողջ դրա-
մատուրգիայում, եթե նկատի չառնենք դարի առաջին
կեսի արկածային մելոդրամաները: Համենայն դեպս, «Պե-
պոյի» բոլոր տեսարանները սենյակային են: Այս ասելով,
ես նկատի ունեի անձանց խոսքը, բայց Աճեմյանն ընդ-
հատեց ինձ, ակամա մղելով մտքիս շարունակությանը.
- Քո կարծիքով, ինչպե՞ս է որոշվելու միզանացենը,
ըստ Հեղինակի ռեմարկների՞: Ոեժիսորն իրավունք չունի՞
խախտելու Հեղինակի փակագծում ասված խոսքերը:
- Կարող է,— ասացի:— Ռեմարկիր դրամատուրգիա չէ:
Միզանացենը ռեմարկներով չի որոշվում, անկախ նրանից,
դրանք պահպում են, թե ոչ: Միզանացենը որոշվում է գոր-
ծող անձանց խոսքի բովանդակությամբ ու տոնայնու-
թյամբ:

— Մի օրինակ բեր,— ասաց Աճեմյանը, — տեսնեմ ո՞ր տոնը նկատի ունես:

— «Ով գիդի, ջուրը մինձացավ, ո՞վ գիդի, իմքնի եղնեն ննդավ ու ինքն էլ հիդր գնաց...»:

Աճեմյանը լսեց ու մտածկու նայեց ինձ.

— Որտե՞ղ է երևում միզանսցենը:

— Խոսքի ուղիղ իմաստի ու տոնայնության մեջ,— ասացի:— Սա որդու կյանքի վրա դողացող մոր տագնապի արտահայտությունն է: Մայրը կարո՞ղ է այս խոսքը բարձր արտասանել՝ բակից կտուր կանչելով: Սա, ըստ իս, շշուկով ասվելիք խոսք է, սենյակի լոռության մեջ...

Սպասում էի Աճեմյանի պատասխանին: Ուշադիր նայում էր ինձ. սպասում էր, որ էլի բան ասեմ: Ես ասելու բան չունեի, այսինքն առարկություն չունեի այլևս:

— Դու որտե՞ղ էիր մինչև Հիմա, — Հարցրեց. — Թատրոնից հեռու ես պահում քեզ: Ինչո՞ւ:

Ասացի, որ քննադատը պետք է հանդիսատեսի մուտքից մտնի թատրոն, տոմսի համար վճարելով, ոչ թե դերասանական մուտքից, բեմադրողի հրավերով, որպեսզի ճիշտ տեսնի ներկայացումը, չկորցնի անաչառությունը: Ասացի նաև, որ մեր այս գրույցը սխալ է՝ կանխում է գրելիքը. ինչ որ ասվեց, ասված է, չի կարող գրվել, ուրեմն իմ առարկությունները թատերախոսականում չեն լինելու.

— Ո՛չ մի կաշկանդում, — ասաց Աճեմյանը: — Ինչ մտածում ես, գրիր:

— Բայց այն, ինչ չեմ ասել, — պատասխանեցի:

— Ուրեմն, եթե կարծիքդ ըը՛... դրական է, մտքումդ պահիր:

Մեր գրույցն ընդհատվեց Նաիրի Զարյանի մարտական մուտքով: Նա եկավ հուզված և հուզումը գսպած: Բարեեց, նստեց, իր ասելիքն ասաց հանդիստ ու դանդաղ.

— «Արա Գեղեցիկը» տանում եք Բեյրութ: Իսկ եթե Հանդիսատեսր ցանկություն ունենա տեսնելու հեղինակին, ի՞նչ եք պատասխանելու:

Աճեմյանը պատասխանը գտավ տեղնուտեղը..

— Հանդիսատեսր կարող է ցանկություն ունենալ տեսնելու նաև Վիլյամ Սարոյանին:

— Սարոյանի հանգամանքն...

Առանձնասենյակ մտավ Գուրգեն Ջանիբեկյանի գանգվածը, և Ջարյանի տոնն րնկավ.

— ...ուրիշ:

— Եղ ո՞վ ա ուրիշ, — խոսքին անտեղյակ միջամտեց Ջանիբեկյանը:

— Նախրի Ջարյանը, — ասաց Աճեմյանը:

— Ընչի՞... հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց գանգվածը տարածուն ու թափշածայն:

— Եղավես: Մերձավոր Արևելքի հայությունը պահանջում է, որ նա ներկայանա անհապաղ:

— Ո՞վ է վճռում այդ հարցը, — ջանում էր պահպանել իր գուսապ տոնը Ջարյանը:

— Գուրգենը, — ասաց Աճեմյանը կեղծ բանսարկուի ժպիտով, կարծես սպասելով, որ մարդը բացվի:

Աճեմյանն աչքիս առաջ դրամատուրգիական իրադրություն էր ստեղծում: Ինձ թվաց, որ ահա երկու հզոր գանգված բախվելու են: Ես տեղիցս ելա. ուզում էի գնալ:

— Դու մի գնա, — ասաց Աճեմյանը, — սպասիր, խոսելու բան կա:

Թվում էր, թե այս է՝ երկրաշարժ է լինելու: Բայց Ջանիբեկյանն իսկույն կռահեց կատակը: Ջարյանը ձևանում էր անվրդով, խոսում էր անհամարձակ, կարծես ամաչում էր իր պահանջից: Վիճակը չսրվեց: Ջանիբեկյանն ու Ջարյանը խաղաղ գրուցելով դուրս եկան: Աճեմյանն սպասողական ժպիտով հետևեց նրանց դուրս գալուն և՝

— Տեսա՞ր... Ուզում էի կովացնել, տեսարան սարքել,
չեղավ:

Աճեմյանն աչքերը յայն բացած նայում էր կիսաբաց
դռանը, որտեղից դուրս էին եկել Զարյանն ու Զանիբեկ-
յանը: Կարծես սպասում էր, որ վերադառնան Բեյրութ
գնալու հարցով: Նայեց, նայեց, տեսավ տեսարանը շարու-
նակություն չունի, ու դարձավ ինձ.

— Դու կույր գերասան տեսած կա՞ս:
— Ինչպե՞ս: Իրեն կողքից չտեսնո՞ղ, կույր սեփական
Հնարավորությունների հանդե՞պ:

— Ոչ, ոչ, կույր:
— Կո՞ւյր:
— Ասում եմ կույր, հասկացիր կույր, իսկապես կույր:
— Հնարավո՞ր է:
— Քիչ առաջ էստեղ էր, գնաց:
— ...

— Զանիբեկյանը: Դու նրա աչքը տեսած կա՞ս: Աչք
չունի: Աչք չկա նրա խաղում. աչքերով չի շփում պարտ-
նյորի հետ, կարծես չի տեսնում: Նրա ռեակցիան ձայնա-
լին է, տոնոր յավ է պահում, երբեմն չի էլ շրջվում, բայց
տոնը պահում է:

Հիշեցի Զանիբեկյանի երկու մատիտանկար պատկեր-
ները Աճեմյանի ձեռքով արված, մեկը դիմակայաց, մյուսը՝
կիսադեմ, երկու տեղում էլ աչք չկա, աչքերի տեղում
թուղթն սպիտակ է. ոչ մի կետ, ոչ մի դիմ: Մարդը սկե-
ռուն նայում է առաջ առանց աչքերի, հոնքերով ու ծնո-
տով, աչքի կարիք չի զգացվում: Այդպես էր և Զանիբեկ-
յանի խաղը, հատկապես վերջին շրջանում: Նրա վերջին
գյուխգործոցները՝ Վարրավինը («Դատական գործ») և Սո-
լոմոնը («Գինը») կույր էին իրենց շրջապատի հանդեպ:
Խաղակցին նայելիս շրջվում էր ամբողջ զանգվածը: Դա
տալիս էր ուժի և կենտրոնացման տպավորություն:

Աճեմյանի դիտողականությունը սուր էր և յուրահատուկ: Նա տեսնում էր տիպաժր և գերասանական ֆակտուրան, ինչպես ոչ ոք: Տեսնում էր ձեւախախտումները «պակասությունները»՝ որպես առանձնահատկություն, նկատում էր իմաստ թելադրող ձեւերը և կանգ էր առնում մեկ-երկու տիպական գծերի վրա: Դերասանին նա տեսնում էր նկարչի և ոչ միշտ հոգեբանի հայացքով:

Մի անգամ խոսք եղավ Վաղարշյանի մասին, Աճեմյանը տվեց նրա արտաքին բնութագիրը.

Աչքերը խորն էին, քայլը սահուն, դեմքը անշարժ: Խորեն Աբրահամյանի մասին.

— Որ ճակատ չունի, ոչինչ: Դա չի նրա թերությունը: Նրա ներքին պյաստիկան ճնշված է մարմնի մասսայի մեջ: Անսխալ գգում է սիտուացիան և նեղարտում է, գոռում: Նա շփման ուրիշ ձև չունի...

Մշեր Մկրտչյանի մասին.

— Կմախք չունի, մարմինը ցած է թափվում վերարկուի նման, աչքերը՝ անօգնական... ա՛յ, այսպե՞ս,— ասաց ու թևերը ցած թողեց, քիթր կախ, աչքերը վեր, ասես՝ մարդն րնկնում է, առաստաղից կառչելու տեղ է փնտրում, այ... (Նա նայեց վեր ճիշտ ֆրունզի նման): Իր տեսակի մեջ ինքնուրույն է, ինքն է, բայց Սիրանո դր Բերժերակ է ուզում խաղալ:

Իմ հիշեցմանը, թե կարելի է բեմադրել Ռոստանի այդ պիեսը, Աճեմյանը չպատասխանեց: Հիշեցրի, որ Ֆրունզը մոլիերիստ է, կարելի է Մոլիեր բեմադրել, օրինակ «Դոն Ժուան», Խորենի հետ, Ֆրունզը Սպանարել: Աճեմյանը միայն յսում էր: Չիմացա՝ ինչ է մտածում:

«Սիրանո դր Բերժերակը» ծրագրվեց, Հրավիրվեց մի ոռու ռեժիսոր: Չեմ տեսել ոչ փորձը, ոչ ներկայացումը: Փորձերի ժամանակ կույիսներում խոսում էին ու դժգոհ էին:

— Սա ի՞նչ ոեժիսոր է,— ասում էր Աճեմյանը, — միշտ գանցեն դնել չգիտի:

Բեմադրությունը կարճ կլանք ունեցավ, ավելի ճիշտ՝ կլանք չունեցավ, վերաբերմունք չստեղծեց:

Աճեմյանի բնութագրումները միշտ կարճ էին, խուսափողական: Նա նկատում էր բաներ, որ չէին երևում շատերի աչքին, և շրջանցում էր բաներ, որ շատ տեսանելի էին: Բնութագրումների մեջ նա թեթև հեղնական էր, բան հաստատող: Միշտ ուզեցել եմ պարզել, թե որտե՞ղ էր Աճեմյանն անվերապահ, ի՞նչն էր նրան հիացնում կամ զարմացնում: Փափազյանի կողքին էր, բայց այնպես էլ չիմացա, թե ինչ էր մտածում Փափազյանի մասին: Փափազյանի կարծիքը մասնակիորեն հայտնի էր.

— Մարդը Եվրոպա չի տեսել. Եթե տեսած լինե՞ր...

Եթե տեսած լիներ, բայց նա ոչ միայն տեսել, այլև կրում էր ոռւսական բեմի փորձը: 20-ական թվականների Մոսկվան թատերական նորագույն ուղղությունների կենտրոնն էր: Աճեմյանը տեսել էր այդ ամենը Ստանիսլավսկուց, Վախթանգովից ու Թահրովից մինչև Մեյերխորդ: Իսկ Եվրոպան: Փափազյանն ինքը կրողն էր Եվրոպական փորձի: Եվ մի օր էլ Եվրոպան եկավ Երևան:

Փարիզի «Ատելիեն» 1964-ի գարնանը Երևանում էր իր դեկավարի՝ Անդրե Բարսակի հետ: Ներկայացվեց չորս բեմադրություն՝ Տուրգենևի «Մեկ ամիս գյուղում» դրաման, Բոմարշենի «Սևիլյան սափրիչը», Ժան Անուլի «Անտիգոնեն» և մեկ գործողությամբ մի կատակերգություն՝ միմական պատկեր:

Առաջին ներկայացումը՝ «Մեկ ամիս գյուղում», հիացրեց իր հանգիստ տոնայնությամբ: Ֆրանսերենը կատարելապես համապատասխան էր ոռւսական ազնվականության միջավայրին, և գուցե Տուրգենևին իգուր չէին ասել, թե լավ է ֆրանսերեն գրի, Եվրոպան իրեն կհասկանա: Հրաշալի էր Նատալիա Պետրովնայի դերակատար Դելֆին

Սելիրիդր: Պետք էր տեսնել, թե ինչպես էր լսում հայացքն անտարբեր, թեթև, հազիվ նկատելի շնչառությամբ և ուսերի մեկ-երկու շարժումով: Եվ ինչպես էր քայլում, ի՞նչ գուսապ կանացիություն: Ընդմիջմանը ճեմասրահում խոսում էին:

– Եղբայր, սրա մեջ ի՞նչ կա, խոսում են, պիեսն են կարդում, յավ էլ կարդում են, հետո ի՞նչ:

Մոտեցա: Խոսողը Սելակ Արգումանյանն էր, նրա դիմաց բարձրահասակ Լեռն Ներսիսյանը բարձունքից նայող հայացքով, ժեստը հարցական, ինչպես Հռոմի սենատում:

– Ես թատրոնի մարդ չեմ, – ասում էր Արգումանյանը, – բացատրիր, հասկանամ:

– Եթե չես հասկացել, ինչո՞ւ պիտի իմ բացատրելով...
Սա ձեզ համար չէ, այստեղի համար չէ:

– Իմացանք, բայց խոսում են, գնում-գալիս, խոսում են, յավ էլ խոսում են, հետո՞...

Լեռն Ներսիսյանը նույն դիրքում էր, նույն հեղինակավոր տոնայնության մեջ: Ես ուզում էի չհամաձայնել Արգումանյանի հետ, բայց հասկանում էի նրան: Սա խոսքի ներկայացում էր, ինչպես ֆրանսիական ավանդական թատրոնն առհասարակ: Լեռն Ներսիսյանն իր ֆրանսերենի իմացությամբ յսում էր բեմական ֆրանսերենն ու պիտի հիանար: Իսկ ի՞նչ էր տեղի ունենում բեմում: Մարդիկ հարգում էին միմյանց զգացմունքները, կային հոգեբանական շփման նուրբ կետեր և այսքանը: Արտաքին շարժումը հասցված էր նվազագույնի, բայց թույլ էր ներսում տրոփող երակը: Դա ֆրանսիացու հոգեկան ամոթխածությունն էր՝ չմերկացնել զգացմունքները: Մտածում էի՝ ի՞նչ կասի հիմա ինձանից երկու կարգ առաջ նստած Աճեմյանը: Ընդմիջմանը դուրս եկանք ճեմասրահ:

– Խոսում են, – ասաց նա, – շատ յավ խոսում են յավ դրված, փափուկ ձայներով: Բոլոր հնչյունները լսելի են,

մաքուր: Երանի թե մերոնք կարողանային այդ մաքուր թյանը հասնել:

— Բայց ի՞նչ յակ էր յուրմ նատայիա Պետրովնան:

— Այո՛, մերոնք էդպես յսել չգիտեն, ոչ էլ տոնի կուրտուրա ունեն:

— Ես նկատի ունեմ յսողի վերաբերմունքը: Դիմացինի խոսքը տեսանելի է յսողի հայացքում ու շնչառության մեջ: Նկատեցի՞ք դերասանուհու ուսերի թեթև շարժումը, երբ ափարտվեց մի միտք, և նա շունչը պահած, վերաբերմունքը թաքցրած սպասում էր՝ ի՞նչ է ասվելու հետո:

— Ի՞նչ ուշադիր ես դիտել այդ կնոջը: Իսկ ինչի՞ նման է նրա հետ խոսողը: Լավ խոսում է, ներսը դատարկ: Բոլորն էլ, բացի քեզ հմայող դերասանուհուց, խոսողներ են: Բեմադրություն չկա, ոչինչ չի կատարվում, ընթերցանություն է:

Հաջորդը «Անտիգոնեն» էր՝ պայմանական բեմադրություն ֆրակներով և կանանց անգարդ գգեստներով, խոսքը դրամատիկորեն բնդգծված, շարժումը զուսպ, անգումները նույնպես, և դա բեմականորեն ամենահարմար վճիռն էր: Տոնային առումով տպավորիչ էր Անտիգոնեի (Կատրին Սելլեր) և Կրեոնտի (Ժան Դավի) անշարժ, դիմահայաց տեսարանը: Հետաքրքիր էր հետ ու առաջ քայլող, հայացքը թեք, կիսաժպիտ բանտապահը (Օլիվիե Յուսսենո): Խաղը խոսքային էր, հանդիսարահը յուռ, ուշադիր յուրմ էր:

— Որ հասկանան էսպես ուշադիր չեն յսի, — շնչաց Աճեմյանը:

Վերջում, դահլիճից գուրս գալիս Լևոն Հախվերդյանից յսեցի Աճեմյանի սպանիչ եղրակացությունը.

— Սա ոեժիսոր չի, անտրեպրենյոր է:

Այս խոսքն ասվում էր Անդրե Բարսակի մասին, որի բեմադրություններով, 50-ական թվականների սկզբին հիացել էր մոսկովյան թատերագետ Գրիգոր Բոյաջիկը, որ հարյուր ներկայացում էր տեսել Եվրոպայում և իր հոգ-

վածներում սյուժեներ է պատմում: Իսկ Աճեմյանը, վա՛յ մեզ, Եվրոպա չէր տեսել: Տեսանք Բարսակի երրորդ գաստրոյային ներկայացումը՝ «Սևիյան սափրիչ». ձեական միշտանցեն, մաներային խաղ, մաշված ցուցադրականություն, բայլեր հետ ու առաջ, առանց խնդրի: Աճեմյանին չտեսա այս անհամ ու անալի, ներկայացմանը: Ինձ թվաց՝ չի եկել: Ուզում էի թողնել, դուրս գալ, բայց համբերեցի մինչև վերջ, որպեսզի չսխալվեմ:

Պետք էր հասկանալ, որ պրովինցիալիզմն աշխարհագրական հասկացություն չէ, կարելի է գտնել նաև Եվրոպայի բուն կենտրոնում: Լուրջ արվեստը ոչ միշտ է կենտրոններում ստեղծվում, ոչ էլ «Հեղինակավոր» կարծիքներով: Հետագայում տեսնելու էի, որ Փարիզը թատրոնի մայրաքաղաքն է իր գուտ կենսագրությամբ ու որոշ հետքերով: Տեսնելու էի, որ կան այնտեղ արվարձանային թատրոններ առանց մշտական շենքի և ճշմարիտ արվեստ են ստեղծում, նաև շրջագայող խմբեր: Այդտեղից էլ, 1966-ի աշնանը իր փոքր խմբով երևան եկավ նշանավոր Շաու Դյուլենի աշակերտուհի Մարյեն Ռոբինսոնը: Ոչ մի հանրագիտարանում անունը չկա: Թատրոնի պատմության գրքերում մի տեղ տրված է անունն իմիջիայլոց, տեսել ենք «Մատանայի տար պատվիրաններ» կինոնկարում, ոչ մեծ գերում:

Առաջին ներկայացումն էր Սարտրի «Դռնփակը»՝ հանդիսատեսին ու բնթերցողին անծանոթ պիես: Ինչի՞ մասին էր, հասկանալի չէր, բայց դերասանուհու խաղը հաճելի էր, պարզ ու անսեթևեթ: Հաճելի էին իր խաղակիցները՝ Դանիել Լեբրյոնը, Միշել Լեմուանը: Զգացվում էր, որ խաղը գուտ խոսքային չէ, դրություններով է մտածված, բայց ո՞րն է իմաստն այն իրավիճակի, որում նրանք հայտնվել են: Դահլիճում ֆրանսերեն իմացողներ շատ կային, և քանի՞սն էին պիեսին ծանոթ: Վարագույրը փակվեց: Ընդմիջ-

մանր հարցուփորձ էին անում միմյանց: Պարտերի առաջին
կարգերի միջանցքում դիմացս կանգնած էր Աճեմյանը:

— Լեզուն չգիտենք,— ասացի, — պիեսին ծանոթ չենք:

— Նշանակություն չունի, — ասաց Աճեմյանը: — Համոզված եմ, որ լեզուն իմանալու դեպքում էլ ոչինչ չէինք հասկանալու: Ահա, խնդրեմ, — նայեց հանդիսականների կողմը, — տեսնո՞ւմ ես...

— Ոչ մեկր չի՞ հասկանում:

— Կրկնում եմ՝ լեզուն իմանալու դեպքում էլ...

— Հավանաբար, — համաձայնեցի ես:

— Համոզված եմ, — շարունակեց Աճեմյանը: — Դու կարծում ես լեզուն իմացողները մի բան հասկացե՞լ են: Բառերն են հասկացել, ուրիշ ոչինչ: Լեզուն չիմացողներս մեր արդարացումն ունենք, իսկ նրանք, տեսնո՞ւմ ես, հիմար վիճակի մեջ են: Ինչի մասին է պիեսը, չգիտեմ, բայց դա մեզ համար չի գրված:

— Ես պարզեցի, թե ինչի մասին է պիեսը, — ասաց այդ պահին մեզ մոտեցած Հայկուչի Գարագարը: — Ուրեմն, այս երեք հոգին մեռած են և ուղարկվել են դժոխք: Սենյակը դժոխքն է, դուռը հավերժորեն փակ, և այս երկու կանայք ու երիտասարդը դատապարտված են մնալու փակ դռների հետևում, միմյանց դիմաց և...

— Ես ի՞նչ էի ասում, — ծիծաղեց Աճեմյանը: — Այս պիեսը մեզ համար չի գրված: Տեսնո՞ւմ եք: Իրադրությունը պարզվեց և ի՞նչ պարզվեց, ոչինչ պարզ չէ:

Ընդմիջումից հետո ներկայացվեց Ժյուլ Ռենարի «Տնական հացը», որտեղ դրությունն ու հոգեվիճակներն այնքան տեսանելի էին երկու անձի գրեթե անշարժ դրույցում, որ բառերը հասկանալու կարիք չկար: Բեմում սիրահարներ են միմյանց հասկացող՝ մի տարիքն առնող կին և մի երիտասարդ: Ահա մի գգացմունք, որ չի իրականանալու, և այդ է ամբողջ իմաստը: Ոչինչ չի սկսվել, չի շարունակվելու, չի ավարտվելու, վիճակ է, որ մնալու է, և

ամեն մեկն իր «տնական հացի» հետ։ Գործող անձինք միմյանց չմոտեցան։ Ոչ համբուլյոր, ոչ արգունք։ Ահա Հոգեբանական թատրոնն իր բարձրագույն դրսեորումով։ Աճեմյանը կարծես դահլիճում չէր։ Նրան տեսա Մադլենի երրորդ ներկայացման ավարտին։

Կազմված էր մի ծաղկեփունջ ֆրանսիական դրամատուրգիայի նմուշներից՝ Ռասինից մինչև Հյուգո, Անրի Բեկ, Կլոդել և այլն, և այսպես մինչև Ժան Կոկտո, սցենարի հեղինակը՝ Գաբրիել Հարություն։

«Եւ եղեւ երեկոյ...» Այսպիսի երեկո մեզ պարգևել էր միայն Վահրամ Փափազյանը «Դիմակահանդեսի» իր Արբենինով։ Նա հիմա այստեղ էր, ուժիսորական օթյակում։ Ես պարտերի միջին կարգում էի։ Աճեմյանը եկավ, նստեց երկու կարգ առաջ, ծայրի աթոռին։

Վարագույրը բացվեց։

Դերասանուհու զարդասենյակն է, ձախ անկյունի մոտ մի փոքր սեղան, վրան հայելու շրջանակ, մոտք մի աթոռ, սեղանից աջ՝ մի հարթակ, ձախ անկյունին մոտ՝ մեծ հայելու շրջանակ։ Մի կին, հագին գորշ խալաթ, ձեռքին ծխախոտը, ծուլորեն, ոտքերը քարշ տալով քայլում է սենյակում։ Ներս է մտնում մի երիտասարդ, կինը ծուխ արձակելով թույլ ժպտում է։ Երկու խոսք։ Կնոջ ձայնը միջին տոնում է, չոր, խոսում է հեգնական, քթի մեջ, հետո ձայն է տայիս՝ «մադուազե՛լ»։ Մտնում է մի գեղեցկուհի, ձեռքին զգեստներ։ Նա կնոջ խոսքին պատասխանում է մեկերկու բառով, և ձայնը դաշնամուրի նման։ Դահլիճում ծափահարում են։ Սա՞ է... Անշուք տեսքով կինը ծխախոտը մի կողմ է դնում, խալաթը դեն է նետում ուսերից, աղջիկը նրա ուսերին է գցում կարմիր թիկնոցը, կինը ձեռքի թեթև շարժումով ուղղում է ճակատին թափված մազերը, դառնում, ժպտում երիտասարդին, թեքվում, մի ոտքը դնում հարթակին, և մեր առջև կանգնած է Պաղեստինի թագուհին։ Թիկնոցի ծայրը հարթակից իջած, հասնում է հա-

տակին, կինը դառնում է մունումենտ, խոսում է երկինքն ի վեր: Այ թե ինչ ասել է Ռասին, կրասիցիզմ, այ թե որտեղ է դասականությունը:

— Ես հասկացա՞ ինչ է նշանակում Սառա Բեռնար, Ռաշել..., շշուկով ասացի կողքիս աֆոռին նստած ոռւսական թատրոնի դերասանուհուն՝ Ասյա Սուջյանին:

— Հրաշք է, — ասաց Ասյան:

Կինը մենախոսությունը չափարտեց, ձայնն իջեցնելով անգամ խոսակցական տոնի ու դարձագ երիտասարդին.

— Ainsi (այսպես), — ասաց ժպտալով:

Այսպես էլ անցավ Մոլիերին (*Դոննա Էլվիրա «Դոն Ժուանում»*), ապա Հյուգո (*«Մարի Թյուդոր»*), Ալֆրեդ դր Մյուսսե (*«Մարիանի քմայքներ»*), Անրի Բեկ (*«Փարիզուհին»*) և այլն: Փոխվում է հանդիսականի աչքի առջև, մի հայացքով, մի քայլով ու տոնով, մազր թեքելով: Ֆրանսիական դրամատուրգիան ու դերասանական արվեստի հարստությունը դրեց մեր առջև ու հասավ Կոկտոյի *«Մարդկային ձայնին»*: Մոտ քսան րոպե, առանց տեղից շարժվելու, ձեռքերը կախ, միայն իր տոնով հանդիսարահր պահեց աներևակայելի դրամատիկական լարվածքում: Ի՞նչ էր տեղի ունենում: Տարիքն առնող մի կին խոսում է գեռախոսով: Գեռքին գեռախոս չկա, թևերն անօդնական են ու անշարժ, միայն ուսերն են խոսում: Ի՞նչ է ասում, կարեսոր չէ, մի բան է կորցնում ու բախում է անհնարինության դռները, սահում ու սահում է ցած, գեռախոսն անջատվում է և... *«Մադմուազել...»*, նորից է միանում: Անհնարինության գիտակցումը կրկնվելով նրան տանում է ավելի ու ավելի ցած...

Վարագույրը փակվեց: Աճեմյանը կողքիս էր ու երեսում էր, որ հիացած է:

— Եթե հասկանալի է, — ասացի, — հասկանալի է նաև առանց բառերի: Կարեսոր չէ, թե ինչ է ասվում, կարեսոր է, թե ինչ է կատարվում մարդու հետ:

- Այդպես էլ կդրես,— ասաց Աճեմյանը:— Մտքումդ
պահիր ասած՝ ինչ է կատարվում:
- Գրել առանց գրական հիմքն իմանալո՞ւ:
 - Եթե բեմական հիմքը պարզ է, ի՞նչ կարևոր է
գրական հիմքը: Ի՞նչ հիմքով է ստեղծվում պիեսը, գրա-
կա՞ն, թե՞՞ բեմական:
 - Մեր խոսակցությունը շարունակվեց դերասանական
մուտքի մոտ:
 - Ի՞նչ փարպետություն, ասացի,— գարմանում եմ:
 - Ինչ որ ասում ես, համաձայն եմ,— ասաց Աճեմ-
յանը:— տաղանդ, ինտելեկտ, փարպետություն, կուլտուրա,
ամեն ինչ կա: Բայց ես գարմացած չեմ:
 - Քանի՞ այսպիսի դերասանուհի ունի ֆրանսիական
բեմը, գուցե Մարիա Կազարե՞ս, Մադլեն Ռենո՞,
Դելֆին Սեյրի՞դ...
 - Գուցե և այս մեկը, — պատասխանեց Աճեմյանը, —
բայց ես գարմացած չեմ: Քեզ ի՞նչն է գարմացնում, փար-
պետությունը: Դա ի՞նչ գարմանայու բան է: Ամեն ինչ
պարզ է:
 - Պարզ, — ասացի, — հենց այդ պարզությունը: Զարմա-
նալի չէ՞, թե ինչպես է ինքնաստեղծվում հանդիսատեսի
աչքի առաջ, մեկ առ մեկ հավաքելով կառուցվածքի տար-
րերը, ներքին ու արտաքին: Եվ որտեղի՞ց է սկսում, ներ-
սի՞ց, թե՞ արտաքին ատրիբուտներից:
 - Վարպետություն է, գաղտնիք չկա:
 - Գաղտնիքն էլ այդ է:
 - Միևնույն է, չեմ գարմանում:
 - Դուք առեղծվա՞ծ եք ուզում, Վարդան Նիկիտիչ:
 - Ըստ, գտար: Գաղտնիք չկա, գարմանայու բան չկա,
բայց սովորելու շատ բան կա:
- Մեր գրույցն այստեղ ամարտվեց: Երկրորդ օրը դարձ-
յալ թատրոնում էի: Ուզում էի ստուգել ինձ: Մոտ տեղերի
տոմս չկար, նստած էի ամֆիթատրոնի միջին կարգում:

Տպակորությունս նույնն էր: Դուրս գալիս Արմենի հետ էի: Ասաց, որ Անատոլի էֆրոսը հրավիրել է իրեն Մոսկվա, պատրաստվում է վաղը կամ մյուս օրը մեկնելու: Ներկայացման մասին չէր խոսում: Ուզում էի շարունակել Աճեմյանի հետ ունեցած զրույցը:

— Երևույթ է,— ասացի:

— Անկասկած,— պատասխանեց Արմենը մեկ բառով:

Այդու ծառուղով անցնելիս մեզ միացավ Խորենը մի քանի գերասանների հետ: Բոլորը յուռ էին: Այդ ի՞նչ յոռւթյուն էր, չէի հասկանում: Գուցե ճի՞շտ էր Սառա Բեռնարի կարծիքը, թե գերասանները մրցության մեջ են գերասանուհիների հետ:

— Խորի՞կ,— ասաց Արմենը,— ասա:

— Ի՞նչ:

— Տեսանք, մի բան ասա:

— Դե, աեխնիկան տեսնում ենք,— ասաց Խորենը: Շատ չեմ զարմանում: Ես զարմանում եմ, թե, ո՞նց ա կարողանում վեր կանգնել դուր գալու ցանկությունից:

— Են էլ գերասանուհին,— ասացի ես:

— Այո, էն էլ գերասանուհին: Կինը բեմում չմտածի դուր գալու մասի՞ն: Ես դրա վրա եմ զարմանում:

Այնուամենայնիվ անհասկանալի էին ինձ համար և՝ Աճեմյանի վերապահությունը, և՝ գերասանների յոռւթյունը: Մագլենի ներկայացման ծրագիրը ձեռքիս էր: Տանը կարդացի Մարկ Ժիլեր Սովածոնի խոսքը. «Մագլենին մի անգամ տեսնողը երբեք չի մոռանա նրան»: Սա գուցե հեղինակի շնորհակալության խոսքն է ուղղված գերասանուհուն: Անցնելու էր մեկ տարի, որ ականջիս հասներ Փափազյանի խոսքը.

— Փարիզից մի կին էր եկել: Դուք տեսա՞ք այդ կնոջը: Չեմ կարողանում մոռանալ:

Ես տարեցտարի ավելի էի հեռանում թատրոնից։ Դեռասանների մեջ մարդիկ կային առաջին գծում, որ իզուր էին այնտեղ։ Աճեմյանն ընդունել էր նրանց և չէր կարող ազատվել։ Շարունակում էի մտածել, թե ո՞րն է դերասանի արվեստի նրա չափանիշը

Այդ խնդրին բախվելու առիթը ներկայացավ։

1974-ի ամռանը թատերական ինստիտուտում ընդունելության քննությունների հանձնաժողովում էի։ Բեմական խոսքի քննությունն էր ընդունում։ Աճեմյանը նշանակված էր հակողական դերով։ Զէր գալիս, չէր հետաքրքրվում։ Մի անգամ եկավ, բարեկեց, գնաց։

—Պրոտեժե չունի՝ չի գալիս, — ասաց մեկը։

Բայց ահա քննության մտավ կիսագանգուր գյխով, նեղ ճակատով մի երիտասարդ և ինքնավստահ ու արհամարհական կեցվածքով կանգնեց հանձնաժողովի առջև։

— Աճեմյանի պրոտեժեն, — շշնջաց ականջիս հանձնաժողովի նախագահ Արտաչես Հովսեփյանը։

Ընդունեցի այս խոսքը որպես կատակ։ Երիտասարդը նստեց աթոռին, ձեռքով բռնեց ճակատը և մի վերամբարձ, ամբարտավան, կեղծ ողբերգական տոնով ու կեղծված ձայնով սկսեց ողբաձայն, հանդիսավոր ողբալ կողկողագին՝ «քամի՛ն, աշնան քամի՛ն...»։ Ես՝ ի պաշտոնե լրջորեն լսողս, ամոթահար եղա, բայց գսպեցի ինձ ու փորձեցի բազատրել մարդուն, թե կարելի է այդ նույն խոսքերը մի քիչ ավելի մարդկային տոնով արտասանել։ Երիտասարդը լսեց արհամարհանքով և ասաց, որ դա իր ըմբռնումն է, և չի պատկերացնում, թե հնարավոր է ավելի լավ կարդալ։ Առարկելն անհնար էր։ Նա մի առակ կարդաց ալիքի ու փրփուրի մասին և «փրփուր» բառը, որ մի քանի անգամ կրկնվում էր, ուղղում էր ուղիղ ինձ ցուցադրական արհամարհանքով։ Վերջացրեց, գուրս եկավ։

— Ի՞նչ պատասխան ենք տալու Աճեմյանին, — ասաց
Արտաշես Հովսեփյանը:

— Ոչ մի պատասխան, — ասացի: — Այս տղան գուցե
ապահոված չէ, պատկերացումներն են սխալ և խոսքի
ականջ կախող չէ: Բավարարից ոչ ավել:

— Շատ լավ: Պատասխանատվությունը ձեր վրա:
Աճեմյանը եկավ մյուս օրը և միջանցքում ինձ կանգ-
նեցրեց:

— Ես ի՞նչ ես արել մեր տղային:
— Այդ մեր տղան ոտքից գլուխ ֆալշ է, — ասացի:
— Ինչո՞ւ... Շնորհը ունի:
— Ամբարտավան է և յկահ, — պատասխանեցի: — Նրան
շատ հեշտ կարելի էր անբավարար նշանակել:

Աճեմյանը մի պահ յռեց և
— Լավ չես արել, այսինքն բր'... ճիշտ ես արել: Կարելի
էր անբավարար, բայց որոշել ես բավարար: Ել ի՞նչ է
ուզում հիմարը:

Աճեմյանի «պրոտեկցիան», թվում էր, այսքանով վեր-
ջացավ, բայց... Նա որոշեց իրականացնել իրեն հանձնա-
րարված հսկողական դերը: Եկավ նստեց հանձնաժողովի
մեջտեղում, մի մատիտ գտավ, մի թուղթ, սկսեց նկարել:
Ով էր քննության մտնում, ինչ գնահատական էր ստա-
նում, պետքը չէր: Քննությունը նրան չէր հետաքրքրում:
Բայց հանկարծ որոշեց հետաքրքրվել և պաշտպան կանգ-
նեց երկու ապահովաների: Երկու անգույն տղա. ո՞չ տեսք,
ո՞չ ձայն, ո՞չ լեզու, ո՞չ խելքի նշան: Թվում էր՝ այս մար-
դիկ կանգնած են եղել փողոցի անկյունում, մեկն ասել է,
թե տղերք, չփորձե՞նք դերասան... Այս տղաների ապա-
շնորհ երեսությունը շատ ակներև էր: Հանձնաժողովի չորս
անդամներս՝ Արտաշես Հովսեփյանը, Զարեհ Մուրադյանը,
Կիմ Արգումանյանը և ես նույն կարծիքին էինք: Միայն
Աճեմյանն էր, որ համառում էր և ոչ մի հիմնավորում.

— Գերազանց կամ լավ:

— Զենք զիջելու, — շշուկով ականջիս ասաց Կիմ Արգումանյանը:

Արտաշես Հովսեփյանը նայեց երեսիս, աչքերս փակեցի: Գլուխս շարժեցի բացասաբար: Աճեմյանը ոչ մեկիս երեսին չէր նայում: Նա որոշեց վիրավորվել (նրա այս ձևական վիրավորանքն էլ ոմանք ընդօրինակել են) և մատիտը ցած դրեց.

— Դուք Էլ կասեք, թե հարգում եք ինձ, հա՞:

Այս խոսքերն ասաց ցածր, դանդաղ, առանց մեկիս երեսին նայելու:

— Դե լավ, — հոգոց քաշեց Արտաշեսը:

Բողոքս միաձայն զիջեցինք մեր արդեն անիմաստ դիրքը: Զափանիշները խախտվեցին: Աճեմյանը վեր կացակ, գնաց: Նրա գնայուց մեկ ժամ Էլ չէր անցել, սենյակ ներխուժեց մի զայրացած կին.

— Թատրոնի կործանիչնե՛ր... դուք և ձեր նմաննե՛րը...

— Տիկին նախ հանգստացեք, հետո...

Արտաշես Հովսեփյանի հանգիստ տոնից տիկինն ավելի բորբոքվեց.

— Ընկե՛ր Աճեմյան...

— Ես Աճեմյանը չեմ, ես Հովսեփյանն եմ:

Բողոքավորները շատ չէին՝ երկու, թե երեք հոգի: Աղմուկը շարունակվեց երկրորդ օրը: Արտաշեսն աշխատում էր հանգիստ խոսել, բացատրել, հիմնավորել: Նա կրակն իր վրա էր առել, ոչ մեկին օգնության չէր կանչում և.

— Հարգելի տիկին, լսե՛ք ինձ... սիրելի՛ս...

Ես գուրս եկա սենյակից: Աճեմյանը միջանցքում հետու առաջ էր քայլում, ձեռքերը մեջքին, գլուխը վեր, անվրդով: Բողոքավոր տիկնոջ ձայնը չէր լսվում: Նա կարծես հանգստացել էր: Բայց հանկարծ լսվեց ուրիշ գոռող: Արտաշեսի նյարդերը չէին դիմացել: Հիմա Էլ նա էր գոռում իր խուլ ձայնով: Դա գոռոց չէր, այլ կողկողագին հառաջանք:

— Ի՞նչ է եղել, այս ի՞նչ ձայն է, ո՞վ է,— զարմացավ
Աճեմյանը:

Ասացի, որ երեկվա քննությունից դժգոհներ կան, եկել,
բողոքում են:

— Հասկանալի է, բայց ի՞նչ կարիք կա... Մարդը ձայն
չունի, այդպիսի ձայնով չի կարելի և այլ, և այլ... գոռգո-
ռալ:

Նա բացեց պրոֆեսորական սենյակի դուռը.

— Արի, գործ չունենք աղմուկի հետ.

Ես, անտարբեր ձևանալով, որպես թե իմիջիայլոց
հարցրեցի, թե իսկապե՞ս հավանում է երեկվա տղաներին,
որ «գերագանցով» գնացին: Զպատասխանեց: Զիմացա,
չլսե՞ց, թե չլսելու տվեց իր հին սովորությամբ: Հարցի
գործնական կողմն ինձ չէր հետաքրքրում. ի վերջո տար-
բերություններն աղաղակող չէին, բնդունվող թե չընդուն-
վող, բոլորն էլ ուղեկորույս, աննպատակ երիտասարդներ: Ես
ուզում էի իմանալ, թե ի՞նչ հատկանիշի հիման վրա է
նա որոշում մարդու գերասանական ապագան: Աճեմյանը
խուսափում էր պատասխանից:

— Հայրիկդ ինչպե՞ս է,— հարցրեց անսպասելի: — Թատ-
րոն գալի՞ս է: Ինձ թվում է, չի գալիս: Վաղուց չեմ տեսել:

— Թատրո՞ն, երեկի տարին մեկ անգամ, — ասացի:

— Պարզ է: Աբելյանի, Հասմիկի, Խաչանյանի հանդի-
սատեսները հիմա թատրոն չեն մտնում: Գան, ո՞ւմ տես-
նեն:

Դուռը բացեց Արտաչես Հովսեփյանը և տանջահար ու
գունատ երեսով նայեց մեզ:

— Արի՛, արի՛, — կանչեց Աճեմյանը:

Արտաշեսը ներս չեկավ, դուռը ծածկեց, գնաց:

Ես վերադարձա իմ հարցին, որից ամեն կերպ հեռու էր
նետվում Աճեմյանը: Ի վերջո ինքը հարցրեց.

— Քո կարծիքով, տարբերությունները շա՞տ մեծ են:

— Ծատ չէ, — պատասխանեցի, — բայց կան, գդալի են:

Բողոքն իգուր չէ:

— Իգո՞ւր է, իգո՞ւր: Խելքը գլխին մարդն ի՞նչ գործ ունի այստեղ:

Նա ոչ միայն թատերական կրթությունն էր անլուրջ համարում, այլև բոլոր նրանց, ովքեր որևէ ձեռվ կապված էին դրա հետ: Բոյոր դիմորդներին նա համարում էր մոլորդածներ, անխելք ու անյուրջ: Այն մտքին էր, որ հայ թատրոնում ինչ եղել է, վերջացել է կամ վերջանում է, նոր բան, մեծ բան չի լինելու, չսպասեք: Ես կրկնեցի այն ժամանակ արծարծվող մի միտք, թե միգուցե արվեստի բնո՞ւյթն է փոխվում, և դերասանական անհատի դերը նկազում է: Նա չհամաձայնեց.

— Թատրոնի բնույթն ինչո՞ւ պիտի փոխվի, չեմ հասկանում: Թատրոնը մնայու է թատրոն: Ի՞նչն եք ուզում արդարացնել, ո՞ւմ... Հին ոճ, նոր ոճ, հնարված բաներ են: Արվեստը եթե արվեստ է, չի հնանում: Հնանում են շտամպները և մաշվում են:

Ես հենց այս էի ուզում յսել և շարունակեցի.

— Ուրեմն, այն, ինչն անվանում են հին, մաշված շտամպն է:

— Միայն ու միայն: Ոչ մի տաղանդավոր դերասանի չեն ասում հին: Թող հիմա Աբելյանի նման մի դերասան լիներ... Մեծ որ ասում են, Աբելյանն էր իմ իմացած ամենածարիտ, ամենաէմոցիոնալ դերասանը:

— Չեմ պատկերացնում դերասանական տիպը, — ասացի:

— Լուսանկարները չեն տրամադրում:

— Հնարավոր չ: Եթե չես տեսել դերասանին, լուսանկարները ոչինչ չեն կարող ասել: Ոչ մեկի մասին հնարավոր չէ լուսանկարով դատել: Դերասանի ներքին հմայքը, էմոցիան չեն կարող երևալ:

— Այնուամենայնիվ, ուզում եմ պատկերացնել՝ ի՞նչ դերասան էր Աբելյանը: Արտի՞ստ էր:

ԱՃԵՄՅԱՆՆ անմիջապես հասկացավ, թե դեպի ուր եմ թեքում հարցու:

— Նայած թե ինչ ես հասկանում «արտիստ» ասելով:
Փափաղյա՞ն:

— Այո՛, — ասացի, — Փափաղյա՞ն:

— Այդ ըմբռնումով՝ Աբելյանն արտիստ չէր:

— Շատ լավ, — շարունակեցի ես, — ուրիշ չափանիշ բնտրենք. Հրաչյա Ներսիսյան՝ հուզական դերասան:

Ո՛չ, — ասաց ԱՃԵՄՅԱՆՐ: — Աբելյանը շատ տարբեր էր: Ոչ մի նմանություն: Նա չուներ Հրաչյայի ո՛չ բեմական հմայքը, ո՛չ էլ բնական արտիստիզմը:

— Ի՞նչ մնաց:

— Օ՛, չատ բան: Աբելյանի հոգեկան խորությունը մեծ էր: Միայն րոպեական պոռթկումներով չի կարելի որոշել դերասանական էմոցիայի չափը: Աբելյանի խորությունը նյուանսների մեջ էր՝ հոգեբանական և խարակտերային նյուանսներ: Հրաչը դա չուներ: Նյուանսների այն հարստությունը, որ Աբելյանն ուներ, ոչ մեկը չուներ:

— Պարզ է, — ասացի, — հիմա հասկացա: Կարեոր մի բան պարզ է:

ԱՃԵՄՅԱՆՐ շարունակեց.

— Հրաչյայի խաղը բռնկումներից էր կազմված, կտորկտոր բռնկումներ: Ճի՞շտ է: Դու նյուանսներ նկատե՞լ ես նրա խաղում:

— Պազտասարր...

— Ուրի՞շ... Չես կարող ասել: Թատրոնում, կինոն նկատի չունեմ, դա միակ գերն էր, որտեղ Հրաչյան խարակտերային էր և տիպական: Աբելյանը բոլոր դերերում խարակտերային էր և տիպական: Նրա նյուանսներն այդտեղից էին: Աբելյանի համար չկար ոչ խարակտերային դեր: Նրա համար չկար էմոցիա խարակտերից դուրս: Աբելյանը միշտ կոնկրետ էր: Ոչ մի վերացականություն:

— Ինձ թվում է, — ասացի, — որ այդ խարակտերային կոնկրետությունն է արգելք եղել նրա Համլետ խաղալուն:

— Ի՞նչ պարտադիր էր, որ Արեյյանը Համլետ խաղար:

— Պարտադիր չէր: Ինքն է ուզեցել ու մտածել, որ չի կարող: Վավիկ Վարդանյանն էր պատմում:

Այս խոսքիս վրա Աճեմյանը հապաղեց մի քիչ ու պատասխանը գտավ:

— Ասացի չէ՞ որ Փափազյանի չափանիշով արտիստ չէր Արեյյանը: Եթ Փափազյանն էլ, եթե Արեյյանի չափանիշով կողմնորոշվենք, խարակտերային և տիպական էր միայն մի գերում՝ Օթելլո, բայց նրա Համլետի մասին ի՞նչ կասես:

— Համլետը ոչ տիպ է, ոչ բնավորություն, այլ բնդշանրացում, տրանցենզում: Բնութագրային կոնկրետացում չի պահանջում, ուրիշ բան է պահանջում: Դա մի նշանակերպում է, որի միջոցով մարդկությունը կարդում է ինքն իրեն:

— Արեյյանը դրա կարիքը չուներ: Նա ռոմանտիկ չէր, բացարձակ ռեալիստ էր:

— Ասում են՝ ֆրակի գերասան չէր:

— Դրա կարիքը չուներ: Նա առհասարակ հակառակ էր սալոնին ու սալոնային ձևերին: Հակառակ էր ամեն կարգի գերացականության ու մաներայնության: Արեյյանի համար կարևոր կերպարի հոգեկան կյանքն էր:

— Լսել եմ, Գուլակյանն է ասել, որ Արեյյանի խաղի նպատակը հուզական էֆեկտն էր:

— Դա ճիշտ է: Նա խաղում էր պոռթկալու համար: Բայց Արեյյանի պոռթկումը ինչ-որ պատահական բռնկում չէր: Նա հետեղականորեն հասունացնում էր հուզմունքը: Այդ հասունացման պրոցեսն էր հետաքրքիր: Այդտեղ էին նրա նյուանսները, գույները... Գո՛ւյն, գո՛ւյն... Գույն ունեցող գերասանը Արեյյանն էր: Ասում եմ, ոչ մեկը նրա գույները չունի: Ուստաների մեջ էլ չեմ տեսել:

Խոսքը եկավ ոռւս գերասաններին:

— Նրանց հետ հեշտ է աշխատելու, — ասաց, — պատրաստ գալիս են, շատ շուտ հասկանում են ասածու: Չարչարանք չկա: Մերոնց հետ, օ՛... Նախկիններին նկատի չունեմ:

Խոսքս սրանց մասին է:

Փորձեցի դարձյալ Աբելյանին անդրադառնալ.

— Աբելյանը հինգ տարի խաղացել էր ոռւսների հետ, օրինակ՝ Անդրեև-Բուլոյակի, Իվանով-Կոզելսկու...

— Այո՛, բայց դա իր արվեստի հետ քիչ կապ ունի: Նա կարող էր էլի նույնը լինել: Աբելյանն ազգեցություն կրող գերասան չէր: Ինքն էր մթնոլորտ և ազգեցություն ստեղծում իր շուրջը, և շատերն էին ներշնչվում նրանից: Ներշնչումը գեռ ազգեցություն չի: Եթե գերասանն ինքն իրենից չի կարող սովորել, սեփական ինքնաճանաչումով հասնել արվեստի, ոչ մեկը, ոչ մի ազգեցություն, կրթություն կամ դպրոց և այլ, և այլ, դեռ չեն կարող ունենալ:

Քանի որ խոսքը ոռւս գերասաններին էր եկել, փորձեցի մի հարց ևս պարզել.

— Ճի՞շտ եք համարում Յուժին-Սումբատովի կարծիքն Աբելյանի մասին:

— Ես այդ կարծիքին ծանոթ չեմ: Ի՞նչ է ասել:

— Դրական է խոսել, բայց ասել է, թե ի տարբերություն Սիրանույշի, Աբելյանի խաղում նկատելի են գավառական շտամպներ:

— Զգիտեմ: Ես չեմ նկատել: Ես էղակես բան չէի ասի, ոչ մի գեպքում... Ի՞նչ գավառական շտամպ: Ի՞նչ է հասկցել Յուժինը, ասելով գավառական շտամպ: Յուժինը կովկասցի էր, Կովկասն ու Արևելքը գիտեր: Ի՞նչն է համարել շտամպ, կովկասցու և արևելցու իրեն ծանոթ ձևեր՝ ժեստ, պահպան, ձայնի բնական դրվագ՝ այլ, և այլ: Աբելյանն ուներ որոշ ամրակայփած ձևեր: Իսկ ո՞ր գերասանը, ում ուզում ես ցույց տուր, չունի կրկնվող տոներ կամ ժեստեր: Ես չեմ ճանաչում որևէ գերասան, որ

Հիմնովին ազատ լինի շտամպից: Հրաչյան չունե՞ր: Նրա խաղի կրկնվող ձևերը մեկ առ մեկ կարող եմ ցույց տալ: Աբելյանն ուներ իր կրկնվող ձևերը, բայց գավառակա՞ն, ոչ մի դեպքում: Յուժինը սխալվել է:

Նկատեցի, որ Աճեմյանը չի շտապում, սպասում է քննության արդյունքներին, և ես էլ իրեն չեմ ձանձրացնում:

— Դու հոդվածներ քիչ ես գրում, — ասաց, — ինչո՞ւ...

— Չեմ ուզում բացասական ելույթներ ունենալ, սպասում եմ ինձ հիացնող, միտք տվող մի բանի:

— Գիտեմ, արվեստի ինստիտուտում պատմությամբ են զբաղվում: Դու ի՞նչ ես անում:

— Միջնադարով եմ զբաղվում: Օրս հիմնականում մատենադարանում է անցնում:

— Հետո՞: Թատրոն կա՞:

— Հետքերը կան, առավելապես անուղղակի, բայց բառերը, օրինակ՝ թատր, ցուցք, տաղավար, խաղ, մտածել են տալիս:

— Այո, բայց եթե ասում ենք պատմություն, պատմությունն ինչ-որ հետք պիտի թողած լինի: Գրում են՝ երկու հազար, բայց ու՞ր է թողած հետքը, չեմ տեսնում:

— Գրական հետք չկա:

— Դե, որ չկա, ուրեմն չկա:

— Ես հետքը ժողովրդական դրամատիկական խաղերում եմ տեսնում: Այնտեղ պարերդական դրամայի բոյոր նշանները կան, ամենակարևորը՝ անձի ու խմբի հարաբերությունը:

— Դա ուրիշ բան, հասկանում եմ, բայց այդ հարաբերության մեջ խաղացողնե՞րն են շատ, թե՞ դիտողները:

— Դիտողները մասնակից են խաղին:

— Եղ չեղավ: Եթե խաղացող ու հանդիսական իրարից չեն ջոկվում, եղավ թատրո՞ն:

— Եղավ խաղ, դրամատիկական և թատերային:

— Է՛, կյանքում այնքան բան կա թատերային։ Քո կարծիքով, եթե թատերայնությունը շատ է կյանքում, ինչի՞նչան է, թատերական արվեստի ծաղկմա՞ն, թե՞ հակառակը։ Ամեն խաղ էլ թատերային է, ո՞ր խաղը թատերային չէ։ Լևոն Քալանթարին եթե հարցնեիր, կասեր՝ ֆուտբոլը դրամա է և թատրոն։ Բայց այնտեղ դիտողներս խաղացողներից շատ են։ Քո ասած ժողովրդական խաղերում ամբոխը խաղի մեջ է։

— Բայց դա, անկախ ամեն ինչից թատերագիտական ուսումնասիրության նյութ է։

— Այո, անկասկած, պետք է ուսումնասիրել ու մտածել, թե ինչ կարելի է սովորել։ Չեմ ասում վերցնել, ասում եմ նկատի ունենալ իմպրովիզացիայի առումով։

— Խոսքից խո՞սք, դրությունից դրությո՞ւն դուրս բերելու…

— Իմպրովիզացիա։

— Բուն խաղը։

— Եթե դիտողները խաղացողներից շատ են։ Առանց հանդիսատեսի թատրոնը միայն փորձ է։ Իսկ քո ասած ժողովրդական խաղում ոչ փորձ կա, ոչ ներկայացում։ Բայց ճիշտ ես անում, որ ուսումնասիրում ես։ Մի օր պետք կգա, գուցե ավելի շատ ուսումնասիրողին։ Եթե թատերագիտություն, թատերագիտություն… թատրոն չես գալիս։

Մեր գրույցն այստեղ ավարտվեց։

Սա ամենատեսական, ամենահանգամանալից գրույցն էր Աճեմյանի հետ և, ի՞նչ իմանալի, վերջին գրույցը։

1974-75 թվերին թատրոնի պատմություն էի գասավանդում Սունդուկյանի անվան թատրոնի ստուդիայում։ Դասի էի գնում շաբաթը մեկ անգամ։ Անգնում էի Աճեմյանի առանձնասենյակի կողքով, գնում նեղ միջանցքով, բարձրանում վերջին հարկ, որտեղ դասասենյակն էր, խոսում էի ժամ ու կես և նույն ճանապարհով դուրս գալիս։

Մի անգամ էլ այդպես անցնելիս առանձնասենյակի դուռը
բազվեց, դուրս եկավ Աճեմյանը.

— Անցնում ես դռան մոտով ու գնում, հա՞՛: Ո՞ւր ես
գնում:

— Ստուդիա՝ դասի:

— Ի՞՞նչ դաս:

— Թատրոնի պատմություն՝ Համաձայն Ձեր ստորա-
գրած հրամանի:

— Հա՛, իսկապես: Հետո՝, ասածիցդ մի բան հասկա-
նո՞ւմ են:

— Լսում են, — ասացի, — հասկանալը չգիտեմ:

— Ոչինչ էլ չեն հասկանում: Կարծում ես, թե դրանցից
բա՞ն է դուրս գալու:

Կարճ խոսեցինք:

— Այստեղով անցնելիս մեկ-մեկ դուռը բաց, ներս արի
խոսենք:

— Չեմ ուղում խանգարել, իգուր զբաղեցնել:

— Իգուր չէ, արի խոսենք:

Ամիսներ անց հիշեցի այս խոսքը, ու մտքովս մի բան
անցավ... Այդ խոսքն ինձ ասել էր Արմեն Գուլակյանը
1959-ին, թատերական ինստիտուտի միջանցքում, ու դրա-
նից հետո ես նրան չհանդիպեցի: Լինում են կյանքում
կրկնվող պահեր, կրկնվող խոսքեր:

«Արի խոսենք»: Դա նրանից լսածս վերջին խոսքն էր:

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԸ ԵՎ՝

«ԲԵՄՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»

Աճեմյանի խմբից Գուլակյանի խումբն անցնելոր հավասար էր մի երկրից մյուսն անցնելուն, քաղաքացիությունը փոխելուն, այլ լեզվով խոսելուն։ Եվ ի՞նչ, վե՞րջ այլևս խաղալին տարերքին։ Գուլակյանն իր ծայրագույնս կազմակերպված բնավորությամբ, աշխատելու եղանակով ու խստաբարո պահպանվով հակադրված էր բոլորին, և բոլորն իրեն։ Նրա դասարանները գործում էին ստացիոնար թատրոնի օրենքներով, և ուսանողներից յուրաքանչյուրն ուներ, իր սահմանված պարտականությունը՝ սկսած գրական մասից մինչև բեմին ու գգեստներին հետևելոր, տոմսերի վաճառքը, ելույթներն ինստիտուտի բեմում և քաղաքամերձ ակումբներում։ Բեմական մասի ծառայողները դժգոհում էին, թե «բոլորս Գուլակյանին ենք ծառայում»։ Իսկ պատասխանը պարզ էր. «գործին եք ծառայում»։ Ուսումնական մասում ինձ, որպես կուրսի նշանակված ավագի, ասացին, որ Գուլակյանի խմբում լինելոր հավասար է թատրոնում աշխատելուն, և դասամատյանը տվեցին ձեռքս, խորհուրդ տալով ուշադիր լինել հաճախումների հանդեպ, այլապես... Դա հետո էինք հասկանալու։

1955 թվի սեպտեմբերի 1-ին Գուլակյանը մտավ լսարան, նստեց, ժամացույցը դրեց սեղանին ու նայեց իմ կողմը.

— Հենրի, ձեր մասին ես կարծիք չունեմ, բայց չեմ կարծում, թե դուք չեք կարող ուսանող լինել։ Բոլորը կարող են, հենց դո՞ւք չեք կարող։ Զեզ հետ չեն աշխատել։ Աշխատել էր պետք, որ մարդուս կարողությունը բացվեր։ Մենք պիտի սովորենք աշխատել և ճիշտ աշխատել։

Խոսքը կիսատ թողնելով բացեց մատյանր, սկսեց զածր,
ինքն իր համար կարդայ անունները:

— Ներկա,— ասաց մի ուսանողուհի:
— Տեսնում եմ: Սա իմ գործը չի, կուրսի ավագին եք
Հաշվետու:

Նորից նայեց մատյանին ու դարձավ ինձ.
— Զիգարխանյան Արմենի անունը չեմ տեսնում: Էս
ինչի՞ չկա: Կգնաս, կկանչես:

Գուլակյանն այդ ժամանակ ուսական թատրոնի գե-
ղարվեստական ղեկավարն էր, Արմենը օժանդակ կազմի
դերասան էր, մեկ-երկու փոքր դեր ուներ, և Գուլակյանն
էլ արդեն կարծիք ուներ նրա մասին: Բայց որպես ուսանող
նա ուսանող էր լինելու, կուրսի ավագն էլ պիտի հետևեր
ինչպես մյուսների, այնպես էլ նրա հաճախումներին: Բայց
նրա անունը Աճեմյանի խմբի մատյանում էր:

— Զիգարխանյան Արմենը պիտի մեր խմբում լինի,—
անհերքելի տոնով ասաց Գուլակյանը:

Ընդմիջմանն այս խոսքն ասացի Արմենին:
— Աճեմյանն ի՞նչ կասի,— տարակուսեց Արմենը:
Հաջորդ օրը նա մեր խմբում էր: Գուլակյանն առանց
Արմենի կողմը նայելու իր խոսքն ուղղեց բոլորիս, բայց
հետո, նրա բնավորությունը ճանաչելով, հասկացա, որ Ար-
մենին էր գգուշացնում:

— Ինձ ոչ մեկի տաղանդը չի հետաքրքրում: Աշխա-
տանք է պետք, ճիշտ աշխատանք: Տաղանդը աշխատանքի
միջոցով պիտի բացվի: Դա հիմի խոսելու նյութ չի և
առհասարակ խոսելու նյութ չի: Տաղանդ բառը ոչինչ չի
ասում: Ստեղծագործությունը, աշխատանք է, միայն աշ-
խատանք, իսկ դերասանի արվեստը մտավոր աշխատանք:
Դա առանց կարդայու և մտածելու չի լինում, թե չէ ամեն
պարապ մարդ... Հա, ոչ մի բացակայություն, ոչ մի ուշա-
ցում, ոչ մի բոպե: Ես չեմ ուշանալու: Ինձանից հետո դա-
սարան չմտնեք: Հենրի, հաճախումները գրանցում ես:

Հնդմիջմանը զրուցում էինք երրորդ կուրսի Վաղարշյանի խմբի (որոնց մեջ էր Ֆրունզիկ Մկրտչյանը) ուսանողների հետ։ Ավետ Ավետիսյանի որդու՝ Լևոնի հետ էր զրուցում, տաղանդ, թե՞ աշխատանք։ Տաղանդն իրենց կողքին էր՝ Ֆրունզը, որ առանց աշխատանքի, ինքնաբերաբար տպավորություն էր թողնում։ Ասացին, որ Գույակյանը մարդուս օժտվածությունը փնտրում է նրա բնավորության ու դաստիարակության մեջ, ելնելով Ստանիսլավսկու այն մտքից, որ տաղանդը շատ խորր թաքնված է մարդու հոգում, դժվար է նրան տեսնելլ։ Պարզվում էր, որ Գույակյանը բակում մեն-մենակ նստած հետեւում է ուսանողության անցուդարձին, բոլորին մեկ-մեկ։ Հետեւում է, թե ով ինչպես է պահում իրեն շրջապատի հանդեպ, ինչ տոնով, ինչ յեզվով է խոսում, ում մեջ է նստած արտիստը։ Իմացա, որ նա, ինչպես մի անդամ հիշեցրել էր Խորենը, գերադասում է բարեկիրթ, զուսպ ու ամոթխած բնավորություններին։ Խորենը մի քանի անգամ կրկնել էր «ամոթխած» բառը։ Սա ինձ միտք էր տվել, ու չմոռացա, նորից մտածեցի, երբ Գույակյանը խոսում էր Աճեմյանի դասարանի մի տղայի մասին։

— Նա նման է էն չբացված ծաղկին, որի բողբոջը մատներով գոռով բաց են արել, դրել մեր առաջ։ Դրանից զգվելի ի՞նչ կա։ Երեխին բեմ են տարել, փչացրել։ Զի կարելի։ Մարդու հոգին պիտի կրթել աստիճանաբար, ֆիզիոլոգիական հասունացման հետ, բնթերցանության հետ, որ էդպես սկսի սիրել բեմը։

Գույակյանն այսպես՝ բարոյախոսական զրուցներով էր սկսում ու ավարտում իր դասերը։ Ու մի անգամ էլ, ինչ-որ պատճառով դառնազած մի դաժան խոսք ասաց։

— Աշխարհիս երեսին չկա ավելի ապիկար արարած, քան դերասանը, մանավանդ հայ։

Պատճառը կարծես պարզ էր։ Դերասանները նրան դավաճանել էին։ Քչերն էին նրան համակրում։ Համակրող-

ների մեջ էին Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը, Վաղինակ Մարգունին, Գևորգ Աշուղյանը, Խորեն Աբրահամյանն ու նախկին ուսանողները։ Հիմա մենք էինք նրա դիմաց։ Նա ուզում էր իր խստությունը պահելով հասկանալի լինել մարդկայնորեն։ Իր ուսուցման սկզբում նա բարոյա-հոգեբանական հողն էր ամրացնում աշխատանքային հարաբերություններում։ Պետք էր հասկանալով րնդունել նրա այդ սկզբունքը։ Ճշտապահության հետ՝ վստահություն։ Ժամը 9-ից տասը րոպե պակաս նա թեքվում էր դեպի ինստիտուտի փակուղին, և Գևորգ Աշուղյանը երրորդ հարկի պաշտպանում նայում էր ժամացույցին։ Ոչ մի խախտում։ Գույակյանն այդպես էր դեկավարել թատրոնը։ Վարագույրը բացվելու էր ճիշտ ժամը 8-ին։ Ներկայացումը հետաձգվել չէր կարող։ Բոլոր դերակատարներն ունեին փոխարինող։ Եվ դա նաև պատերազմի տարիներին։ Նա այդպես էլ չարունակում էր վարել ուսումնական գործը, ու վայ նրան, ով հակառակ գնար։

Նա մեզ հետ սկսեց արտատեքստային վարժություններից, այսինքն՝ դրություններին հակագողող վիճակներից, որոնցում խոսքի անհրաժեշտություն չէր ծագելու։ Երկու օր հետո անցանք հատվածների։ Հատվածը խաղալու, ինչպես ինքն էր ասում, հանգամանքներում գործելու համար պետք էր կարդալ պիեսն ամբողջությամբ, ծանոթանալ հեղինակի կենսագրությանը, նրա այլ գործերին և ամենակարևոր՝ մտածել, թե ինչ է տեղի ունեցել գործող անձի հետ մինչև պիեսում հայտնվելը՝ վարագույրը բացվելուց առաջ։ Պետք էր գրել դերի կենսագրությունը, քանզի մարդու կագմված է իր կենսագրությունից։ Պետք էր չհորինել, ճշմարիտը պետք էր գրել ասվող խոսքերի և պիեսի կոնտեքստի հիման վրա։

— Պարզիր՝ ով ես, ինչ է եղել քեզ հետ, ինչ ես ուզում, ինչն է քեզ խանգարում, ինչ պիտի անես...

Այս էր հոգեբանական թատրոնի, Գուլակյանի խոսքով ասած, բայց էության գործելու սկզբունքը: Սա Ստանիսլավսկու մշակած համակարգի ամենահակիրճ ամփոփումն է մի անչափ կարևոր հավելումով, որ գարգացված չէ «սիստեմի»¹ բազում մեկնություններում, ներառյալ ամերիկյանն ու անգլիականը (Լ. Ստրասբերդ, Ստ. Աղեք, Շ. Կարնիկե, Ռ. Լյուիս, Գ. Ուիլսոն, Ի. Զաբբակ և այլք): Դա դերի կենսագրության հարցն է՝ անցյալը մարդու մեջ: Ստանիսլավսկին ծանոթ չի եղել ՀՀ Վիգոտսկու «Արվեստի հոգեբանությանը», որ դրամայի գլխավոր սկզբունքը բացատրում է անցյալում կատարվածի հիմքով: Այսպես, «Համլետում» վարագույրը բացվելուց առաջ արդեն տեղի է ունեցել մի մեծ ողբերգություն, և գլխավոր գործող անձն այդ բեռնան տակ է: Թատրոնի մարդիկ Մոսկվայում ծանոթ չեն եղել այդ գրքին, որ ամեն գրախանություն կար, և տալիս ու առնում էին Ստանիսլավսկու «սիստեմը»: Մոսկվայում սովորած Գուլակյանը նույնպես ծանոթ չէր դրան: Նա մեզ կարդայ տվեց Ստանիսլավսկու գրքից հինգ գլուխ, որոնցում կենսագրության հարցը չկար: Դա ինքն էր պահանջում որպես դերի վարքագծի ելակետ: Կենսագրությունից ու կյանքից պետք էր բեմ մտնել ոչ թե գրիմանոցից, որպես կենդանի դիակ:

Մենք սկսել էինք ճիշտ աշխատել: Գուլակյանը մեր ձեռքն էր տվել կողմնացույցն ու բանալին, բայց նայած ով վերցրեց: Ամեն գասի հարցնում էր, և ով ինչպես էր պատասխանում, կարեօր չէր, նա շարունակում էր պահանջել: Շատերը նեղվում էին: Ես ուզում էի նրանց հետ համերաշխ լինել և կիսատ էի պատասխանում:

— Մտածելով ես խոսում,— ասաց Գուլակյանը,— բայց ինչի՞ վրա ես կասկածում:

Ես չէի կասկածում: Զէի ուզում գերազանց երևալ, և դա Արմենն էր նկատել: Նա այն համոզումն ուներ, որ «սիստեմով» խաղալ հնարավոր չի և պետք էլ չի: Մի օր էլ

դասից դուրս գալիս սրտնեղած էր Գույակյանի խստապահնջությունից.

— Զի մարսվում, չի մարսվում...

Ես էլ էի սրտնեղում, բայց ինչ էլ յիներ, զգում էի, որ սովորում եմ կարևոր բան՝ «բեմում գործելու գիտությունը»։ Գույակյանն այս խոսքը շատ էր կրկնում, և Ստանիսլավսկու «Դերասանի ինքնին աշխատանքը» մաշվում էր ձեռքիս։ Իսկ յսարանում փորձվող հատվածներն առանձնապես հետաքրքիր չէին։ Ինձ տրվել էր մի դեր Վիկտոր Ռոզովի «Ժամն է բարի» պիեսից, որ խաղացվում էր մեր ուսուական թատրոնում, Արմենն էլ այնտեղ դեր ուներ (Աֆանասի)։ Ինձ տրված դերը՝ Ալեքսեյ, այնտեղ խաղում էր մի տաղանդավոր դերասան՝ Վիկտոր Ֆրունզը։ Գույակյանը խնդիր էր դրել տեսնել և չրնդօրինակել, ելնել, սեփական անձից, գտնել դերի հետ բնդՀանուր մոտիվ։ Դա այն էր, որ պրովինցիալից Մոսկվա եկած երիտասարդը ձախողվել է համալսարանի բնդունելության քննության մեջ, հետ է գնալու, բայց համակրում է մի օրիորդի և գնա՝, թե՝ չգնա... Գույակյանը նկատել էր (նա ի՞նչը չէր նկատում), որ ես շատ եմ զրուցում երկրորդ կուրսեցի Ալիդա Խուդավերդյանի հետ և Աճեմյանի քննությունից կտրվելոց հետո, ուղեկցել էի նրան մինչև Պուշկինի փողոց, որտեղ նրանց տունն էր, և Գույակյանն էլ այդ փողոցում էր ապրում։ Մտքովս չէր անցնում, թե իմ ձախողումն ու Ալիդային տուն ուղեկցելոր բնդՀանուր բան ունի դերի հետ։ Արմենն էր ասում ծիծաղով, և դերն էլ ինձ չէր հետաքրքրում։ Հետագայում հասկացա, որ բեմական վիճակները դերասանի անձից դուրս են, միտում են դեպի Ալլր, և ճշմարիտն այդ է։

Գույակյանի պարտադրած երկրորդ դերը հենց Ալլն էր՝ սովետա-գաղափարարական «Այս աստղերը մերն են» պիեսից՝ պահպանողական պրոֆեսոր Աթանասյանը, որպես թե-

մերժելի դեմք, ինձ համար անհասկանալի, ինչո՞ւ մերժելի
և դրանով էլ անհասկանալի:

— Հովհաննիսյա՞ն, միջանցքում կանգնեցրեց ինձ
Աճեմյանը, — ինչպես ես, գործերդ ինչպե՞ս են, ի՞նչ դեր ես
խաղում:

Ես թվարկեցի իմ երկու դերերը երկու հատվածներում
ու կանգ առա մերժելի Աթանասյանի վրա:

— Զրպարտված մարդ, — ասաց Աճեմյանը:

— Ո՞վ:

— Քո այդ պրոֆեսոր Աթանասյանը: Դրակա՞ն է, թե՞
բացասական, ի՞նչ ես կարծում: Դա պիես չէ, զրպարտու-
թյուն է: Մարդիկ մրցանակներ ստացան դրանով, բայց
միւնույն է: Կարգին պիես չկա՞ր, ի՞նչ է: Ինչո՞վ է մեր-
ժելի այդ... բրր... Աթանասյանը: Ասում է՝ ի՞նչ գործ
ունեք երկնքի աստղերի հետ, ձեռք մի տվեք երկնքի
աստղերին: Ի՞նչ վատ բան է ասում: Էդաբս չլ կասես դե-
կավարիդ:

Ի՞նչ էի ասելու: Գիտեինք, որ Աճեմյանի ու Գուլակ-
յանի հարաբերություններն առանձնապես ջերմ չէին:
Նրանց իրար հետ խոսելիս մեկ անգամ ենք տեսել: Եր-
կուսն չլ մեզ համար անհերքելի հեղինակություն էին: Ես
գգում էի, որ Գուլակյանի մոտ թատերագետ եմ դառնում,
բայց Աճեմյանի մոտ կյանքն ուրախ էր: Աճեմյանի
փորձին հետեւյր վայելք էր, թատրոնը դառնում էր տոն
ու խաղ, ուզում էիր այդ խաղի մեջ ապրել: Արմենի հետ
համեմատում ու քննում էինք առանց հակադրելու: Մտա-
ծում էի, որ ճիշտ կլիներ, եթե երկուսի դասին չլ հնա-
րավոր լիներ մասնակցել: Դա հնարավոր չէր ոչ թե մե-
թողների տարբերության պատճառով, այլ աշխատան-
քային կարգի ու մթնոյորտի:

Երկրորդ կիսամյակի սկզբում Գուլակյանը մի օր հարց
տվեց, թե ի՞նչ պիեսներից կարելի է հատվածներ ընտրել:
Աճեմյանի մոտ փորձում էին հատվածներ «Ատամ-

նաբույժն արևելյանից»: Լավ է, մտածեցի ու ասացի՝
«Պաղտասար աղբար»:

- Ի՞նչ դեր ես ուզում:
- Օգսեն:
- Գնա Բաղդասար աղբոր դասարանը, փաստաբանություն արա: Ուրիշ ո՞վ է ուզում գնալ Բաղդասար աղբոր դասարանը:

Մեր կուրսն աշխատում էր ժամացույցի նման: Ոչ մի բոպե չէր կարելի կորցնել: Բայց երկրորդ կիսամյակում գտնվեց մի ուսանող՝ ստեփանավանցի Շահեն Խարայելյանը, որ խախտում էր այդ կարգը: Գուլակյանը նրան նախանձելի դեր էր տվել՝ Վասկա Պեպել «Հատակում» պիեսից: Շահենը հաճելի բնավորություն ուներ, հումորի գույնում, ամեն ինչ կատակի էր վերածում և սկսել էր բացակայել: Մի օր ասաց.

– Գիտե՞ք, սա ինստիտուտ չի, բարձրագույն կրթություն չի տալիս: Տեխնիկում ա եղել, անունը փոխել են, դարձել ինստիտուտ: Տեսե՞լ եք ավարտողների դիպլոմը: Կա՞ գրված՝ բարձրագույն:

Ոմանք շփոթվեցին: Մյուս օրը Շահենն ինձ ասաց, թե ձեռ է առել: Այսպես էլ չիմացանք նրա բացակայություններն ինչ էին նշանակում: Թվում էր՝ յուրդ չի նայում ինստիտուտին, մանավանդ Սրբուհի Լիսիցյանի շարժման դասերին: Գուլակյանը խիստ խոսեց Շահենի հետ, և՝ ոչ մի արդյունք: Մի օր էլ, Շահենի հերթական բացակայությունից հետո, հարցն այսպես դրեց.

– Ես քեզ տալիս եմ երկու անհարգելի բացակայության իրավունք: Երրորդից չետո չես մտնելու ինստիտուտ: Եթե եկար, չեմ թողնելու: Գիտե՞ս, որ յուրդ եմ ասում:

– Գիտեմ:

– Դե իմացիր:

Շահենը երկու օր եկավ, երրորդ օրը չեկավ:

— Էս մեկ,— ասաց Գուլակյանը:
Շահենը երեք օր եկավ, չորրորդ օրը չեկավ: Գուլակյանը բարձրացրեց մատր, պտտեց.

— Քո յիմիտը վերջացավ:

Տարին ավարտվում էր, պատրաստվում էինք քննության, վերջին փորձին էինք եկել, մյուս օրը քննությունն էր և.... Շահենը չկար: Գուլակյանը յռեց, յռեց, պտտեց շղթայից կախված ժամացույցը և՝

— Շահեն Խորայելյանը խանգարում է մեր աշխատանքը: Ես առաջարկում եմ Հեռացնել նրան ինստիտուտից: Ովքեր համաձայն են, ձեռք բարձրացնեն:

Մենք յուռ ենք:

— *Չլսեցի՞ք:*

Մենք դարձյալ յուռ ենք:

— Ես բոլորիդ դուրս կանեմ: Ինձ էս տեսակ ուսանողություն պետք չի: Բոլորդ վեր կացեք, գնացեք: Թատրոնն էլ են էսպես քանդում, է՛... Գնացեք: Չեզանից ի՞նչ թատրոնի մարդ:

Մենք յուռ ենք, գլուխներս կախ:

— Բարձրացրու ձեռքդ, — ասաց մոտիկ նստածին, — դու էլ, դու էլ, դու էլ, դու էլ... Էդպես: Պահեք ձեռքերը: Միաձայն: Կուրսր որոշեց Հեռացնել Շահեն Խորայելյանին, որովհետև նա տապալում է բնդհանուրի աշխատանքը: Հենրի, գնա, կանչիր ուսումնական մասի վարիչին, Հայտնենք կուրսի որոշումը:

Գնացի, Հայտնեցի, եկավ ուսումնական մասի վարիչ Սուրեն Դանիելյանը, որ մեր ոուս գրականության դասխոսն էր: Գուլակյանը Հայտնեց «կուրսի որոշումը» Շահեն Խորայելյանին Հեռացնելու մասին, ասելով, որ սպասում է Հրամանի: Դանիելյանը յսեց անտարբեր, ուղղեց պենսնեն:

Գուլակյանը կրկնեց իր խոսքը:

— Այո, — պատասխանեց Դանիելյանը և ձեռքը տարավ պենսնեին:

— Սուրեն Իվանիչ, ես յուրջ եմ ասում:

Դանիելյանը գլխով արեց, նայեց հարցական հայացքով
և դուրս էր գնում:

— Լսեք, Սուրեն Իվանիչ,— կանգնեցրեց նրան Գու-
լակյանը, — եթե հրաման չտաք, նշանակություն չունի, ես
նրան դուրս եմ անելու:

Դանիելյանը գնաց, Գուլակյանը դարձավ ինձ.

— Վաղը Շահենի դերը դու կներկայացնես: Տեքստը
գիտես, միզանսցենը գիտես: Փորձ պետք չի: Կարող ես և
փորձել: Ես հանձնաժողովին կհայտնեմ, որ փոխարինում
ես:

Զանգը հնչեց: Բոլորս շփոթված ու ամոթահար դուրս
եկանք:

Հաջորդ օրը քննությունն էր, Շահենը եկավ ուրախ,
գվարթ: Ջենք կարողանում նայել մեր ընկերոջ երեսին:

— Շահե՞ն, — հարցնում եմ զգույշ, — Կարպիչին
տեսա՞ր:

— Հա:

— Հետո...

— Հետո ի՞նչ: Բարեկեց:

Եվ ի՞նչ, մտածեցինք, որ ոչինչ չի եղել, խաղ էր, ան-
ցավ, գնաց: Քնննությունն սկսվել էր, Շահենը սպասում
էր իր մուտքին, ես իմ տեսարանը Սունդուկյանի «Կտա-
կից» խաղացել, դուրս էի եկել: Դուռը կիսաբաց էր, Շա-
հենը դռան մոտ, և ներսից լավեց Գուլակյանի ձայնը.

— Սուրեն Իվանիչ, Շահեն իսրայելյանի հեռացման
հրամանը տվե՞լ եք: Ո՞չ: Դա նշանակություն չունի, նա
հեռացված է: Հատվածը Գորկու «Հատակումից» կներկա-
յացնի Հենրի Հովհաննիսյանը: Խնդրում եմ նկատի ունե-
նալ՝ խաղում է առանց փորձի:

Քննությունից դուրս եկա մեղքի գգացումով: Թվում
էր՝ մենք էինք հեռացրել մեր ընկերոջը, բայց կարգը կարգ
էր: Վեց ժամ անհարգելի բացակայությունը բավական էր

քննության թույլ չտայու համար: Մեր բնկերը երկու անգամ վեց ժամ էր բացակայել: Գուլակյանը դա մեզ հիշեցրեց ու զգուշացրեց.

—Ովքեր չեն ուղում աշխատել, կուղարկենք հանգստի:

Երրորդ ուսումնական տարում չնկատեցինք, թե ինչպես մեր խումբը կազմակերպվում է որպես թատրոն: Յուրաքանչյուր կիսամյակում պետք է ունենայինք մեկ բեմադրություն: Ավարտող ուսանողը պետք է առնվազն հիսուն անգամ բեմ դուրս եկած լիներ հանդիսատեսի առջև, և գերադասելի էր անձանոթ, տոմս գնող հանդիսատեսը: Գուլակյանը չէր դիմում սովորել բառին, ասում էր աշխատանք: Եվ այդ աշխատանքի մեջ ներքաշվեցինք աստիճանաբար, ժամանակի բնթացքում: Աշխատանքի բնթացքը մեզ դարձրեց մասնագետ՝ պրոֆեսիոնալ, և պարզվելու էր, որ աշխատանքն անվճար չէ, քանի որ մեր դեկավարի համոզմամբ, չէր կարող լինել անվճար աշխատանք:

Մեր աշխատանքն սկսվեց երրորդ կուրսի առաջին օրվանից, Սունդուկյանի վերջին գործի՝ «Կտակ» կատակերգության բեմական յուրացումով: Ընտրվել էր բեմական ավանդություն չունեցող պիես, որպեսզի դերասանը նախապաշտպած չլիներ որևէ տպավորությամբ, և ամեն ինչ սկսվեր զրոյական կետից: Բաժանելով դերերը, Գուլակյանը հանձնարարեց բոլորին կարդալ պիեսը ծայրից ծայր:

— Դերասանները սովորություն ունեն, վատ սովորություն,— ասաց,— միայն իրենց գերն են կարդում, ներկայացման մեջ իրենց մուտքից դուրս բան չեն տեսնում: Մենք պիտի տուրք չտանք այդ արհեստավորական սովորությանը:

Սկսվեց պիեսի բնթերցումը սեղանի մոտ:

Ոչ մի խաղ,— ասաց Գուլակյանը:— Կարդում ենք ցածր և անտարբեր, որ հասկանանք գրվածը: Զեր զգացմունքները ձեզ պահեք:

Տարօրինակ էր թվում այդ անտարբեր ու միատոն րնթերգանությունը, և ինքն էլ չէր բացատրում իր պահանջի իմաստը: Հետո հասկացա դրա նպատակը: Պետք է անտարբեր դիրք բռնել տեքստի հանդեպ այնքան ժամանակ, մինչև որ խոսքը կներգործեր ու տրամադրություն կստեղծեր: Պետք չէր ձայնը բարձրացնել, տոնով հարձակվել տեքստի վրա. տոնը պետք է հասունանար: Պետք է սպասել, որ սեփական գիտակցության մեջ ամրակայի ոչ սեփական խոսքը, և նրա հուգական իմաստը ներգործի ինքնին: Սա նշանակում էր շփում գեղարվեստորեն մշակված խոսքի հետ, ինչում պետք էր զգույշ լինել, չընկնել կեղծիքի մեջ:

Նա հանձնարարեց գերն արտագրել տետրի մեկ էջի վրա, ազատ թողնելով ձախ էջը: Այդ էջում պետք է գրանցվեին գործողության արտատեքստային մոտիվները՝ գերի պարտիտուրան, որ հայտնաբերվելու էր րնթերգման ընթացքում աստիճանաբար: Դա կազմված էր լինելու դրդապատճառներից ու խնդիրներից. ինչո՞ւ, ի՞նչ մղումով ես կանգնած ի՞նչ արգելքների առջև: Դերակատարի համար սա լինելու էր այն, ինչ նոտաները երաժիշտի համար: Այսպիսով՝ մոտիվներ ու մղումներ, ոչ թե արտաքին հետեանքների ցուցադրում, որ շփոթվում էր խաղի հետ: Եթե Գուլակյանն ասում էր «ոչ մի խաղ», նկատի ուներ գերի ճիշտ պարտիտուրան, այսինքն՝ արարքների հիմնավորումը հոգեբանորեն, և այստեղից էլ՝ գլխավոր սկզբունքը. ո՞րնէ խոսքի պատճառը՝ ի՞նչ է եղել, որ ինչ լինի: Բեմում չի կարելի որևէ խոսք ասել, եթե հայտնի չէ իրավիճակը: Հետեաբար.

— Չենք խաղում, այլ գործում ենք րստ էության և առաջադրվող հանգամանքների:

Բայց խնդիրն այն է, որ արտատեքստային շերտը տեքստից էր դուրս բերվելու, ուստի տեքստը պետք էր ուշադիր կարդալ: Այսպես էլ ընթերցումը մոտենում էր միջին տոնի, պարզվում էին գործող անձանց փոխհարաբե-

բությունները, և խոսքն սկսում էր կենդանություն ձեռք բերել: Բայց ի հայտ էր գալիս նաև բեմադրված չլինելու պատճառը, որ Գուլակյանը չէր տեսնում, թե՞ չէր ուզում տեսնել: Կատակերգությունն ավարտվում է բարոյախոսությամբ՝ ընդարձակ մի ճառով, և այդ ճառը վիճակված էր Արմենին: Դա Բժշկապետի գերն էր, որ Սունդուկյանը նախատեսել էր Արելյանի համար, և Գուլակյանն էլ այդ պիեսն ընտրել էր նկատի ունենալով Արմենին: Արմենն էլ կարդում էր տեքստը անտարբեր ու ձանձրույթով, բայց թիֆլիսյան խոսվածքի լավ զգացումով.

— Կարդում եմ, հետո ի՞նչ,— ասաց դասից դուրս գայուց հետո, — Հա, կարդում եմ, խաղալու բան չի, հումորի կտոր չկա մեջր: Զէ, ինչ ուզում ես ասա, ես ոեցոնյոր չեմ: Արի դու փորձի, հա՞...

— Ուրեմն ե՞ս եմ ոեցոնյոր:

— Էտ չեմ ասում: Դու լավ ես խոսում, գլուխ կհանես:

Բայց ի՞նչ իմանաս Կարպիչի մտքին ինչ կա:

Կարդում էինք, և զգացվում էր պիեսի նաև ներքին անավարտությունը: Ինձ տրված դերը, թիֆլիսյան ֆրանտ երիտասարդ Մամիկոն Կորիգյան, Փրանսիական սալոնային կատակերգություններից դուրս թռած, ընկած թիֆլիս, վերջին գործողությունում պաշտոնագգեստով: Զէր հրապուրում, առանցք չուներ, նպատակն անորոշ էր: Սա մեծահարուստ հանգուցյալի կողմէ մտերիմն էր, այդքանը և ոչ մի նպատակ, Գուլակյանի խոսքով ասած՝ «գործոն իրնդիր»: Կարդում էինք, մոտիվներ փնտրում: Գուլակյանը լսում էր մեր անհետաքրքիր պատասխանները և կարծես ինքն էլ տարակուսանքի մեջ էր: Ընթերցումը հասել էր մի մակարդակի, որ կարելի էր անվանել խաղ սեղանի մոտ: Անցանք միզանսցենի, բայց Գուլակյանը մի օր հետ դարձավ, կրկնել տվեց մեկ-երկու տեսարան դարձյալ սեղանի մոտ: Երեսում էր, որ տեքստը նրան չի բավարարում և անսպասելիորեն դարձավ ինձ.

— Հենրի, եթե գրականագետ ես...

— Գրականագե՞տ:

— Ես քեզ գրականագետի տեղ եմ դրել, տես ինչ եմ ասում: Էս պիեսը մի քանի վարիանտ ունի: Վերցրու Սունդուկյանի երկերի ակադեմիական հրատարակության երրորդ հատորը, կարդա վարիանտներն ու ծանոթագրությունները, համեմատիր ու դրիր մի ռեֆերատ: Քեզ երկու շաբաթ ժամանակ: Կգրես ու կկարդաս կուրսի համար:

Ես կատարեցի այս հանձնարարությունը և գրածս ռեֆերատը ներկայացրի իրեն:

— Ինձ ինչի՞ ես տալիս: Կարդա, լսենք:

Կարդացի, լսեց ու մի նոր հանձնարարություն տվեց: Պետք էր վարիանտների համեմատության հիման վրա վերանայել բեմադրվելիք տեքստը, հավելումներ ու փոփոխություններ անել: Այդ էլ արեցի: Ընդունեց առանց առարկության և դերակատարներին հանձնարարեց նկատի ունենալ, դերերում փոփոխություններ անել: Բժշկապետի դերը վարիանտներում չկար: Իսկ ո՞վ էր լինելու Մամիկոն Կորիզյանը: Պիեսի ներքին անավարտությունն ամենից ավելի այստեղ է երեսում: Գործող անձանց ցուցակում նշված է՝ «Նադինկայի սիրականը, նշանավոր պաշտոնյա»²: Խոսքերում «սիրականը» երեսում է, իսկ «նշանավոր պաշտոնյայի» նշանավորությունը երեսում է այնքանով, որ ծանոթ է փաստաբանական միջավայրին, և մի տեղում էլ (4-րդ գործողություն) նրան մի գրությամբ գուրս են կանչում, ինչո՞ւ, անհայտ է: Խնդիրը չի երեսում: Նա անելիք չունի և զգուշավոր է: Սեր է խոստովանում հանգուցյալի այրուն և ներկայանում է հուզմունք: Այս դիմակը կազմված է անորոշություններից: Պիեսի ծանոթագրություններում նա անդեմ է. հեղինակը նրա անվան դիմաց դրել է 0³: Ո՞վ է այս գրոյականությունը, «երեսուն տարեկան գեղեցիկ երիտասարդ», նոր տարագի սև ֆրակով, ձեռնոցներով ու գլխարկ-ցիլինդրով, պարանոցին սև փողկապ և շքա-

նշան»⁴: Ներքին մոտիվը հորինելու հենակետ կամ ներկայության արդարացում չի երևում: Միրո խոստովանությունը ես կեղծ համարեցի ու այդ կեղծիքից կառչեցի: Այդ խոսքերը շատ է ասել, բայց հիմա ասում է կտակի սնդուկն ու ծրարը բացելուց անմիջապես առաջ ու խուսափում ներկա գտնվելուց: Անորոշությունը մնում է անորոշություն: Զգիտեի իմ անելիքը: Դերի ուրվագիծն սկսեց նշանակվել, երբ բնթերքումից անդանք բեմ:

— Պլաստիկական վճռի հարց է, — ասաց Գույակյանը, — գտիր բնորոշ ժեստ և մի շարժում, որ հատուկ լինի միայն քեզ, օրինակ՝ օսլայած սպիտակ թևքը վեր բարձրացնելը, թեթև ցուցադրական:

Ես այդ շարժումով մտա և այ ձեռքով թեթևորեն սրեցի բեղիս աջ ծայրը: Գույակյանն ասաց, որ այդ շարժումը չրնդգծեմ ու տեսարանում երեք անգամից ավել չանեմ: Շատ բան պետք չէր, ընդամենն այս շարժումն ու քայլվածքի թեթևությունը: Սա կոչվեց դերի պլաստիկական վճիռ:

— Վճիռ, ոչ թե լուծում: Շատ են ասում կերպարի լուծում: Դա բառի սխալ գործածություն է: Լուծում նշանակում է խնդրի վերացում: Եթե ասում ենք վճիռ, հասկանում ենք դրության հաստատում: Դու քո դրությունը հաստատում ես որևէ նշանով: Դրան ասում ենք պլաստիկական վճիռ:

Պլաստիկական վճիռ հասկացությունն ինձ համար նորություն էր: Ստանիսլավսկու համակարգում այս հարցը չկա: Թատերագիտական որևէ բառարանում չէի գտնելու այս տերմինը: Կերպածեման սկզբունքը Փրանսիական է, բայց Փրանսիական բառարանում էլ չկա:

Պիեսի վարիանտներում որոշ սուր կետեր կային: Այս տեղ ինձ հետաքրքրեց հանգուցյալի կրտսեր եղբայր, կտակի սնդուկի շուրջն աղմուկ բարձրացնող, բոլորի հետ անհաշտ ու բոլորին վրա քշող Սիմոնի դերը՝ շուկայի ու

մելուանի մարդ: Դերերը բաժանված էին, բայց Գույակ-յանն ասել էր, որ ազատ ենք, կարող ենք ընտրել զան-կացած դերը, պատրաստել, զույց տալ, եթե ընդունելի լի-նի, խնդրեմ... Ես պատրաստեցի Սիմոնի դերը վարիանտ-ներից առնված հավելումներով: Արմենին ասացի թող հրաժարվի Բժշկապետի ճառախոս դերից, վերցնի հան-գուցյալի ավագ եղբայր, ժառանգության վրա աչք ունե-ցող Անտոնի դերը՝ զիմզիմով-զամբախովյան տիպի կրթված տեսակը: Փորձեցինք Արմենի հետ, մեզ միացավ Գալյան, որ հանգուցյալի այրու դերն էր պատրաստում: Ես ելնում էի իմ դերի ակնհայտ խնդրից, որ երկու բառի մեջ էր՝ «զանդկի բայնիքը»: Մարդը կտակի սնդուկի բանալին է պահանջում ու փնտրում է ամենուրեք, բոլորի մոտ. «Վո՞ւրդի է զանդկի բայնիքը»: Նա փնտրում է հանգուցյալի կնոջ գարդատուփը.

— Ես ի՞նչ խաբար է, ի՞նչ իս անում ...

Գալյան, որ անտարբեր էր տեքստի հանդեպ, այս խոս-քի վրա բացվեց անսպասելի պայծառությամբ և շարու-նակության մեջ, երբ տեսակ իր զարդատուփն իմ ձեռքին, ձայնը բարձրացրեց՝ «Իմ զո՞ւթին»: Գալյան այս բառով գտավ կերպարային գույնն ու չկորցրեց: Արմենը հիշեց «Գիքորի» բազագ Արտեմին ու տվեց նրան բարեկիրթ ու գուստ տոն: Ես սնդուկի բանալին եմ պահանջում, Ան-տոնը ջանում է զսպել ինձ. «ամութ գիդացի է»: Ես մի բան մտածեցի: Տանը գտա հին բանալիներ, կապոց սար-քեցի, դրի բաճկոնիս գրպանը, ձախ ուսս բարձրացրի, և պլաստիկական գծիոր պատրաստ էր: Մենակ մնալիս բա-նալիները փորձում էի սնդուկի վրա: Տեսարաններ հորի-նեցինք, դրությունից դրություն դուրս բերինք առանց խոսք ավելացնելու: Խաղը մեզ տարավ, չափը կորցրինք ու գտանք, կարգավորեցինք տոնայնությունն ու ոիթմը: Այսպես վերաբեմադրեցինք մեր՝ երեք հոգու տեսարան-ները: Փորձեցինք մի շաբաթից ավել ու մեր աշխատանքի

արդյունքը ներկայացրինք Գուլակյանին։ Նայեց, ոչ մի տեղում չընդհատեց ու յոեց։ Մենք սպասում էինք, ինքը յուռ էր։ Նա մեզ սպասեցրեց, սպասեցրեց ու տվեց իր բարձրագույն գնահատականը.

— Ճիշտ եք գործում։ Դուք կարող եք աշխատել։

Հաջորդ օրը նա սկսեց փորձել ինձ հետ։ Մի քանի անգամ կրկնել տվեց տեսարաններն ու ոչինչ չփոխեց։ Ընդմիջումից հետո՝ նույնը, դարձյալ նույնը և այսպես երեք անգամ հիսուն րոպե, բնդմիջում, ու հասանք չորրորդ հսուն րոպեին։ Մտածեց, որ հոգնեցրել է ու հարցրեց.

— Մեջդ հարաբեյթ մնա՞ց։ Կարո՞ղ ես նորից։ Աչքիս առաջ նիհարում ես։ Եթե կարող ես նորից…

Եվ դարձյալ կրկնեցինք տեսարանները մինչև զանգր տայր։ Ես չէի հոգնում։ Իմ խաղալին կիրքը բավարարված էր։ Հաջորդ օրը փորձում էինք երրորդ՝ ամենահետաքրքիր գործողությունը և սնդուկի բացման տեսարանը։ Գուլակյանը չէր բնդհատում ոչ մեկիս։ Փորձն ուղղակի վայելք էր, ու յսեցի Գուլակյանի գոհունակության ձայնը.

— Ցնային դաստիարակություն ստացած տղա ու ի՞նչ կոիվ ա անում, չ’…

Այս խոսքն ինձ վստահություն ներշնչեց։ Արդեն անցել էինք բեմ, վերադարձել նախորդ տեսարաններին, Գուլակյանն բնդհատեց Արմենին ու դարձավ ինձ։

— Էստեղ մեկն էլ պիտի լինի, որ չերևա, բայց ներկայությունն զգացվի։ Անտոնի խոսքում հիշեցումը կա՝ «տերտերնիրը»։ Մենք մի տերտերով կբավարարվենք։ Հենրի, գնա, բեմի խորքից աղոթք կարդա։ Աղոթքը կասես, կգաս, դերդ կշարունակես։ Զայնդ խորքից պիտի գա։ Հանդիսատեսր պիտի չիմանա, որ սա կոիվ անողի ձենն ա։

Քահանայի դերն ինձ տրամադրեց։ Հրաշալի վիճակ՝ ներկա ես ու չես տեսնվում։ Սիմոնի դերում աղմկելուց, իրարանցում ստեղծելուց հետո անցնում եմ Տերունական

աղոթքին բեմի խորքում, մխիթարական մի ճառ ասում, ապա մտնում բեմ անիծելով հանգուցյալին:

Սիմոն. ԱՇ գոռքեգոռ րիս: Էլ ախպերութին չկա աշխրքումր:

Արմենը տեսավ, որ նախորդ տեսարանում ասված խոսքերն այստեղ պիտի ասվեն:

Անտոն. Չիս ամաչո՞ւմ: Հայա լավ է, տերտերն իրան բանը պրծավ, գնաց:

Արմենը բեմում հնարամիտ էր, անմիջապես զգում էր դրության փոփոխությունը, գտնում քայլը, դիմացինին մղում ստեղծաբանության: Նրա հետ լավ էր խաղացվում: Եվ այսպես փորձից փորձ ու ներկայացումից ներկայացում կենդանանում ու գունավորվում էր Սունդուկյանի անավարտ կատակերգությունը բեմադրողի ու մեր՝ ուսանողներիս հնարներով: Դա համրնթաց վիճակ էր, կատարյալ ուեժիսուրա: Սիմոնի դերն իմ վայելքն էր: Մայրս տեսել էր ներկայացումն ու ինձ չէր ճանաչել: «Դու ինչո՞ւ չէիր խաղում», ասաց ու զարմացավ՝ «ո՞նց թե...»: Բայց ես բնդամենը երկու ելույթ ունեցա այս դերում: Մամիկոն Կորիգյանի վիճակը բարդացել էր: Կրկնորդս չկարողացավ գլուխ հանել, զրոյով իրեն զրոյացրեց, ուրիշ մեկը չկար (եթե Շահենը հեռացված չլիներ), և այդ դերը կապվեց իմ անվան հետ, ցավոք: Արմենը հավանում էր: Գույակյանից մի անգամ լսեցի իմիջիալլոց, հարեւանցիորեն ասված «լավ» բառը: Ես այդ դերին տվել էի գուցե հարմար, սաւլոնային կերպարանք, բայց դա ինձ ոչինչ չէր տալիս: Շատ էինք խաղում այս պիեսը, և ներկայացումից դուրս էի գալիս անտրամադիր, ասես մի բան կորցրած, ի՞նչ, չգիտեի կամ չէի ուզում խոստովանել: Զէի ուզում անտարբեր լինել դերի հանդեպ ու մտքով կառչում էի հետաքրքիր երևացող պահերից: Դրանք միջանկյալ պահերն էին, ընդամենը պահեր, որ երբեմն հետաքրքիր էին դառնում: Արմենն ասում էր, որ դա սովորական բան է բոլոր

դերասանների համար. բոլորն էլ ավելի շատ խաղում են չուզած դերեր և շատ քիչ իրենց ուզածը։ Պետք էր բնդունել, որ դա բնական է, ոչ մի դերասան ազատ չէ իր բնտրության մեջ, բայց ազատ է իր դերից հրաժարվելու իրավունքով։

Ինստիտուտում անհասկանալիորեն անազատ էին կուրսերի ղեկավարները, եթե իրենք չէին բնտրում իրենց ուսանողներին։ Գուլակյանը ստիպված էր մի բան մտածել մեր խումբն ուղարկված հայերեն չիմացող Թամարա Ղաղորյանի համար և ի՞նչ լեզվով։

— Հայերեն չգիտի, թող ֆրանսերեն խոսի։

Միայն Գուլակյանը կարող էր այսպես սրամտել։ Բայց այս խոսքը վերածվեց խնդրի ու գտնվեց դրա արդարացումը։ Եթե հանգուցյալի այրին հոգեհանգստից հետո համբուրգում էր իր տարիածուի՝ Մամիկոնի հետ ու ասում, թե ուզում է «Պարիժումն ապրի», ուրեմն նա պիտի ունենա ֆրանսուհի դերձակուհի, և Թամարան թող ֆրանսերեն սովորի, хотя бы два слова։ Բայց աղջիկը հազիվ սովորեց չորս տառ՝ oh lala, և ի՞նչն էր պակասում, որ նա դառնար ֆրանսուհի։

— Թող մեկը սրա հետ ֆրանսերեն խոսի, — ասաց Գուլակյանը։ Բեմում դու ես, Հենրի։ Որ ուզենաս, բառարան կարդացող մարդ ես, կգտնես երկու-երեք բառ՝ կոմպլի-մենտի խոսք։

Խաղային մոտիվ էր ստեղծվում։ Հիշեցի ֆրանսերենի մի ուսուցչի, որին երկու ժամ լսել էի դպրոցում։ Նա մեզ համար դասագրքից կարդացել էր տողեր Անատոլ Ֆրանսի մի պատմվածքից, այնքան գեղեցիկ, որ անգիր էի արել առանց հասկանալու, և հնչում էր ականջիս։ Այդ հասկացված բառերով էլ դիմավորեցի դերձակուհու մուտքը, նա ասաց իր օլայան զվարժածայն, և ստացվեց մի հաճոյախոսություն զրոյական Մամիկոն Կորիզյանի կողմից։

— Կարելի է,— Հավանություն տվեց Գույակյանն ու Հարգրեց,— ասած Հասկանո՞ւմ ես:

Մտածեցի, որ ավելի յափ է հասկանայով խոսել: Պետք Աղամյանի նամակներում գտա Հիացական խոսքերը մի անփորձ դերասանուհու մասին՝ «ուզածին պես belle et picante, avec disposition tres dramaticue»⁵:

Արտասանության սիրայիր տոնր թեթևակի գույն հաղորդեց ինքնահիացող զրոյականությանը: Հանդիսականը դա բնկայեց որպես սիրաբանություն: Պարզվեց, որ օյայան ասում է, թե այստեղ ինչ-որ ինտիմություն կա: Եվ այս է թատրոնը: Բեմում ոչինչ չի կատարվում, ինչ որ կատարվում է, կատարվում է Հանդիսարահում: Սա միջանկյալ մոտիվ էր ներկայացման մեջ, որ կարելի էր հետաքրքիր դարձնել, եթե խաղընկերուհիս մի քիչ մտածել կարողանար:

Այս բեմադրության մեջ ես ունեի մի էպիզոդ, որ նշանակություն ստացավ ինձ Համար մի քանի իմաստներով: Դա անխոս ու անանուն մի դեմք էր, որով վերջնականապես պարզելու էի, թե ինչից է սկսվում դերասանի արվեստը, տեքստայի հիմքով, թե՝ կան այլ Հանդամանքներ ավելի կարևոր:

— Կարողացեք յոել,— ասում էր Գույակյանը: — Եթե յոել չգիտեք, ձեր խոսելն ավելորդ է, ձեր խոսքն իմաստ չի ունենա:

«Կտակի» երրորդ գործողությունում, երբ դատական կատարածուի ձեռքով բացվում է Հարուստ Հանգուցյալի կտակը, տեսարանում նշված են երկու անորոշ անձինք՝ «երկու վկա՝ 40-50 տարեկան, եվրոպական Հագուստներով»⁶: Սրանք գալիս են դատական կատարածուի հետ, ներկա գտնվում կնքված սնդուկի ու նրանում պահված ծրարի բացմանը, ստորագրում կազմված արձանագրությունը և Հեռանում: Նրանցից մեկն արտասանում է մեկ նախադասություն, մյուսը լուռ հրաժեշտ տալով գնում է:

Ովքե՞ր էին ներկայացնելու այս անխոս դերերը, երբ բուրուս զբաղված էինք:

— Նրանք, ովքեր ազատ են այս տեսարանում,— որոշեց, Գուլակյանը:

Ազատ էի ես, որ դրսում էի Մամիկոնի դերով, և Օթար Տեր-Հովհաննիսյանը Բժշկապետի դերով, որ մեծ տեսարան ուներ չորրորդ գործողությունում: Պետք էր փոխել արտաքինը, գալ, կանգնել, ստորագրել, գնալ:

— Էնպես եք անելու, որ հանդիսատեսր ձեզ չճանաչի:
Ես հիշեցի մեզանից առաջ ավարտած կուրսի «Ոչխարի աղբյուրը» (որի հանդիսատեսն էր գահիճում մեր կողքին նստած Արամ Խաչատրյանը): Այստեղ կոմանդոր Ֆերնանդո Գոմեսի սպանությունից հետո գործը քննող դատավորի դերակատար Լևոն Թուխիկյանը նախորդ գործողությունում կոմանդորի դերակատարն էր, և ոչ ոք դա չնկատեց: Դա սոսկ արտաքինը փոխելը չէր:

Բեմում չկա ավելի հեշտ բան, քան արտաքուստ անձանաչելի դառնայր: Ես փոխեցի իմ արտաքինն ամենակոպիտ եղանակով: Հիմնական դերի՝ Մամիկոնի սալոնային արտաքինը, որ մշակել էի հոգատարությամբ՝ բեղերից մինչև կոշիկների ծայրը, ջնջեցի ու ծպովեցի ճերմակած բեղերով, նոսր պարիկով, հնամաշ, գունաթափ ուղինգոտով ու մի եզրափոր գլխարկով: Պնամոյից մնացին օսյայած օձիքն ու թիթեռնիկ փողկապր, որպես նշաններ կրթվածության ու ինքնահարդանքի: Եվ այսպես, մտանք «երկու վկաներս», կանգնեցինք, սպասեցինք, ստորագրեցինք, դուրս եկանք ու վերականգնեցինք մեր նախկին վայելուչ արտաքինը:

— Երեսը ներկելով, շորր փոխելով մարդը չի փոխվում,— ասաց Գուլակյանը:— Դուք ձեր խնդիրը պիտի փոխեք, մտադրությունը: Կենսագրություն պիտի ունենաք և էստեղ գալու պատճառ, շատ էլ՝ թե խոսք չունեք. դա ոչինչ չի նշանակում:

**Փորձը կրկնվեց հաջորդ օրը։ Արդյունքը նույնն էր։
Մյուս օրը դարձյալ նույնը։**

— Դու նույն մարդն ես, սիրելիս, — ասաց, — ներսումդ բան չի փոխվել։ Պարզիր՝ ով ես, ինչ տեղից ես գալիս, ինչ շահով։

Տեսականորեն պարզ, անվիճելի պահանջ էր դրվում, բայց ինչպես իրականացնել, ի՞նչ խոսքից ենելով։ Գործող անձանցից ոչ մեկը չի նկատում այս մարդկանց ներկայությունը, խոսք չի ուղղվում նրանց, բացի դատական կատարածուի մեկ ֆրազից՝ «Համեցեք, պարուն վկեք», մեկ էլ վերջում՝ «դուք ազատ եք»։ Իսկ այն միակ հրաժեշտի խոսքը, որ արտասանում էր բնկերս, ինձ ոչինչ չէր ասում։ Չեր պարզվում այս անխոս մարդկանց ով լինելու։ Նրանց ներկայությունը մնում էր դատարկ։ Պիեսի կոնտեքստից պետք էր կուաչել որևէ բան՝ բեմական արդարացում։

Պատճառը պետք էր հորինել, թե գտնելու կամ հորինելու համար միակ հիմքը, թվում էր, ներկա իրադրությունն է և մարդուն տրված կոչումը՝ վկա։

— Որտեղից են գտել, բերել էս մարդկանց։

— ...՝

— Ես հուշում եմ, ու՞մ հետ են եկել։

Դատական կատարածուի հետ եկած մարդու որտեղից կարող էր գալ։ Պարզ է՝ դատարանից։ Բայց ի՞նչ աստիճանի ու վիճակի մարդ է, որ հանձն է առել այսքան նվաստ մի պարտականություն։ Ես փնտրում էի հասարակական սանդուղքի մի աստիճան, թերևս ամենացածրը դատարավական հաստատությունների շուրջը, և այդ աստիճանը չկար։ Իմ անխոս հերոսը կյանքից դուրս մնացած մարդ էր լինելու։

— Որտեղ էիր մինչև էստեղ գալու։

— Դատարանի դռանը, — ասացի առանց մտածելու։

— Ի՞նչ գործի էիր էնտեղ։

— Ոչ մի գործի։

— Էնտեղ պարապ մարդ՝ ինչքան ուզես, մեկն էլ դու:
Պարապ ես եղել, պարապ մարդու գործ են տվել՝ վկա:

Դերի կենսագրության ծայրը բացվում էր:

Այստեղ հարկ է վերջիշել ու վերաձևակերպել ոռուս բանաստեղծ Մաքսիմիլիան Վոլոշինի հայտնի խոսքը: «Մեր «ես»-ը մի փաթեթ է, և գիտակցության կայծը լուսավորում է այդ հսկայական փաթեթի վերջին տողերը»⁷: Այո՛, բոլոր կենսագրությունները հորինվում են մարդու կյանքի այն կետից, ուր նրան հանդիպում ենք: Բոլոր կենսագրությունները հետադարձ անդրադարձումներ են (ռետրոսպեկցիա): Այս մարդու հետ իմ հանդիպման կետն այս սենյա՞կն էր, ուր մի մնդուկ էր բացվելու, թե՞ մինչ այդ՝ դրսում, դատարանի դռանը...

— Գրիմին ու հագուստին դեմ չեմ,— ասաց Գույակյանը, — կարող ես էդպես էլ թողնել, բայց նախ և առաջ՝ դերի կյանքը բեմից գուրս մուտքից առաջ: Սկսում ես պատճառից ու նպատակից, որ տեսնես հեռանկարը:

Անձանաչելի դառնայու պարզունակ խնդրով՝ գրիմով ու հագուստով, ես պատահաբար մոտեցել էի այդ կետին, և «դատարան» բառը հուշեց ինչ-որ բան: Ես գտել էի արտաքին նշաններ, բայց ոչ նշանակյալը: Գրիմանոցի մեծ հայելում, մի քիչ հեռվից, ուշադրություն դարձրի կոշիկներիս: Ինչո՞ւ են կոշիկներս նոր ու փայլուն: Մարդու սոցիալական վիճակը բնութագրող այս նշանի հետ կարծես համատեղելի էին օպերած օձիքն ու փայլուն թիթեռնիկփողկապը: Այս նշաններն առանց ներքին ձեր չարժեին ավելին, քան «զատկի ձվի կճեպ», ինչպես ասում էր Գույակյանը, երբ հանդիպում էր արտաքին ձեւացումների: Ենթագիտակցությունն այնուամենայնիվ, ինձ հուշում էր, թե կոշիկների ու փողկապի անհամատեղելիությունն ավելի ճիշտ է, բայց ինչո՞ւ, ի՞նչ ասելու համար:

Մի բան սկզբում տարօրինակ էր: Գույակյանը հետապնդում էր այս անխոս պարոններից մեկին միայն՝ ինձ:

Մյուսին թողել էր՝ ինչ ուզում է անի, անդեմ ու անհայտ իր միակ նախադասությամբ, և ասում էր՝ «խոսքդ յավ ասա»:

Քանի դեռ փորձը յսարանում էր, առանց գրիմի ու զգեստի, խոսք չկար անխոս վկայի կենսագրության ու վիճակի մասին: Այդ հարցը ծագեց բեմում, երբ ասպարեզ բերվեցին արտաքին նշանները, այն է՝ կենսագրության վերջին տողերը: Գուշակյանին սկսեց հետաքրքրել անխոս վիճակից կենսագրություն ու կյանք դուրս բերելու, փոքր դերը մեծացնելու խնդիրը:

Այս մասին մտածել եմ հետագայում և հիմա եմ գտնում բացատրությունը վաթսունչորս տարի առաջ արշածի:

Արտաքին նշանները, եթե կոնկրետ են, կարող են հանգեցնել դերի կենսագրության ու վարքագծի մանրամասներին: Անձի արտաքինը նույնպես գործողության պայման է՝ իրական կամ անիրական: Եթե ֆրանսիական բեմական դպրոցին նայենք, պետք է իմաստ հորինենք՝ համապատասխան գտնված կաղապարի, որ նշանակում է սկսել հակառակ ծայրից: Բայց մեր դավանանքը ոռւսական դպրոցն էր, և Գուշակյանը դրա ծրագրված հետևորդը: Հակառակ ծայրից գալով, կարելի էր հետևանքներ ձևացնել, հանգել ինչ-որ կրկնատիպերի, որ բացառված էր: Իսկ եթե արտաքին նշաններն իմաստ են հուշում կամ մղում են ներքին ձևի գգացողությանը... Ստանիսլավսկին դեմ չի եղել այս եղանակին գործնականում, բայց, որպես տեսական սկզբունք, ուղղակի շրջանցել է: Գուշակյանի համար սա հինգ մատի պես պարզ էր, անվիճելի, բայց, ի հետևողություն պաշտոնապես րնդունված սկզբունքի, չէր հայտարարվում, երբեմն ակնարկվում էր: Եթե ներքին խնդիրները (կամ կամքի առանցքը) հիմնավոր էին երեսում, նա դնում էր, իր բառերով ասած, պլաստիկական վճռի հարցը և երբեմն ինքը թելաղբում էր որևէ արտաքին նշան: Իսկ

Երբ արտաքին նշանը, թեկուզ և շատ հետաքրքիր ու սուր, տեսնում էր պատրաստի ու ավարտված, կանխում էր.

— Պատճառը, սիրելիս, պատճառը պարզիր:

Ինչ-որ բան պարզելուց հետո, հաջող կամ անհաջող, մարդը վերագառնում էր դարձյալ նախկինին ու տարակուսում, թե ինչո՞ւ սկզբում չէր կարելի այդ, և հիմա կարելի է: Գուլակյանն ինչ-որ մանրամասներ սրբագրում էր այդ «վերջին տողերում», հաճախ կրծատում, քիչ բան էր թողնում, երբեմն կարծես ձևականորեն, ցույց տայու համար, որ ներքին գծով ենք գնում, հետևանքներ ձևացնելը բացառված է: Բոլոր կարգի պատճառները, նաև՝ բարոյագաղափարական (որոնց շուրջն ընդունված էր խոսել ու շեղվել), նա հանգեցնում էր հոգեբանական վարքագծին ու կամային նշաններին, հարցը ծայրագույնս պարզեցնելով, բեմ մտնողն ըստ էությա՞ն է գործում, թե ոչ: Դրդիչները պետք է պարզ լինեին, կոնկրետ, գիտակցված, և այստեղ նա, իհարկե, ծայրահեղ էր. բնագդի մասին ոչ մի խոսք.

— Բնագդս ո՞րն է. Դա հիմնավորում չի, պատասխան չի: Ամեն ինչ բեմում պատճառ ունի և նպատակ մտածված ու ձևակերպված.

Եվ այսպես, մտածելով ու ձևակերպելով բոլոր պատճառներն ու հիմնավորումները, նայում էի գրիմանոցի մեծ հայելուն: Դիմացս մի խեղճ ու անհեթեթ մարդ էր մտավորականի արժանապատվության նշաններով: Եթե դատարանից է գալիս, իրավունքի ու օրենքի մարդ է լինելու, տուժած, ձախողակ, թերես գործ չունեցող մի փաստաբան: Կյանքից դուրս մնացած մարդուն ի՞նչ է պետք, մի բան, որ իրեն արժեք տա իր սեփական աչքում և նշանակություն միջավայրի աչքում: Ահա պատճառ, և ահա խնդիր: Դատական կատարածու ոմն Խնձուրյան ասել է, թե՝ «արի հետս, հարուստ կտակ է բացվելու, վկա եղիր»: Հրաշալի է: Ոչինչ այլես անորոշ չէր ինձ համար: Ոչ մի խոսք պետք չէր: Եթե վիճակը պարզ է, ըստ պատճառի ու

նպատակի, խոսք լինի, թե ոչ, միւնույն է։ Այս վիճակը հազար անգամ հետաքրքիր էր, քան բեղերը սրած թիֆ-լիսյան ֆատր՝ Մամիկոն Կորիգյան կոչված, որի կորիգը չէի տեսնում, կեղևն էի միայն տեսնում կնամոյ, պճնամոյ և աննպատակ, Փրանսիական սալոնային վոդկիլներից ընկած հայոց բեմ։ Մամիկոնի թատերական շտամպը կրկնված ու հայտնի էր։ Իսկ անխոս վկան չուներ այդ և միտք էր տալիս, իրադրություն էր հուշում և պահվածք իրադրության մեջ։

Ես այնքան ներշնչվեցի այս անխոս ստվերով, որ սկսեցի հավատալ նրա իրական գոյությանը, և մուտքից առաջ սիրտս անհանգստացավ, գգացի այն, ինչ պետք էր՝ կենտրոնական համակարգի գրգռված վիճակ։ Հիանալի է, եթե հուզված ես և խոսք չունես։ Ի՞նչ է արվելու, եթե ոչ գսպվելու է անհանգստությունը։ Ինչպե՞ս։ Հանդերձարանում գտա հին, մաշված, կիսաճտքավոր կոշիկներ, ոտքիս մեծ։ Կոշիկների մեծությունն ինձ օգնեց. քայլվածքս դարձավ անհամարձակ, և պահեցի այդ վիճակը։ Անհամարձակ քայլվածքի պատճառը ֆիզիկական էր, և դա առաջ բերեց անհարմարության գգացում։ Դրանով ամրապնդվեց իմ մեջ այն միտքը, թե ի՞նչ փոքր, ի՞նչ աննշան մարդ է այս անձը, որ կոչվում է Վկա։ Ներշնչվեցի այդ մտքով և անհամարձակ ու անհամաշափ քայլով բեմ մտա, գլխի գուսապ շարժումով, հարգալից բարեեցի մարդկանց։ Ոչ մի ուշադրություն, ոչ մի պատասխան, և ինձ համար պատրաստ էր նոր իրադրություն ու նոր պայման։ Իմ բարեր նախատեսված չէր. ոչ մեկին չէր ասված, թե կարելի է պատասխանել այս անծանոթի բարեկին։ Ես կրկնեցի իմ գլխի շարժումն ավելի գուսապ և ակամա կես քայլ հետ գնացի, ոտքս ուզեցի առաջ դնել ու հետ դրեցի, մնացի այդպես դռան մոտ կանգնած։ Այս դիրքն ինձ հիշեցրեց, որ այստեղ ես ամենավերջին մարդն եմ, ու մտքումս ծնվեց դրա հակագդումը՝ իսկ ինչո՞ւ…։ Այս հակագդումը պետք

է արտահայտվեր որևէ կերպ՝ որևէ տեսանելի նշանով ի պատասխան դրության: Իսկ դրությունը շփոթվածությունն է՝ մի բան, որ անչափ դժվար է ներկայացնել, ձևացնել հնարավոր չէ, պետք է գտնվի շփոթմունքը հաղթահարելու արտաքին կերպը, և շփոթվածի տեսքը պատրաստ է:

— Վիճակը չեն խաղում, — քանիցս ասել էր ու կրկնում էր Գույակյանը, — վիճակը հաղթահարում են:

Ինչպես պետք էր հաղթահարել շփոթմունքը: Պետք էր ցույց տալ հակառակը, այսինքն՝ ամենակին շփոթված չեմ: Շփոթմունքի նշանն արդեն ցույց էի տվել: Դա այն կարեւոր կես քայլն էր ի հետևանք անպատասխան բարեի: Կես քայլից ավել թերևս չէր կարելի, քանի որ անկոչ չէի, եկել էի պաշտոնական գործով և պաշտոնյայի հետ: Հետևաբար, անկարեւոր չէի և մտքումս իմ գերն այդ գործում որոշեցի համարել շատ կարելոր: Իմ մեջ գլուխ բարձրացրեց իմ կարեւորության գիտակցությունն ի հակազդումն վիրավորված արժանապատվության: Եվ ումի՞ց ու ինչի՞ց էի վիրավորված, ինձ չբարեւող անծանոթների՞ց, թե՞ կյանքից ու իմ վիճակից առհասարակ: Այդպես էլ որոշեցի, ես վիրավորված եմ, զսպում եմ ինձ, այդպես է պետք, ու մնացի տեղումս կանգնած, զուսպ ու արժանավայել դիրքով, գլխարկը ձեռքիս, որպես շատ կարեւոր անձ, առանց որի նախատեսվող ակտը տեղի ունենալ չի կարող, այո՛, այլապես ինչո՞ւ են ինձ հրավիրել: Այս էր իմ անխոս վիճակի բեմական արդարացումը, որպես ներքին ձեի հիմք: Իսկ պայմանական կարեւորն այն էր, որ իրադրության մեջ անկարեւոր էի, և այդ անկարեւորությունն էր ինձ ստիպում կարեւոր ներկայանալ: Իմ գերի ներքին գործողության ամբողջ բովանդակությունը դրան էր հանգում: Ոչ ոք իմ կողմը չէր նայում, և դա ես ընդունում էի որպես խաղային պայման ու կանգնած էի նույն դիրքում, հայացքս վեր՝ առաստաղի անորոշ մի կետի, սրտումս խորին վիրա-

վորանք «որպես թե...», այսինքն՝ մեծագույն բավականություն, որ դատարկ չեմ բեմում. խոսք չունեմ, բայց մտքումս, օ՛, իմ ճակատագիրն ու ներկա աննշան վիճակը: Սա նշանակում էր արդեն առանձին թեմա, որ ոչ ոք չէր նկատում ու չէր կարող նկատել, բացի հանդիսականից, քանզի նրան էի նախատեսում:

Բեմում սպասողական պահ է: Դատական կատարածուն (Աեքսանդր Քոչարյան) կազմում է արձանագրությունը, բոլոր յուռ, սպասում են, ես նույնպես հայացքս առաստաղին: «Պրծա», — ասում է կատարածուն, և այս բառի հետ հայացքս իջեցնում եմ առաստաղից: Արձանագրությունը կարդացվում է: Ես յսում եմ ծանոթ բառեր, որոնցից ո՞չ օգուտ ունեմ, ո՞չ վնաս: Բայց ես ունեմ իմ ներքին խարիսխը, որ իմ արժանապատվությունն է, և ջանում եմ ոչ մի պահ չմոռանայ այդ այս հարուստ և օտար տանը, կուշտ ու հագնված մարդկանց միջավայրում: Այսպես մտածելով, ես յսում եմ արձանագրության բնթերցումը տեղյակ մարդու նման, որպես թե ես եմ գրել կամ թերգրել. միենույնն է՝ ծանոթ է, ինքս էլ շատ եմ կազմել նման գրություններ:

Գործողությունը շարունակվում է, և անխոս վկային ինքնին թերգրվում են վարքագծի պայմաններ: Այսպես. կտակի սնդուկը բացելուց առաջ դատական կատարածուն մոտ է հրավիրում բոլորին: Ես մոտենում եմ գգույշ քայլերով, երկյուղած, հանդիսավոր ու քաղաքավարի, մտքումս խոսքեր՝ «Ես չեմ խանգարի, միայն տեսնեմ...»: Կատարածուն հանում է սնդուկի մոհյուրը, պարզում առաջին վկային, հետո ինձ: Ես վերցնում եմ մոհյուրը հաճույքով և աչքերիս մոտեցնելով ու հեռացնելով, շրջանաձև, պտտելով, կարդում եմ տառերը և հանձնում եմ կատարածուին, հայացքումս հավանության նշան՝ «այո՛, ճիշտ է, կեղծիք չկա»: Ի՞նչ է խոսվում շուրջս, չեմ լսում, ինձ չի վերաբերում, ես գործ ունեմ միայն թղթերի,

ստորագրությունների ու կնիքների հետ և սպասում եմ անվերաբերմունք, որպես պաշտոնական պարտականություն: Բազվող սնդուկից դուրս բերվող ծրարը հանձնվում է հանգուցյալի եղբօր գերակատար Արմեն Զիգարիսանյանին: Լուռ, լարված վիճակ է, բոլորի հայացքներն ուղղված են Արմենին: Ես, որպես թե գործ չունեմ, անշարժ ու անիմաստ նայում եմ վեր, անորոշ մի կետի: Արմենը բացում է ծրարը, ուզում է կարդալ և հապաղում է: Բոլորն սպասում են:

- Ինձ գումարն ասեք, – հիշեցնում է կատարածուն:
- Էրկու միլիոն մանեթ, – գանդաղ կարդում է Արմենը:
- Ուշ... – գարմանքի ու հիացումի հոգոց են արձակում բոլորը:

Դա ինձ չի՝ վերաբերում: Ես հայացքս իջեցնում եմ, ասել է՝ ինձանից շատ հեռու է երկու միլիոնը: Ես տիրությամբ եմ ընդունում մեծ գումարի լուրը: Գլուխս կախ շրջվում եմ, գնում, կանգնում իմ նախկին տեղում, նախկին արժանավայել դիրքով, որպես թե ոչ մի միլիոն ինձ չի գարմացնում, շատ եմ տեսել:

Վիճակի այս պայմանին հաջորդում է մյուս պայմանը արձանագրության ստորագրումը: Առաջին վկան ստորագրում է արագ, առանց թուղթը կարդայու, և դրանով ինձ որոշ գարմանքի պայման է տրվում: Տարակուսած նայում եմ նրան, որպես թե՝ «կարելի» է ստորագրել մի թուղթ առանց կարդայու»: Այս մտքով մոտենում եմ բեմի աջ անկյունում դրված փոքրիկ, կլոր սեղանին, նստում, վերցնում գրիչն առանձին հաճույքով, ապա շատ արագ, շտապելով, վերից վար աչքի անցկացնելով թուղթը, ստորագրում եմ երկար, առանձին մի բավականությամբ, որպես կյանքի նպատակ, անձի ու արժանապատվության վերջնական, անհերքելի հաստատում: Ստորագրելը դառնում է իմ վարքագծի գլխավոր շեշտը, բարձրակետը գործողության անհատական պարտիտուրում: Ես գրիչը վայր եմ

դնում, հիացած նայում իմ ստորագրությանն ու ոտքի ելնում ինձանից գոհ, բարոյապես բավարարված, մեծ առաքելություն իրականացրած մարդ:

— Պարոններ, դուք ազատ եք, — ասում է կատարածուն:

Առաջին վկան մոտենում է հանգուցյալի այրուն, միխթարանքի խոսք ասում և գնում դեպի դուռը: Ես քաղաքավարությամբ գյուխ տայով, հետեւում եմ նրան...

— Դրան փող տուր,— դահիճից հուշեց Գուլակյանը:

— Պարուն վկա, — շշուկով ինձ է դիմում Արմենը, ես շրջկում եմ իր կողմը, նա ձեռքը ծոցագրպանն է տանում...

Պիեսում այս խոսքը չկա, բեմադրողն էլ չէր նախատեսել, և հորինվեց տեղնուտեղը, պատահաբար, բայց բառ էության, որով ինձ առաջադրվեց նոր պայման: Աննշան մի ծառայության համար աննշան մի մարդու վարձատրում են, և դա նրա համար որպես թե անսպասելի է. «Օ՛, ինչ եք անում, անհարմար է...»: Այս խոսքը մտքումս, ձեռքերի հրաժարական, դիմացինին կանխող ժեստով ես հետ-հետ եմ գնում դեպի դուռը, և գուրս գնում: Արմենը հետեւում է ինձ. «Փող պետք չի՞», — ասում է ու հետ վերադառնում, չգիտեմ դեմքի ինչ արտահայտությամբ, որ պիտի նշանակեր, թե ամեն ինչ կարգին է՝ վկային վարձատրեց: Ես անցնում եմ կույիսների նեղ կիսամութով, գգույշ բարձրանում փայտե ճռացող սանդուղքը, հասնում գրիմանոց շտապ վերականգնելու Մամիկոն Կորիգյանի էլեգանտ արտաքինը:

— Ճիշտ ես գործում, — ասաց Գուլակյանը: — Ես էդ մարդուն ճանաչեցի: Բայց տես, չափը չանցնես, ինչքան գուսապ, էնքան լավ:

Եվ չափն անցավ «բառ էության»: Մի երեկո, սնդուկի բազման տեսարանում, որտեղ թեթև իրարանցում էր ստեղծում հանգուցյալի կրտսեր եղբայր Սիմոնը (Ուբերտ Եղյան), ես որպես թե պատահաբար, ոտքի տակ ընկա, ու

պահը մի ակնթարթ յուսավորվեց յուսանկարիչ Աղասի Կլեկչյանի կայծակով։ Հաջորդ օրն իմանալով «պատահականության» մասին, Գուլակյանը կրկնել տվեց տեսարանը և ասաց «պետք է»։ Պետք էր թերեւ մի ցնցում, որի կրողը լինելու էր գրությունից դուրս մեկը։ Սա նշանակում էր Էպիգոդային կերպարանքը Հրել առաջին գիծ, դարձնել մի պահ գլխավոր, այսինքն՝ տեսարանի շեշտը մի պահ շեղել, գլխավոր թեման և բուն իրադրությունը հետ տանել նորից առաջ բերելու համար։ Այստեղ էպիգոդային դեմքը ոչ միայն արժեքավորվում է ինքնին, այլև դառնում է իրադրությունն իմաստավորող կարևոր տարր։

Թվում էր, թե անխոս գերի բոյոր պայմանները նկատի էին առնված։ Ոչ։ Մնում էր սպիտակ մի կետ, որ այդպես էլ մնաց։ Մոռացված էր մի հանգամանք՝ երկու վկաների հարաբերությունը միմյանց զետ։ ծանո՞թ էին նրանք մեկը մյուսին, թե՞ ոչ։ Դա պետք է երևար որևէ նշանով, որպես երրորդական մոտիվ։ Բեմում ոչինչ անկարևոր չէ։ Մոտիվը կարող է երրորդական լինել րստ իր տեղի ու կշռի, բայց ոչ րստ արժեքի, այնպես, ինչպես նկարում ոչ մի մանրամասն անկարևոր չէ, և տարածության բաց կետերն էլ աչք են ծակում։ Անսովոր աչքը բեմում դա չի նկատում, չի նկատում, որ անձի ներկայությունը, որպես այդպիսին, բավական չէ, նա պիտի իմաստ կրի։

Ընդհանուր մի բան կա անխոս գերի և մնջկատակի արվեստի միջև։ Երկուսն էլ գործում են մենակ և իրենք են իմաստավորում իրենց վիճակը։ Տարբերությունն այն է, որ մնջկատակն ինքն է իրադրություն ստեղծում իր համար և իր շուրջը, մինչդեռ անխոս գերակատարն իր դիրքն ու վարքագիծը որոշում է համաձայն գրական ու բեմադրական կոնտեքստի։ Երկու դեպքում էլ սակայն գործում է նույն օրենքը՝ ուր է ուղղված մարդու կամքը, ինչ ենթադրելի պայման է կրում մարդն իր ներսում, ինչն է շարժում նրան։ Սա մի վիճակ է, որ խոսքային արտա-

Հայտության կարիք չունի, դրությունն ըմբռնելի է ինքնին, և արտաքին բացատրություն չի խնդրում: Բայց այստեղ գործում է ներքին խոսքը, թեկուզ մեկ ֆրազ, բառ կամ բացականչություն: Հանդիսականը չգիտե ինչ է այդ, բայց զգալու է, որ մի բան կա մարդու մտքում, մի ցանկություն, հարց, տարակուսանք, մտահոգություն, բոլոր դեպքերում՝ ինչ-որ իմաստային բեռ. մարդու չի խոսում, բայց կրում է խոսքը:

«Փոքր» կոչվող դերն այսպիսով, փոքր է միայն բեմում զբաղեցնող տեղով ու ժամանակով, խոսքի պակասությամբ կամ բացակայությամբ, ներկայություն փոքր ժամանակի մեջ, բեմի ոչ միշտ, կամ բնավ կենտրոնական կետերում: Բայց այդ «փոքր» կարող է ենթադրվել մեծ՝ իր բեմից դուրս գտնված ենթադրելի վիճակով: Նա ունի իր մեծ կյանքը մուտքից առաջ (սա ամենակարևորն է) և մուտքից հետո՝ ենթադրելի հեռանկարում: Դերասանի երևակայության մեջ (եթե նա ունի երևակայություն) այդ կյանքը նույնքան և ավելի մեծ է, նույնքան և ավելի կարևոր, որքան մեծ դերի կյանքը: Նրա կյանքի ու գրաված տեղի հիմնական մասը դրսում է, որպես ենթադրելի պայման, և բեմ է բերվում շատ փոքր մասը: Եվ քանի որ բեմում բոլոր պայմաններն են ենթադրելի, այս ենթադրելին էլ իր անտեսանելիությամբ յինելու իրավունք ունի, որքան տեսանելի ենթադրելին: Խնդիրն այն է, որ այս անտեսանելին էլ պիտի տեսնվի, և այդտեղ է երևալու դերասանի դերասան լինելը:

Սունդուկյանի անավարտ պիեսի այս անխոս դերը, նախորդ ու հետագա փորձերի հետ միասին, մի ամբողջ դպրոց եղավ ինձ համար: Ես հասկացա՛ ինչ է դրամատուրգիական տեքստում քողարկված, գուցե հեղինակի մտքով էլ չանցած դրությունը, որ կարող է տեսնվել արտատեքստային տարածությունում: Եթե սա գրականագիտություն էր, տեսականորեն գիտակցվելու էր հետո՝ 60-

70-ական թվականներին, Ուոլան Բարտի և Ժակ Դերրիդայի աշխատություններում։ Իսկ եթե թատերագիտություն էր, մտածել էր տայու, թե ինչ է անցումը գրական տեքստից բեմական իրականություն, ինչով է ինքնուրույն գերասանի արվեստը, և որտեղ է թատրոն կոչվող արվեստի գոյահիմքը՝ սուբստանցը։ Դա պետք էր հասկանալ, բայց նայած ով ինչպես։

— Բոլորդ դերասան չեք դառնայու, — ասում էր, — բայց բոլորդ գործ եք ունենալու թատրոնի հետ, չսպես, թե էնպես, մոտիկից, թե հեռվից, և ինչ գործ էլ անեք, պիտի իմանաք բեմում գործելու գիտությունը։ Թատրոնի դռանը կանգնելու, տոմս ստուգելու համար էլ նախ պիտի բեմում եղած լինես, թեկուզ մի գեր խաղացած։ Դրամատուրգը պիտի իր բնափորութամբ դերասան լինի, բեմն իմանա ու միզանսցենր պատկերացնելով գրի։ Սունդուկյանը բեմը գիտեր, Գևորգ Զմշկյանի ընկերն էր, խաղալով թելադրում էր նրան իր պիեսները, հետո էլ գնում, բեմում կավիճով գծում գերակատարների տեղերն ու անցումները։

Մեկ ուրիշ անգամ նա անցրավ «ուեժիսոր» բառին։

— Չկա էդպես բան։ Երեսուն տարի բեմադրելով եմ զբաղված, չգիտեմ ինչ է նշանակում «ուեժիսոր»։ Դերասան պիտի լինես, մի քանի գեր խաղաս ու հետո որոշես խաղալո՞ւ ես, թե հանգամանքներն ու հարաբերություններն ես կարգավորելու։ Մենք էդ ենք սովորում, նայած ով ինչ կանի հետագայում։

Թատերական քննադատության մասին երբեք չէր խոսում։ «Թատերագիտություն» բառը նրանից չլսեցի, բայց մի բան ասաց, որ մտքումս նստեց ու հետո տարա։

— Ես չեմ հավատում իմ չտեսած մեծ դերասանուհու՝ Սիրանույշի մեծությանը, եթե նրա մասին պիտի ասեն «նա հրդեհվում էր բեմում և այրվում անմնացորդ»։ Իսպես կխոսե՞ն։ Թող ասեն՝ ինչ էր անում, իմանամ, մտածեմ, թե չէ այրվելս ո՞րն ա, մնացորդս որը։

Այս սկզբունքով էլ որևէ տեսարան ավարտելուց հետո, յսարանում, թե բեմում, Գուլակյանը քննարկման էր դնում, և բոլորը պարտավոր էին բացատրել՝ ինչն ինչ է ինչ չէ: Արգելված էին «լավ» և «վատ» բառերը, հիացական ու մերժողական էպիտետները: Ոչ մի պարապ զրույց, ոչ մի անառարկա խոսակցություն խնդրի շուրջը: Տեսածը պետք էր բացատրել, և ոչ մեկն ազատ չէր դրանից: Պետք էր իմանալ ամբողջ պիեսը, բոլոր դերերն ու դերակատարներին, գործողության բոլոր պահերը, անկախ նրանից մասնակից ես, թե ոչ: Մարդուն տրվում է մի դեր, թե երկուսը, նշանակություն չունի, պիտի բոլոր դերերը մտքով անցկացնի ու մտածի՝ դերակատարները ճիշտ են գործում, տոնայնությունը, քայլերն ու պլաստիկական վճիռը բատ էությա՞ն են, թե ոչ: Սա յուրջ քննարկում էր, և պարտավոր էիր ունենալ մասնագիտական կարծիք, տայ մասնագիտական բացատրություն, գործածել ճիշտ բառեր, երկար չխոսել, խնդրի շուրջը չպատվել, սկսել հարցի կոնկրետությունից, խոսքեր չծամել:

— Ասա,— դիմեց այն ուսանողին, ում առաջարկում էր սեփական կամքով հեռանալ:

— Ինչոր չի կպնում,— պատասխանեց:

— Սա ի՞նչ բառապաշար է՝ չի կպնում, չի պոկվում: Խոսեք մասնագիտական յեզվով:

Այդ մասնագիտական յեզուն մշակված էր Ստանիսլավ-սկու ուսմունքի հիման վրա, չափանիշների հատակումով, հասկացությունների ու եզրերի ճշգրտումով և այն հայերենով, որ մեր ուսուցիչը բերում էր Ներսիսյան դպրոցից: Պետք էր դատել, ելնելով գրական հիմքից ու ենթադրվող հանդամանքներից, որ պատկերացվելու էին բնթերգման փուլում և իրականացվելու փորձի, ապա ներկայացման բնթացքում: Մրանք աշխատանքի տարբեր փուլեր էին, քննարկվում ու կարգավորվում էին ըստ փուլերի: Առաջին

փուլում սեղանի մոտ, բացատրությունները հետևյալ կետրում էին.

ա) Առաջին խոսքն արտասանելուց առաջ ի՞նչ է կրել գործող անձը:

բ) Խոսքի մեջ կա՞ ներքին խնդիր,

գ) զգացվո՞ւմ է իրադրությունը,

դ) շփումը դիմացինի հետ,

ե) խոսքի մեջ առկա՞ ուշադրության երկրորդ գիծը:

Եվ այսպես, ընթերցման փուլում սկսում էր պատկերացվել խաղն իր ներքուստ փոխպայմանավորված մոտիվներով: Դա խաղի ներքին ձևն էր: Բոլոր դատողություններն լինելու էին այդ ներքին ձևի շուրջ, ոչ թե բարոյագաղաքական ինչ-ինչ արծարծումներ, էմոցիոնալ վճիռներ և այլն, որոնց հանդիպում էի տարբեր հոդվածներում և թատերագիտական կոչվող գրքերում: Ժամանակին, տարբեր օրեր, պատահական թղթերի վրա գրառել, կորցրել եմ ավելի շատ հիշել և չեմ մոռանում: Ինչպե՞ս մոռանայի, երբ խաղը հասունանում էր մտքումս, սեղանի մոտ, և սեղանի մոտ էլ պատկերացվում էր ներկայացումը: Այստեղ էր տեղի ունենում անցումը խոսքից իրադրության, գրական իրականությունից բեմական իրականություն: Երկրորդ քննարկումն սկսվում էր միզանսցենի կառուցումով տեսարան առ տեսարան: Բոլոր պետք է ներկա լինեին ամբողջ ընթացքին, թե իրենց, թե, մյուսների գործելու պահին և մասնագիտորեն բացատրեին, թե ինչն է պահպանվել, ինչը փոխվել միզանսցենի անցնելու պայմաններում: Զափանիշներն այստեղ հանգում էին հետևյալ կետերին որպես նախորդ խոսակցության շարունակություն.

զ) Պահվու՞մ է գործողության ոիթմն ու տոնայնությունը:

է) Գործողության անընդմիջությունը չի՞ խզվում:

ր) Արարքներն ու պլաստիկական վճիռները նպատակաշարմա՞ր են:

թ) Ով ո՞վ է:

ժ) Կա՞ չափ:

Եվ ի՞նչ ասել է ռեժիսուրա, եթե ոչ գործող անձանց փոխարաբերությունների կարգավորումը որպես ամբողջություն և իմաստային ուղղվածություն: Գույակյանից չլսեցինք «մեկնաբանություն» բառը, որ տեղի-անտեղի ծամփում էր քննադատների գրածներում: Այն հասկացություններն ու տերմինները, որոնց դիմում էր Գույակյանը և որոնցով ստիպում մտածել, չեմ գտել թատերագիտական գրականության մեջ և ոչ մի մասնագիտական բառարանում:

Փորձասենյակում մտածվածն ու կառուցվածքը տարվում էր բեմ, և առաջին պահերին ստեղծվում էր անսովոր զիճակ, կարծես ամեն ինչ նորից էր սկսվում: Լույսը, դահլիճի մթությունը և Գույակյանի հեռու նստելն ու չերևալը փոխում էին իրադրությունների գգացումն ու խաղի մթնոլորտը: Բեմադրության մշակված ու ավարտված տեսքը դեռ աշխատանքի ավարտը չէր: Բեմադրությունը պետք է ներկայացնում դառնար հանդիսատեսի մուտքով և անպայման անձանոթ հանդիսատեսի:

— Խաղում եք ձեր ուսանող բնկերների, ծանոթ ու բարեկամի համար: Էդ հաշիվ չի, — ասում էր Գույակյանը: — Քանի դեռ հանդիսատես չի մտել դահլիճ, անձանոթ հանդիսատես, թատրոնից հեռու, չենք իմանա ինչ ենք արել: Հանդիսատեսը եթե տոմսի փող կտա ու կգա իր ապրանքն ուղերու, էն ժամանակ մենք մեզ կճանաչենք:

Այդպես էլ եղավ: Սկսվում էր ինքնաճանաչման ու ինքնաքննադատության երրորդ փուլը, և առնչվում էինք թատրոն կոչվող արվեստի շուկայական արժեքին ու գնին: Մեր մեջ կար այն մարդը, որին Գույակյանը պատրաստում էր անտրեպենյոր: Դա Ռոբերտ Եղյանն էր, որ հետագա-

յում դարձավ Այունիքի թատրոնի տնօրենը։ Ինստիտուտում նա կարգավորում էր գործերը տնտեսական բաժնի վարիչի, գերձականոցի, բեմի բանվորի, լուսարարի, նաև ձևավորող նկարչի հետ։ Հայտնվեց նաև մի իմպրեսարիո, որ կապեր ուներ Երևանի ու Երևանից գուրս գործող ակումբների ու մշակույթի տների հետ։ Ինչ էր նրա շահը, չգիտեինք, բայց տոմսերի վաճառքից ստացված գումարը, որպես մեր վաստակը, հավաքվում էր Գուլակյանի խնայութամարկղային հաշվում։ Եվ այսպես ինստիտուտի հարյուրերեսուն տեղ ունեցող դահլիճը լցվում էր քաղաքի տարբեր ծայրերից եկող հանդիսատեսով, և քննարկումների բովանդակությունը փոխվում էր։

Այստեղ պետք էր հասկանալ, որ բեմադրությունը և ներկայացումը նույն բանը չեն։ Հանդիսատեսը, որ տարբեր խավերից է կազմված, կարող է և՝ բարձրացնել, և՝ փշացնել բեմադրությունը։ Երկու-երեք ներկայացումից հետո, հայտնի բան է, բեմադրությունը կարող է կորուստներ ունենալ։ Գուլակյանը վկայաբերում էր Մոսկվայի գեղարվեստական թատրոնի օրինակը։

— Ստանիսլավսկին ու Նեմիրովիչը ամեն երեկո հետևելու գրառել են պատահական շեղումներն ու կարկատանները (հակլածք) և ներկայացման ավարտից հետո նստել են արտիստական կաֆեում ու քննարկել։ Հաջորդ օրը, փորձից առաջ գերակատարներին հարցրել են պատճառներն ու մեկ առ մեկ ճշտել։ Սա միակ միջոցն է բեմադրությունը քայլայումից զերծ պահելու։ Եթե դա չարվի, բեմադրությունը լիարժեք կյանք չի ունենա ու շատ շուտ կավերվի։

Այսպես ասում էր ու պատասխանատվությունը թողնում մեզ։ Ներկայացումների ժամանակ մենք չէինք իմանում՝ ինքը ներկա^o է, թե ոչ։ Կուլիսների մուտքը փակ պետք է լիներ, և հանիստեսի աչքին երևալ չէր կարելի, ոչ խաղից առաջ, ոչ ընդմիջմանը, ոչ էլ ավարտելուց հետո։ Գուլակյանն իր տեղն ուներ օթյակի ծայրին, դռան

մոտ: Դահլիճ նայել չէր կարելի, առավել ևս օթյակի ծայրին, և մենք չգիտեինք, թե երբ է նա այնտեղ կամ եկե՞լ է, թե ոչ: Ներկայացման ընթացքում և ընդմիջումներին զբաղված էինք բոլորս: Օգնել էր պետք բեմի բանվորին: Դեկորի մասերն ու փոշոս հարթակները տեղափոխելիս պետք է ձայն չլսվեր և պետք էր այնպես շարժվել, որ փոշու հատիկ չնստեր վրադ, ինչ էլ ուզում է յիներ հագիդ, ֆրակ, թե արխայուղ:

— Կտանես փոշոս գեկորն էնպես, որ ձեռքերդ, օսլայած օձիքդ ու մանձետներդ մաքուր մնան: Եթե արտիստ ես, պիտի ամեն գործ մաքուր անես: Ոչ մի նշանակություն չունի շրջապատի կեղար: Պիտի կարողանաս կեղտոտ տեղում մաքուր մնալ: Թատրոնում, իմացեք, ամեն տեսակ կեղտի հանդիպելու եք...

Ներկայացման հաջորդ օրը հարցնում էր, թե ինչն ինչ-պես է եղել և ինչ պատճառով:

— Հանդիսատեսը խանգարում էր,— ասաց «չի կպնում» տղան, և պատասխանը սպանիչ էր.

— Լավ էր անում, աչքդ էլ հանում էր: Հանդիսատեսը նրա համար է, որ խանգարի: Պատճառը քո մեջ փնտրիր: Չլսեմ նման խոսք: Հանդիսատեսին հանգիստ թողեք, ձեզ նայեք:

Քննարկումը տեղի էր ունենում ամեն ներկայացման հաջորդ օրը, և կորուստները վերականգնվում էին, կարկատանները վերացվում: Սունդուկյանի անավարտ պիեսի բեմադրությունը մաքրվում ու ազնվանում էր և ներկայացվում տարբեր ակումբային բեմերում. Արարկիրի ակումբ, Երրորդ մասի ակումբ, Սովետաշենի ակումբ: Երբեմն մենք էինք փչացնում, հետո մաքրում: Զգիտեինք, որ այս բեմադրությունն ի վերջո (1958 թ., մայիս) հասցվելու է Մոսկվայի նախկին Կորշի թատրոնի բեմ, ծափահարվելու, բարձրագույն գնահատականի արժանանալու, և Գուլայշանն ասելու էր.

— Զարմանալ, պարծենալ պետք չի: Ոչ մի արտասովոր բան տեղի չի ունեցել: Մենք ճիշտ ենք աշխատում: Գրվեցին թատերախոսականները, որոնցից մեկի հեղինակը իռուիֆ Ռապուպորտն էր⁸:

Շատ ժամանակ է անցել՝ մի ամբողջ կյանք, և ուզում եմ անաշառ նայել ուսուցչիս ստվերին: Նա ավելի շատ հեգնում էր ու դժգոհում, և դժվար էր նրա հետ խոսելիս զգալ արվեստի մարդու հետ շփվելու բավականությունը: Թատրոնի ներսում, ուր օդը հագեցված է մի կողմից մարդկայնության յույսով, մյուս կողմից հիվանդ սնափառությամբ ու հանճարացափով, հնարավո՞ր էր այլ կերպ լինել օրգանիզմն առողջ պահելու համար: Իրականության և իրերի վիճակի զգացողությունը շատ սուր էր նրա մեջ, և ներշնչումներն էլ ավելի էթիկական բովանդակություն ունեին, քան էսթետիկական: Դաժան էր ու խայթող դերասանական սենտիմենտայ սնափառության, եսամոյության ու բացառիկության ձգտումների հանդեպ, եթե անգամ դրանց կրողը լիներ տաղանդավոր մարդ: Հիշեցնում էր, որ բացառիկության զգացումը տաղանդավոր դերասանին կարող է վերածել քաղքենու և ինտրիգանի: Նա մեծ արհամարանք ուներ վայրիվերո, անհետեղական, հեղհեղուկ, անսկզբունք, ներքին կարգ չունեցող բնափորությունների հանդեպ, ինչ-որ «վերին» ներշնչումների սպասող, իրենց չեղած զգացմունքներով հիացած դերասանների հանդեպ: Եվ չէր սիրում աշխատանքն ու ստեղծագործությունների խանդարող, մարդուն մտքից ու զբաղմունքից գցող, կենտրոնացումը խախտող ամեն ինչ: Չէր սիրում իրենց շուրջը իրարանցում ստեղծող, կեղծ գործնական, հասարակական աշխատանքի անունից ներկայացող մարդկանց: Եվ ամենից ավելի ատում էր քաղքենիությունը միտք ու զգացմունք ցուցադրողներին, ինչպիսին էլ

լինեին՝ ծույլ, թե աշխատասեր, կրթված, թե անկիրթ, սենտիմենտալ, թե ինտելեկտուալ: Քաղքենիությունն էր նրա հակոտնյան, թատրոնական մարտնչող քաղքենիությունը, որին հաղթել չկարողացավ: Նրա աշխատանքային և ստեղծագործական էթիկան, իր բոլոր սուբյեկտիվ դրսեռումներով, աչառու և անաչառ, քայլերով, արդարացի և անարդարացի վճիռներով ուղղված էր նախ և առաջ քաղքենիության՝ թատրոնի այդ անկոտրում ուղեկցի դեմ և ամենից ավելի ատում էր դիլետանտիզմն ու դիլետանտներին.

— Դրանք էն մարդիկ են, որոնց մասին ասում են՝ ամեն ինչ գիտի, մի բան չգիտի: Ո՞րն է էդ մի բանր, որ ամենադժվարն է իմանալու համար: Ներսիսյան դպրոցում կրոնի ուսուցիչը մի բարեպաշտ քահանա էր, երեմն կրկնում էր խոսքեր հույն փիլիսոփաներից՝ «ծանիր զքեզ», ու ավելացնում էր՝ «և զչափ քո»: Իր չափը չճանաչող քիթր խոթում է ամեն տեղ, օդը փչացնում: Երբեք յսած կա՞ք՝ սիրող քիմիկոս, սիրող բժիշկ: Իսկ ինչո՞ւ պիտի լինի սիրող դերասան, չեմ հասկանում: Սիրող դերասանն աղավաղված մարդ է: Թատրոնում դրանք առաջին ինտրիգաններն են: Դերասանի աշխատանքը մտավոր աշխատանք է, գիտություն, և սկսվում է գրքից:

Անհասկացող, իրենից առաջ րնկնող մարդուն նա որակում էր ամենաաղի խոսքերով: Ինչ մտածում էր, ասում էր բացեիրաց, ով էլ լիներ գիմացը: Առաջին իսկ պահից ճանաչում էր մարդուն, որոշում նրա տեղը: Դիմորդներին նայելով երեմն պարզում էր, թե ով է իզուր եկել:

— Էս ո՞ւր ես եկել, ինչի՞ ես եկել, — ասաց մեկին, — տաղանդդ քեզ գիշերը հանգիստ չի տալի՞ս:

Իսկ մեր կուրսի ապաշնորհ ու ոչինչ չխոստացող տղային մի քանի անգամ հիշեցրեց.

— Ինքդ որոշիր ու գնա, ուրիշ տեղ սովորիր: Եթե մնաս, ես քեզ անպայման «երեք» կնշանակեմ, դուրս չեմ

անի: Բայց դու ինքդ որոշիր ու գնա: Եթե մնաս, էլի եմ ասում, դուրս չեմ անի:

Բայց մարդր դիմացավ գլուխր կախ, չգնաց և հետագայում ձեռք բերեց իրեն ձեռնտու դիրք ու վիճակ, դարձավ սովորեցնող ու ղեկավարող, մոռացավ իրեն տրված խրատն ու իր գլխիկոր դիրքն այդ խրատը լսելիս: Գուլակյանի կռահումը ճիշտ դուրս եկավ բոլոր առումներով:

Բոլորը չէ, որ կարողացան բմբոնել մեր ուսուցչի ծայրահեղ ու դաժան երևացող, իրականում տարրական պահանջների էությունը: Բոլորը չէ, որ կարողացան գործադրել ու խորացնել ստացածը: Իսկ նրանք, ովքեր կարողացան, դժվարանում էին բացատրել, թե իրենց աշխատանքում ինչն է գալիս Գուլակյանի դպրոցից:

Մեծացանք, հասանք նրա էն ժամանակվա տարիքին ու նոր հասկացանք իրեն,— ասաց մի անգամ Խորեն Արքահամյանը:

Այդ դպրոցում ուսուցանվում էր դերասանի աշխատանքի եղանակը, որ մարդուն մղում էր ինքնաճանաչման ու ճիշտ դրսելուման: Իսկ բեմը փորձություն է: Այստեղ կան մասնագիտորեն ստուգված սկզբունքներ, մարդուս դրությունը վերարտադրելու ներքին լծակներ, որոնք պետք է իմացվեն: Դա պայմանական վարքագծի քերականությունն է: Յուրաքանչյուր այդ քերականությունը կարելի էր հասնել հավաստիության, բայց ոչ արվեստի, ինչպես յեզի քերականությունն իմանալով կարելի է ճիշտ խոսել ու գրել և չդառնալ բանաստեղծ: Խնդիրն այն է, որ առանց այդ քերականությունն իմանալու, թեկուզ ենթագիտակցորեն (ինչպես յեզուն են իմանում առանց քերականություն սովորելու), չի կարելի բեմ բարձրանալ, ոչ էլ արվեստի մասին խոսել: Մասնագիտորեն գրագետ դերասանը, վաղուց նկատված բան է, եթե տպագորություն չի թողնում, գոնե բողոք չի առաջացնում, չի ամաչեցնում հանդիսատեսին: Դա նույնն է, ինչ գրագետ, ճիշտ նվագող

երաժիշտը, որ իր տեղն ունի որևէ նվագախմբում։ Ճիշտ այդպես էլ գրագետ գերասանն իր տեղն ունի որևէ թատրոնում։ Բեմական վարչագծի հավաստիության հնարավոր է հասնել, եթե տիրապետում ես գործողության ներքին լծակներին, ու եթե տաղանդ ունես, կրացահայտվի ճիշտ ձևով։ Գուլակյանի խնդիրն այս էր ինչպես թատրոնում, այնպես էլ ուսանողական փորձասենյակում։

— Մենք յավ չէինք հասկանում իրեն, — ասաց մի անդամ Արմեն Ջիգարյանյանը, — նեղվում էինք, հետո հասկացանք։ Դաժան մարդ էր, բայց մեկ-մեկ աչքը փակում էր, չտեսնելու էր տալիս չհավանած բանը։ Մտքին եղածը պահում էր, որ, հարմար տեղ ասի։

Տպակորությունն այնպիսին էր, թե բոյորը հավասար էին նրա աչքում։ Զկային դերակատարների առաջին ու երկրորդ կազմեր, «մեծ» ու «փոքր» դերեր։ Բայց կար մեկը, որին իր մտքում առանձնացնում էր, և մեկը, որին մղում էր գրական աշխատանքի և, ինչպես հետո էր պարզ-վելու, ոեժիսուրայի։ Մեկը Արմենն էր, որ չէր նկատում այդ և իրեն առաջատարի վիճակում չէր զգում։ Նա ուներ իր հավակնությունները, և դրանք համեստ էին.

— Ես թող ընկնեմ։ Մոսկվայի երրորդ կարգի մի թատրոն, լինեմ օժանդակ կազմի դերասան։ Ուրիշ բան չեմ ուզում։

Նա արդեն այդ վիճակում էր երեանի ոռւսական թատրոնում և գբաղված էր էպիգոդային, երբեմն էլ ոչ երկրորդական դերերով։ Գուլակյանին դա չէր հետաքրքրում։ Նա Արմենին պատրաստում էր հայ բեմի համար։ Արմենն ավելի կարևորություն էր տալիս թատրոնում լինելուն, քան դասերին և ստիպված էր ժամանակ առ ժամանակ բացակայել։ Գալիս ենք փորձի, և... արդեն որերորդ անգամ Արմենը չկա։

— Հենրի, գնա, պարզիր։

Ես գնում էի, «պարզում», դայիս, զեկուցում, և այսպես երկրորդ, երրորդ ու տասներորդ անգամ։ Գույակյանը լսում էր ինձ և ուղարկում նորից զանգահարելու և խորհուրդներ տալու «Հիվանդին»։ Այսպես նա մղում է ինձ շարունակելու իմ խաղը, և մի անգամ փորձեց, հասկացնել անուղղակիորեն, կարծես թե իմիջիայլոց, որպես մասնագիտական խորհուրդ։

— Մարդուս խոսքի մեջ սուտն ու ճշմարիտը պարզելը դժվար չի։ Սուտը գույն չունի, կենդանություն չունի, մի տոնի վրա է, ոնց որ քոռ աշուղի նման մատդ մի լարի վրա պնդացրած նվագես։ Ճշմարիտ խոսքը կենդանի է, գունեղ ու հանգիստ։

— Երբ հասկացա, որ դա ինձ էր վերաբերում, հիշեցի Շահեն Խարայելյանի դեպքը և սկսեցի զբաղվել իմ տոնի «մշակումով»։ Ինձ թվաց, որ տոնս գունավորում եմ ու կենդանացնում։ Գույակյանը, որ մինչ այդ լսում էր առանց երեսիս նայելու, փոխեց դիրքը, սկսեց խաղիս հետեւ։ Հասկացա, որ մենք խաղում ենք, բայց դա ինձ չհանգստացրեց։ Նա սպասում էր, թե երբ է դայու մեզ երկուսիս էլ մերկացնելու պահը։

— Եթե պարզի՞..., ասաց Արմենը, — երկուսս էլ կորած ենք։ Բայց նա քեզ չհավատալ չի կարող։ Գիտե՞ս, ի՞նչ վստահություն ու հարգանք ունի քո հանդեպ։

— Զեմ նկատում, — ասացի։ Ինչպես բոլորը, էնպես էլ ես։

— Ես եմ նկատում։ Գլուխդ կախում ես տեքստի վրա, տեսնում եմ հարգալից հայացքը, գլուխդ բարձրացնում ես, էլի էն փշի նման...։

Իմ սուտը մերկացվելու էր իր ժամանակին, իր տեղում։

Մեր ներկայացումները շարունակվում էին։ «Կտակին» հաջորդեց Օստրովսկու «Անմեղ մեղավորները» մելոդրա-

ման: Ինձ հանձնարարվեց Հայերեն թարգմանությունը համեմատել ուստի հետ, խոսքը դարձնել Հայկաբան: Այստեղ ինձ հետաքրքրեց դերասան Շմագայի դերը, որ տեսել էի Պատանի Հանդիսատեսի թատրոնում, Պարույր Սանթրոսյանի տպագորիչ կատարմամբ, նաև կինոյում, Ալեքսեյ Գրիբովի կատարմամբ: Սա ուղեկորույս մարդ է, հարբեցող, հեգնական, հանդիպողից սիգար խնդրող, բատ Գրիբովի ոչ չար, բատ Սանթրոսյանի հեգնական նաև իր անձի հանդեպ: Սպասում էի այդ դերին, և այլ բան էր մտածում Գուլակյանը:

— Առաջին գործողությունը հանում ենք: Երկրորդ գործողությունում Դուդուկինը պատմում է ամբողջ առաջին գործողությունը: Նրա խոսքից ոչ մի բառ չենք կրճատում: Պիտի յափ ասվի, որ հանդիսատեսն իմանա ինչ է եղել: Դուդուկինի դերը կարևոր է այդ տեսակետից, և դա կպատրաստի Հենրին:

Ես խորտակվեցի, քոջայ Շմագա... Արմենը, որ նեզնամովն էր և իմ Շմագային էր սպասում, շրթունքը կծեց ու աչքով արեց: Մտածեցինք, որ կարելի է պատրաստել ու ցույց տալ: Իսկ Դուդուկինը... թող Գուլակյանը որոշեր: Շմագայի դերն ստացողին նա Դուդուկինի երկար տեքստն ինչպե՞ս տար, եթե մի անգամ ասել էր.

— Էդ տեսակ ձենով կարելի ա խառը կանաչի ծախել, բայց բեմում խոսել չի կարելի:

Սկսել էինք բնթերցումը, երկրորդ շաբաթն էր, ներսումս ամայություն: Ահա մի դեր, որ չունի դրամատիկական խնդիր, խոսում է հանուն ինչի^o: Ես անտարբեր եմ: Գուլակյանն իր յուսնաձև ակնոցի վերևից մեկ-մեկ նայում է ինձ, ու գիտեմ, սպասում եմ՝ ինչ է ասելու.

— Խնդիրդ...

— Ուզում եմ նշանակություն տալ անձիս,— դուրս թռավ բերանիցս:

— Գրիբ, որ հիշես:

Գրեգի:

— Հասկացա, բայց ի՞նչն է քեզ խանդարում:
Ես պատասխան չունեի: Գույակյանը սպասում էր ու
գիտեր, որ դժվար հարց է տվել: Այդպես էլ սպասեցրեց:
Ուներ այդպիսի սովորություն՝ լոել, երբ մարդը խոսքի է
սպասում: Սա մարդուն նեղը գցելու ձև էր և մտածելու
հրավեր:

— Կդնաս, տանը կմտածես ու կգրես:

Հաջորդ օրը շարունակում ենք րնթերցումք: Գույակ-
յանը երեսիս չի նայում, ժամացույցն է ձեռքին խաղաց-
նում: Ու այդպես, ժամացույցը խաղացնելով, իմիջիայլոց...

— Քեզ ի՞նչն է խանդարում:

— Դիմացինի արժանապատվությունը:

Գույակյանը ժամացույցը դրեց սեղանին, գլուխը
տեքստի վրայից բարձրացրեց:

Գրիր, որ հիշես:

Գրեցի⁹, և կարծես ամեն ինչ պարզ էր: Գտնված դրու-
թյունից պետք էր որոշել վերաբերմունքը տարբեր մարդ-
կանց հանդեպ՝ ում հետ ինչ տոնայնությամբ: Բայց ես
կանգ էի առել ամենագլխավոր մասի՝ երկար տեքստի
առջև, որտեղ կարեոր էր ամեն մի բառը: Որն էր լինելու
իմ ուղեկից խնդիրը, անմիջապես պարզվեց, երբ րնթերց-
ման փուլն ավարտված էր, անցնում էինք միզանսցենի:
Ամենակարեոր խոսքերը, որ հանդիսատեսի համար էին,
բեմում դնելու էի ո՞ւմ առջև, մի թեթևամիտ գերասա-
նուհու՝ կորինկինայի: Ի՞նչ կարող է ակնկալել կորին-
կինան Դուդուկինից: Տեքստում ոչ մի ակնարկ չկա: Բայց
ինչո՞ւ է երիտասարդ դերասանուհին այսքան ուշադիր
լսելու տարիքն առած մարդու երկար զրույցը, եթե
ակնկալիք չունի: Գույակյանը մեզ նստեցրեց բազմոցին,
միմյանց կողքի: Ես խնդիրը գտա. ուղարկեց եմ դուր գայ
այս կնոջը: Իսկ նա՞... Խոսքի ընթացքում ես տոնս մեղ-
մացրի ու մի քիչ մոտեցա նրան: Նա շարժում է հովհարն

այնպես, ասես հետ է մղում ինձ: Ես մի քիչ հետ եմ գնում առանց տոնս փոխելու:

— Հիմա դու մի քիչ մոտեցիր ու հովհարր հետ տար,— ասաց Գուլակյանը խաղակցուհու՝ Նելլի Հարությունյանին:— Եվ իմացիր, դու խնդիր ունես: Ի՞նչ ես սպասում թատերախմբի մեկենասից: Կարդա, տեսրումդ ի՞նչ ես գրել:

Նելլին իջավ բեմից, նրան փոխարինեց կրկնորդը, Նելլին բացեց տեսրը, կարդաց: Կրկնորդը տեսարանը կրկնեց: Գուլակյանը սրան էլ ուղարկեց տեսրը կարդալու: Նրանց տրված էր երկակի խնդիր՝ դուր գալ Դուդուկինին մի բան ստանալու ակնկալությամբ և որևէ կերպ տրամադրել նրան խմբի առաջնուհու՝ Կրուչինինայի դեմ: Արտաքին դրսեորումը Դուդուկինին մոտ նստելն էր և հովհարը զգուշորեն խաղացնելր: Խնդիրը Հոգեբանորեն դժվար էր, և խաղակցուհիներս չարչարվում էին, ես էլ իրենց հետ, քանզի դժգոհ էի դերից էլ, բեմական խնդրից էլ:

Գուլակյանը երկար բացատրություններ տայ չէր սիրում, կարճ էր ասում, երեք անգամից ոչ ավել և՝ «ի՞նչ ես գրել, կարդա»: Խոսքն այստեղ ուշադրության կենտրոնացման երեք գծերի մասին էր: Դա նշանակում է, որ մարդս երբեք միասնեռ չէ, ունենում է ուշադրության մի քանի գիծ, որոնք հետ ու առաջ են տարվում դրությունների համաձայն, և ամենակարեւորը քիչ դեպքերում է առաջ բերվում ու բնոգծվում: Շատ անգամ երկրորդական մոտիվն է բերվում առաջին գիծ, ու դիմացինը, թատրոնում հանդիսականը, զգում է առաջնային մոտիվի գոյությունը ստվերում: Դա տեսնվում ու ներգործում է իր քողարկվածությամբ ու անորոշությամբ և դրանով էլ կենդանություն է հաղորդում գործող անձին: Հոգեբանական ճշմարտության այս նուրբ պահը բավարար չափով մշակված չէ Ստանիսլավսկու «սիստեմում»: Դա միայն կեն-

դանի օրինակով կարելի է բացատրել, և Գուլակյանը դրան կարեռ նշանակություն էր տալիս:

Ոչ միագիծ պահվածքի ու գործելակերպի օրինակը մեր բեմում իրականացնում էր Գուլակյանի ամենահավատարիմ աշակերտը՝ Խորեն Աբրահամյանը, ում քանիցս անդրադարձել եմ¹⁰: Բնորոշ օրինակներ կան նաև էկրանում և ամենաբնորոշը «Սարոյան եղբայրները» ֆիլմի ջրադաշի տեսարանի սկիզբն է: Սուրբ դրամատիկական պահ է պատրաստվում և պատրաստողը՝ Գևորգ Սարոյանը տեսարան է մտնում արտաքուստ հանգիստ, ձմերուկ է ուզում պապից, որպես թե նպատակն այդ է: Նա բուն խնդիրը թաքցնում է ձմերուկ ուտելով ու ցածր, հանգիստ արտասանվող մի խոսքով, որ կրկնում է կարծես իմիջիալլոց. «Երեխին վերցրու, գնա»: Դերասանն այստեղ երեք հոգեբանական գիծ ունի: Ամենագլխավորը թաքցված է, երկրորդականը բերված է առաջ, իսկ գլխավորից գլխավորն իր մեծ կոփն է, իր ճակատագիրն ու նպատակը, այսպես կոչված «գերխնդիրը», որ մի տեղ դառնում է աղաղակ: Խաղային կարգավորման մեջ այս երեք գծերը հետ ու առաջ են տարվում: Կա մի տեսարան, որտեղ նա յսում է եղբոր խոսքերը և համաձայն չէ ու չի սրում վիճակը: Լսում է և ունի իր մտքինը: Սա բեմում յսելու դասական օրինակ է, այսինքն՝ յսել ոչ թե ուշադրություն ձեացնելով, ականջները սրած, այլ իր մտքինը կրելով. Սա այն սկզբունքն է, որ Գուլակյանն ամեն անգամ հիշեցնում էր կրկնելով նույն բառերը՝ «ըստ էության և առաջադրվող հանգամանքների»:

Միագիծ ու միապլան խոսքն ու վարքագիծը բեմում Գուլակյանն անվանումն էր բերանբաց խաղ, կեղծիք նաև կյանքում, իսկ միասևեռ վիճակը հոգեկան խախտման նշան:

— Բեմում սուտ ու բերանբաց խաղ՝ ինչքան ուզես: Հետեւք, տեսեք մարդիկ այնտեղ նորմա¹¹ են, թե¹² խախտված: Գոռում են, որտեղ շշուկ է պետք, մտածող են

Ճեանում ճակատը կնճռուելով, ձեռքը ճակատին տանելով, ասում են «սիրտ», ձեռքը սրտին են դնում, ասում են Աստված, ցուցամատը վերև են պարզում, ուրախ խոսքն ասում են ուրախանալով, տիսուր խոսքը տիրելով: Սուտ, սուտ և սուտ: Սուտն ու Հոգեկան խախտվածությունը քանի^o տեսակ են լինում: Կյանքում էլ նույնն է: Եթե ձեզ ուրախ առիթով կյանորհավորեն ավելի ուրախ, քան դուք եք, իմացեք, որ կեղծում են: Եվ հակառակը. եթե ձեզ տիսուր առիթով կցավակցեն տիսուր դեմք սարքած, ավելի տիսուր, քան դուք եք, իմացեք, որ կեղծում են: Մարդիկ իրենց մտքինը միանգամբ ու բարձրաձայն չեն հայտարարում, այլ մտածում են, փնտրում ասելու ձեւն ու տոնր: Իսկ բեմում չկա ավելի հեշտ բան, քան տիրելոր, զայրանալն ու դայլմաղայ գցելո:

Փորձում էինք «Անմեղ մեղավորների» այն տեսարանը, որտեղ Կրուչինինան մի պահ անկեղծանում է Դուդուկինի հետ խոսելիս: Դա բնդամենը մեկ նախադասություն է.

Կրուչինինա. ...Ես այստեղ շատ բան հիշեցի իմ անցյալ կյանքից, և յագ, և վատ:

Դերակատար Մարիաննա Շահվերդյանը «յագ» բառն արտասանեց ժպիտով, իսկ «վատը» տիսրագեմ ու տոնի իջեցումով: Գուլակյանն ընդհատեց նրան, կրկնել տվեց խոսքը և ասաց.

– Բառերին իմաստ տուր բատ դրության: Բառը խաղալ չի կարելի, քանի^o անդամ եմ ասել...

Մարիաննան կրկնեց նույնը:

– «Լավը» տիսուր տոնով ասա, «վատը» ժպիտով: Երկուսն էլ անցյալում են, չկան:

Մարիաննան այդպես էլ արտասանեց առանց մտածելու, և նրա անձը մի պահ դարձագ բովանդակալից ու հետաքրքիր: Գուլակյանը ոչինչ չբացատրեց: Լսեց, մի թեթև հավանության նշան արեց ու տեսարանի ավարտին, դիմեց մեզ, առանց խոսքին նշանակություն տալու:

— Մտածեք:

Ենթադրվող դրությունը հասկանալի էր: «Լավը» անցյալ էր, չկար, և ճիշտ էր տիսուր տոնը, «վատր» նույնպես անցյալ էր, և ճիշտ էր ժպիտը: Սա նշանակում էր՝ բառ դրության, ներկայացման մեջ խաղային տակտիկա:

— Մարդիկ իրենց տրամադրությունները չեն ցուցադրում, — շարունակեց Գույակյանը Հաֆորդ ժամին. — տրամադրությունները հաղթահարում են, և Հաղթահարման մեջ է երևում տրամադրությունը: Գտեք տրամադրությունը Հաղթահարելու ձեզ խոսքի տոնայնության մեջ ու պլաստիկական վճռում, և դրանով կմոտենաք տրամադրությանը:

Այս բեմադրությամբ կարևոր մի գաղտնիք պարզեց ինձ համար, որ բնավ գաղտնիք չէր, բայց գաղտնիք կարող է համարվել այսօր, երբ մոռացված է Հոգեբանական թատրոնը:

Պիեսում կա մի տեսարան, որտեղ ինտրիգան Միլովգորով ջանում է պղտորել Նեղնամովի Հոգին: Իմանալով նրա բորբոքվող բնավորությունը, նաև համակրանքն ու պաշտամունքի զգացումը Կրուչինինայի հանդեպ, փորձում է տրամադրել նրան Կրուչինինայի դեմ: Նա անորոշ մի բան յսել է և չգիտի (ինչպես և ոչ ոք չգիտի), որ Նեղնամովը Կրուչինինայի կորած որդին է, պարանոցին մի մանրազարդ, և փնտում է իր անհայտ մորր: Միլովգորովի ինտրիգի նպատակը Կրուչինինա գերասանուհուն վարկարեկելն է հանուն իր մտերմուհու՝ Կորինկինայի, որ լսել է Դուդուկինի անորոշ, բանից անտեղյակ զրույցը: Եվ ահա բանսարկուն նետում է կարթը.

— Ի՞նչ ես կարծում, նա ազնի՞վ կին է:

— Այո...

Երկխոսության պայմանաձևն ու դիրքը (ակտանու) ծանոթ է Շեքսպիրի «Օթելլոյից»: Միլովգորովի գերակատար Օթարը Տեր-Հովհաննիսյանը սկսում էր չարանենգ տոնով,

իսկ նեզնամովի դերակատար Արմեն Ջիգարխանյանն անմիջապես պատրաստվում էր լսելու մի չարախոսություն, կատարյալ բերանքաց խաղ։ Չարախոսության կարթը գցողին ուշադրության երկրորդ գիծ էր պետք։ Տեքստը ոչինչ չի հուշում, ոչ մի ներքին մոտիվ, բացի ակնհայտ նպատակից։ Գուլակյանն անտարբեր լսում էր ու կրկնել էր տալիս տեսարանը։ Իր բեմադրած «Օթելլոյում» նա մտածել էր այդ մասին, բայց Յագոյի դերակատար Ավետ Ավետիսյանը խնդիրը վճռել էր բաց եղանակով ու չքմեղություն ձևացնելով. «մի վատ բան չկա»։ Այստեղ մոտիվ պետք էր հորինել, և Գուլակյանը դերակատարին տվեց կարծես ոչինչ չարժեքող խնդիր՝ գրադարձել երկու աթոռներով, դնել գուգահեռ, նայել՝ հավասար են։ Մոտիվը ծնվում էր. երկու մարդ, երկու աթոռ, թիկնակները գուգահեռ, մարդը նրանց մեջտեղում, հենված գուգահեռ թիկնակներին։ Օթարը շատ լուրջ հենվել էր ու չափում էր թիկնակների ամրությունը և արտասանում էր տեքստը իմիջիայլոց, ասես կարեորն այդ թիկնակներն էին, իսկ իր նպատակն անկարեռր...

— Բարձրացրու ոտքերդ, — ասաց Գուլակյանը, — հեծանիվ քշիր ու ասելիքդ շարունակիր։

Օթարը հեծանիվ քշելու մի շարժում արեց ու ոտքին նայելով ասաց.

— Ասում են...

Արմենի հարցական հայացքը սրվեց։ Ուզում է հասկանալ, թե ինչո՞վ է զբաղված այս մարդը։ Ի՞նչ էր ուզում ասել, որ կիսատ թողեց ու լոել է, «Հեծանիվին» է նայում...

— Ի՞նչ :

— Որ նա... (ոտքը վեր է բարձրացնում) լքում է իր գավակներին։

Արմենը կարծես չի հասկանում այս իմիջիայլոց ասված խոսքը, սպասում է և ծանը հոգոց է քաշում*։

Գույակյանը չբացատրեց այս խաղալին տակտիկայի իմաստը: Խնդիրը զուտ ֆիզիկական էր, բայց ստացավ հոգեբանական իմաստ, և դերասանը չրմբոնեց դա: Չրմբոնեց, բայց տպավորությունը լուրջ էր: Արմենը հասկացավ և ընդմիջմանն ինձ ասաց.

— Էս ի՞նչ հետաքրքիր էր: Կարծես ես եմ Միլովզորովին ստիպում, որ Հոգիս պղտորի:

Գույակյանը կրկնել տվեց այս միզանսցենն այնքան, որ ամրանա ու չմոռացվի, դառնա սովորություն ու խաղ: Այդպես էլ եղավ, ու տեսարանը չկորցրեց հուզական հետաքրքրությունը: Պարզվում էր, Հուզելու համար պետք չէ հուզված լինել, պետք է գտնել դրությունը, ճիշտ գործել ու հասցնել խաղի:

Այս բեմադրությունը մոտ քսան անգամ (մի այդքան էլ «Կտակր») ներկայացրինք հանդիսատեսին: Դուդուկինի դերը ես չսիրեցի, բայց դա ինձ համար ունեցավ տեսական նշանակություն: Հասկացա, որ բեմում բնավորությունն արտաքին ձևացումով չի ստեղծվում, այլ ներգգայության ու շփումների բովանդակությամբ, այսինքն՝ մարդն ինչ է մտածում իր մասին և ինչ մոտիվներով է շփում միջավայրի հետ ու մարդկանց հետ առանձին-առանձին: Մի տեսարանում կարողացա օրգանական լինել: Դա կրուչինինալի հետ զրույցի տեսարանն էր, որտեղ կարողացա ներկայացնել զուսպ համակրանք մի կնոջ հանդեպ՝ դերասանուհու, որ րնարել էր միանձնուհու կենցաղը, և որի հետ խոսելիս պետք էր հարգալից տոն գտնել և հեռավորություն պահել: Միզանսցենը գտնված էր, խաղի բովանդակության առումով նպատակահարմար: Ճշմարտությանը նպաստեց Մարիաննալի խաղալին հոտառությունը: Դերը հեռու էր նրա անձից, ու երևաց, որ բեմում հուզական երևալու համար ամենեին պարտադիր չէ հուզվող լինել, և սեփական հուզումը կապ չունի դրամատիկական խաղի հետ: Պատկերացում էր պետք ու խաղ պատկերաց-

ման հետ: Այդ խաղը խաղացվեց ու տպավորություն թողեց: Գուլակյանը չսաց՝ «Ճիշտ եք գործում», ասաց՝ «տոնը պահեք»: Սա միակ տեսարանն էր, որտեղ ես ներքուստ կողնորոշված էի ու հավասարակշիռ, և յուսանկարիչ Աղասի Կեկչյանը դրոշմեց երկու պահ: Ինչպիսին էր տպավորությունը, չգիտեմ: Գիտեմ, որ դժվար էի քաշում դրամատիկական խնդիր չունեցող այս գերը: Բայց ներկայացման վերջում գրիմանոց եկավ ոռուսական թատրոնի գերասանուհի Ռախիս Գրիգենկոն, գովեց Մարիաննային, ապա դարձավ Արմենին ու հարցրեց շուրջը նայելով:

— А где Дудукин?

— Вот он, — сказала Арменир յուրց տայով ինձ:

— Не ждала. Вы на каком языке играете?

— На армянском, — сказала:

— Прелесть! Совершенно другое звучание.

Ոուս գերասանուհին առանց բառերս հասկանալու ուշադիր լսել էր իմ երկար պատմությունը և, ինչպես Արմենն ինձ ասաց, մտածել էր, որ ես ուրիշ յեզվով եմ խոսում, հարցել էր՝ ի՞նչ յեզու է դա: Արմենն ասել էր՝ «իրեն հարցրու»: Ես, որ դժգոհ էի իմ գերից էլ, ինձանից էլ, միսիթարվեցի այդ գովեստով ոչ ինձ համար, այլ հայոց յեզվի, ու հիշեցի րնդունելության գնահատականը:

Ես հակված էի բնութագրային գերերի, և ինձ հետաքրքրում էր կերպարայնության հարցը՝ մի բան որ տեսականորեն մշակված չէ, թողնված է գերասանի դիտողականությանն ու երևակայությանը, որոշ գեպքերում անձի ակներեւությանը: Դա չեն սովորում ու սովորեցնում, ինչպես չեն սովորեցնում նկարչի տեսողությունը, երաժիշտի յսողությունն ու հիշողությունը, բանաստեղծի ձիրքը: Իսկ գերասանի դիտողականությունը բնավորություն է, որ գործում է ամեն պահ:

— Կարողանո՞ւմ եք հետեւ ձեզ շրջապատող իրականությունն ու մարդկանց, — ասաց մի անգամ Գուլակ-

յանր:— Հետևեք անծանոթ մարդկանց, փորձեք ճանաչել, տեսեք՝ ինչպես են վերաբերվում միմյանց: Եթե մի քիչ ուշադիր լինեք, շատ բան կիմանաք մարդու մասին: Կիմանաք՝ մարդն ինչ վիճակում է, բարի է, թե չար, գոհ է, թե դժոհ, հիվանդ է, թե առողջ: Հետևեք մարդկանց գործելու եղանակին, նայելու, խոսելու, շարժվելու ձևերին, հատկապես քայլելուն: Կարողացեք տեսնել մարդկանց, բայց էնպես, որ չնկատեն ձեր հայացքը, չզգան, որ իրենց դիտում եք: Եվ միշտ փորձեք հասկանալ մարդս նպատակ ունի^o, թե^o աննպատակ է:

Դիտողականության մասին խոսելով նա մի անգամ էլ ուշադրություն հրավիրեց արձանների վրա: Խնդիրն այն էր, թե քանդակագործն ինչպես է տեսել մարդուն, ինչ խնդրով:

— Նայեք արձանին: Մարդս կանգնած է, քայլում է կամ նայում և նպատակ ունի^o, թե ոչ: Անդրեաս Տեր-Մարուքյանի Խաչատուր Աբովյանին ես հասկանում եմ: Նայեք բոլոր կողմերից: Խոսք կա պյաստիկական վճռում, ու խոսքը տեսնում ենք: Իսկ էս մյուսին՝ Պանի գլխին կանգնածին, չեմ հասկանում: Զեռքին գիրք, բայց փեշը բռնելը ո՞նց հասկանանք: Թիկունքից եմ նայում, քիչ է մնում րնկնի:

Նոր էին դրվել թումանյանի ու Սպենդիարյանի արձանները օպերային թատրոնի հրապարակում: Մարդիկ ավելի շատ նայում էին Սպենդիարյանի կողմը և թումանյանի հանդեպ պակաս ուշադիր էին: Գուլակյանն ասում էր, թե պետք է նայել դերասանի արվեստի տեսակետից, պարզել ներքին նպատակը:

— Տեսե՞լ եք, երկու մարդ եկել, նստել են հրապարակում, ի՞նչ նպատակով: Բացատրելոր դժվար չի, եթե «Արմաստից» ու օպերայի բացումից ենք գայիս: Բայց դա արդարացում չի: Արձանն ինքը պիտի խոսի: Գիտե՞ք, ես թումանյանին տեսել եմ թիֆլիսում, Զուբալովի անվան

ժողովրդական տանր: Մի մարդ էր, որ անմիջապես նկատվում էր: Նրան հնարավոր չէր չնայել, քաշում էր հայցքդ: Բայց էս քարին նստած մարդուն չեմ ճանաչում: Նպատակ չունի, բան չի ասում:

Արտաքին արտահայտչամիջոցների մասին գուլակյանը գրեթե չէր խոսում: Միշտ ընդգծում էր ներքին խնդիրը: Իսկ ժեստին անդրադառնալիս հիշեցնում էր, որ պետք է խուսափել ձեռքերով խոսելուց, բառը ձեռքով նկարագրելուց: Ձեռքերը շատ շարժելն, ասում էր, մտքի աղքատության նշան է: Բայց պետք էր ուշադրություն դարձնել մարդկանց մատներին: Մարդն իր էությունը մատնում է, չի տիրապետում մատներին, և անհնար է մատներին տիրապետել:

— Նայեք մարդկանց մատներին ու կիմանաք մարդուս խելքի, կրթվածության ու հոտառության չափը: Կրթված մարդու մատների շարժումը տարբերվում է անկիրթ մարդու մատների շարժումից: Ուշադիր հետևեք մարդկանց վեճին ու մատներին նայեք: Անմիջապես երեվում է մտքի մշակվածությունն ու անմշակությունը: Մարդու կարող է գոռալ, բայց մատներին նայեք: Մյուսը կարող է իրեն զսպել, հանգիստ ձևանալ, բայց մատներին նայեք: Մարդուս խելքը մատների ծայրին տեսեք: Դա ձևացնելու, խաղալու բան չի: Մատները կեղծել հնարավոր չի: Մարդս կարող է ժպտալ, իսկ մատներն ի՞նչ անի: Տեսե՞լ եք մարդկանց մատները պարելիս: Այս օրինակներից նա անցավ գրքին ու ընթերցանությանը:

— Քար քաշողի ու գիրք թերթողի մատները տարբերվում են: Ուշադիր եղեք, տեսեք՝ մարդն ինչպես է գիրքը վերցնում. մատները սովո՞ր են գրքի, թե չէ: Հետևեք մարդկանց մատներին գիրք թերթելիս, կիմանաք նրա կրթվածության չափը:

Այս խնդրին նա շատ էր անդրադառնում և մի անգամ էլ անցավ բեմական խոսք առարկային:

— Դերասանր բեմ մտավ, արտասանեց մեկ-երկու նախադասություն, անմիջապես կերեա, թե քանի գիրք ունի կարդացած։ Բեմական խոսքի վարժությունները ձեզ ոչինչ չեն կարող տալ, եթե դուք կարդացած մարդ չեք։ Կարդացեք օրվա մեջ թեկուզ երեք էջ։ Դա կկազմի տարվա մեջ հազար ինըսունհինգ էջ, համարյա երեք գիրք։ Դա շատ չի, քիչ է, շատ քիչ, բայց ավելի լավ է այդ քիչը, քան չկարդալը։ Սովորություն ունեցեք բառարան թերթել։ Գրադետ մարդը բառարան թերթելու կարիք կունենա և տանը բառարան կպահի։ Դրանով է չափվում մարդուս կապը գրի ու գրականության հետ։

Այսպես խոսելով նա դարձավ ինձ։

— Հենրի, դու կարդացե՞լ ես էմի Զոյայի «Ռաբուրդենի ժառանգները»։

— Չեմ կարդացել։

— Բա եղա՞վ։ Ես էլ քեզ գրականագետի տեղ եմ դրել։ Այսամիտ ինձ չհիասթափեցնել։

Ես հասկացա կատակր նրա մատներին նայելով «Հիասթափեցնել» բառն արտասանելիս։ Բայց իր հարցը պատահական չէր։ «Ռաբուրդենի ժառանգներում» գործում էր այն թեման, ինչ Սունդուկյանի «Կտակում»։

Ընթերցանության առիթով նա մի անգամ օրինակ բերեց Հրաչյա Ներսիսյանին։

— Գիտե՞ք, նա դերն անգիր չի անում, սովորում է սեղանի մոտ ընթերցելու ընթացքում և լավ չի սովորում։ Բեմ է մտնում ականջը հուշարարին, բայց ոչ մի անտրամաբան նախադասություն նրանից չես լսի։ Կարդացած մարդ է։ Ժամանակին շատ է կարդացել հայերեն ու ֆրանսերեն։ Բայց Հրաչը ձեզ համար չափանիշ չի։ Նա անցողիկ բռնկումների գերասան է և ինտուիտիվիստ։ Նրա խաղով միշտ կարեի է հիանալ, բայց սովորել չի կարելի։ Սիստեմ չունի, բայց ներշնչումներ ունի, ու չգիտի իր մեծ տա-

դանդի չափր: Վախս ունի բեմի հանդեպ: Արելյանն էր էդ-պես: Մուտքից առաջ դողում էր ու խաչակնքում:

Սա միակ դեպքն էր, միակ օրինակը «տաղանդ» բառի դրական իմաստով գործածության: Նա խոսում էր միայն աշխատանքի, ինքնաճանաչման ու ինքնակառավարման մասին: Դա մտավոր ու հոգեկան լծակներին տիրապետելն էր: Դա պետք է դառնար մասնագիտական սովորություն, խաղի մեջ մանելու բնագորություն ու սովորությ, բայց կարող է վերածվեր շտամպի: Դրանից գգուշանայու միշ-ջոցը ներշնչումների թարմացումն էր մշտապես գեղարվեստական իրականության հետ շփվելով: Այստեղ նա դիմում էր Ստանիսլավսկուց բերած մի օրինակի: Եթե ծաղիկն սկսում է թառամել, թերթերին ջուր ցողելով չես փրկի, պետք է արմատը ջրել: Դերասանի արվեստում պետք էր ներշնչումներ ստանայ գեղարվեստական գրականությունից:

— Գրքի հետ գործ չունեցող դերասանի խաղը, որքան էլ հետաքրքիր լինի, սկսում է մաշվել, որից ինքն էլ է ձանձրանում ու ձանձրացնում: Եթե նրա մի անդամ կարդացածի վրա բան չի ավելանում, թող խաչ քաշի իր վրա: Մեր դերասանները հիմնականում էդպես են՝ զահլեն գնացած արհեստավորներ: Էդպես էլ թատրոնը կորցնում է իր թարմությունը դերասանական մեկ սերնդի հետ:

Հնթերցանության մասին խոսելիս մի անդամ անդրադարձ բանաստեղծությանն ու ինձ հարց տվեց.

— Դու կարո՞ղ ես չափածո գրել:

Ես գրել էի ինչ-որ բան և լուրջ չհամարելով մի կողմ նետել, որոշել այլևս չփորձել:

— Չեմ կարող, — ասացի:

— Մեզ պետք է մի քառյակ, — ասաց: — Դա պիտի երգվի Մոլիերի «Սեթևեթուհիների» ավարտին: Որ ուզենաս, մի թեթև երաժշտություն լսելով կգրես: Բարդ բան չի:

Երաժշտություն է պետք: Մարիաննան թող իջնի գրադարան, բերի հարմար նոտաներ, օրինակ՝ Բոկերինի:

Մարիաննան, որ երաժշտական կրթություն ուներ, բերեց պահանջված նոտաներն ու սկսեց նվագել պատահական կտորներ: Գուլակյանը կանգ առավ մի հատվածի վրա, կրկնել տվեց ու դարձավ ինձ.

— Ոիթմր բռնիր: Չորս վանկանոց տող է պետք: Լսիր... նորից, չորս ու երեք: Լսիր, ես առաջին տողն ասում եմ, դու շարունակիր:

Եվ այսպես, տակտը խփելով ասաց առաջին տողը, ես երկրորդը, ինքը երրորդը, ես չորրորդը, և ստացվեց երաժշտական ոիթմին համապատասխան մի պարզունակ քառյակ.

Ավարտեցինք խաղը մեր,
Ներող եղեք, մի դասեք,
Կարոտ ենք ձեր ծափերին,
Ծափահարեք, գնացեք:

Մարիաննան կրկնեց Բոկերինիի հատվածը, ես էլ խոսքը նույն ոիթմով, անցանք երգի, խումբն ինքնաբերաբար միացավ, և Մոլիերի «Սեթևեթուհիների» պարերգային ավարտը պատրաստ էր, մնում էր տանել բեմ, և Զարեհ Մուրադյանը պարի վերածեր:

— Տեսա՞ր, ինչ հասարակ բան էր,— ասաց Գուլակյանը:— Ոտանափորը ծնվում է երաժշտությունից բնական ճանապարհով:

Քառյակը պարզունակ էր, երաժշտությունը թեթև, ու խաղային, թերևս միայն բեմում արդարացվող: Դրանից հետո մի կողմ դրեց «Սեթևեթուհիների» թարգմանությունը և ինձ հանձնարարեց վերաթարգմանել:

Մտածում էի, թե ինչո՞ւ ինձ համառորեն մղում է գրական աշխատանքի: Թվում էր, որ այնքան էլ տոն չի

տալիս իմ բեմական հավակնությանը։ Ամեն առիթով դիմում էր «գրականագետ» բառին և մի անգամ էլ, կարծես պատահաբար (նա պատահաբար ոչինչ չէր անում), բնդմիջման ժամանակ կանչեց ինձ ու առջևս դրեց թղթի մի կտոր։

— Դու ձեռագրից ո՞նց ես գլուխ հանում։ Էստեղ մի բառ կա, չեմ կարողանում կարդալ։

Թուղթը հին էր և որակլալ։ Սև թանաքով գրված էին չափածո տողեր և ստորագրված Ե. Զարենց։

Աշուն է նստել սեղանիս, ճակատին թորշոմած վարդեր։
Թախիծը թվում է սպեղանի, խնդությունը թույն է
արդեն։
Օ՛, երազն այս, երազն այս պատիր, այս ցնորքը միշտ
գրավիչ…
Բայց դժվար թե նա ազատի քեզ գերող անլուռ այս
ցավից։
Սեղանիդ նկարն այս գունատ, սեղանիդ վարդերն այս
գեղին
Ու հուշերը, հուշերը…

Վեցերորդ տողամիջում մի բառ անրնթեռնելի էր, կարճ
բառ… Զկարողացա կարդալ։

— Կարո՞ղ ես պարզել։ Էղ բառը երկու վանկ ունի։
Եթե ուտանավորի ոկիթմը զգում ես, գտիր։ Արտագրիր, եթե
ուզում ես։ Եթե էղ բառը գտար, ընդգծիր, որ իմանաս քո
դրածն է։ Զարենցը սա մեր տանն է գրել, ուշ երեկոյան,
անտանելի ծանր տրամադրության մեջ։ Նստած էր իմ
սենյակում, գյուխը բռնած։ Գնալուց հետո տեսա գրա-
սեղանիս էս թուղթը։

Ես արտագրեցի, անգիր արեցի ու փողոցով քայլելիս
ակամա կրկնում էի տողերը, անընթեռնելի բառին հաս-
նելիս երկու քայլ անում, և մի բառ ընկավ ոտքիս տակ։

Ու Հուշերը, Հուշերը դաժան, ու չկա ոչ մի ուղի...

Դրեցի այդ բառը, ելնելով բովանդակությունից, ու վստահ չէի, թե ճիշտ եմ գտել: Գրեցի մի թղթի վրա ու թողեցի: Գուլակյանի մահից ինը տարի անց, երբ թատրոնում նշվում էր նրա յոթանասունամյակը, հիշողությամբ կարդացի ամբիոնից, հիշեցնելով, որ վեցերորդ տողամիջում անրնթեռնելի բառը չեմ գտել: Դա ոչ մեկին չէր հետաքրքրում: Երեկոյից հետո մտածեցի, որ փնտրվող բառը պետք է համապատասխանի ներքին հանգին, ու կանգառական բառի վրա, որ ձայնակից լինի գունատ բառին: Դրանից ժամանակ անց. երբ ծանոթ էի ոտանավորի տեսությանը Արեդյանի «Տաղաչափությունից», նկատեցի կարևոր մի նրբություն: Այս բանաստեղծությունը հանգերով չէր գրված, այլ ոիթմական ասոնանսներով: Իմ սարքած ներքին հանգը կոպիտ էր հնչում ականջիս: Դրան ուշադրություն դարձրի, երբ Անահիտ Զարենցը հրապարակեց «Անտիպ և Հավաքված երկերը», որտեղ դրված էր Գուլակյանի թղթերում գտնված այս բանաստեղծությունը, և անրնթեռնելի բառը վերծանված էր ոիթմական ասոնանսով.

Ու Հուշերը, Հուշերն այդ թունոտ, ու չկա ոչ մի
ուղի...

Նա գնաց անգարձ, այդ ցնորդք, այդ ուրուն քո
մտերիմ,
Բայց իր մութ շիրիմի խորքից դեռ երկար քեզ կգերի,
Կգերի ու քեզ կասի, որ գնաց կյանքը արդեն,
Աշուն է նստել սեղանիդ, ճակատին թորշոմած
Վարդեր:

Այս բանաստեղծությունն իր տողամիջյան երկու վանկով առիթ եղավ, որ մտնեմ չափածո խոսքի ոլորտը, թարգ-

մանություններ անեմ, սկսեմ նաև չափածու մտածել, մտուրել ոտանավորի տեսության հարցերի շուրջ և ուշացումով հիշել Աճեմյանի խոսքը «կիմանաս՝ ինչ է քեզ պետք»։ Գույակյանն էլ գիտեր՝ ինչ էր հարցնում, ինչ հանձնարարում։ Երկուսն էլ, ինչպես հետո հասկացա, ինձ մղում էին ինքնաճանաշման, և պաղում էր իմ սերը թատրոնի հանդեպ։

Ինձ սպասում էր ևս մի անհետաքրքիր դեր։

Չորրորդ տարվա երկրորդ կիսամյակում Գույակյանը կանգ էր առել մի հեղափոխական պիեսի վրա։ Լեռնիդ Ռախմանով, «Անհանգիստ ծերություն»։ Կարդացինք, գտա իմ դերը, դոցենա Վորոբյով, հեղափոխությունից վախեցած երիտասարդ մտավորական, հեռանկարում կտարանդի։ Արմենն ասաց՝ «գտանք քո դերը»։ Սկսեցի պատրաստվել, անդիր արեցի տեքստը, պատկերացնում էի դրությունները, և Գույակյանն ասաց։

— Էս դերը յափ կիսաղա Հենրին։ Շատ հեշտ կիսաղա։ Գրիմ էլ պետք չի, հենց էսպես, իր ակնոցով, բայց ի՞նչ հետաքրություն իր համար իր նմանի դեր խաղալու։ Ես նրան կտամ պրոֆեսորի մյուս աշակերտի Բոչարովի դերը, իր անձից տարբեր։

Ես նորից խորտակեցի։ Ո՞վ էր այս Բոչարովը, հեղափոխության մեջ մտած երիտասարդ մտավորական։ Ոչինչ չէր ասում այս դերը։ Նրա ամբողջ իմաստը յափատեսական ու հեղափոխական լինելու մեջ էր։ Զէր կարող ոգևորել այդ դերը 1958 թվին, երբ նոր էինք սթափվել ժողովուրդների բեղավոր առաջնորդի պաշտամունքից ու զարչուրանքով էինք նայում նրա սկագոր, մոնումենտին։ Ոչ միայն հիամթափան էինք, այլև վիրավորված։ Բայց պաշտոնական գաղափարախոսությունը նույնն էր, ուրիշ աշխարհայացք չկար, և հեղափոխական թեման բեմում պարտադիր։ Զէի էլ փորձում գտնել իմ ստացած դերի ներքին

գիծը, անհատական կյանքի նշանը, որ չկար: Փորձում էի դժվարությամբ, սրտնեղությունս մի կերպ թաքցրած:

— Սիրելիս,— ասաց Գուլակյանը, — կարո՞ղ ես յինել ավելի անհետաքրքիր:

— Կարող եմ, — ասացի:

— Ուրեմն եղիր ավելի անհետաքրքիր:

Այսքանն ասաց և՝ դու քո խիղճը: Ոչ մի խոսք չեղավ ներքին խնդրի մասին, ու ես քարշ էի տալիս վզիցս կապած քարր, տանջվելով ներսումս տիրող դատարկությունից: Փորձում էինք լուսավորված բեմում, բայց առանց գրիմի ու զգեստափոխման: Ինչ տպավորություն էր թողնում իմ մտահոգ տեսքը, չգիտեմ: Գուլակյանը, որ դժոհն էր ու յուում էր, մի խոսք ասաց.

— Որ մտածելով ես գործում, յակ ես անում, բայց կասկածելով մի գործիր: Կասկածելով չի կարելի բեմ մտնել:

Նրա մտքով անցա՞վ, որ «կասկածել» բառն ինձ միտք է տալու: Իմ կասկածը դերին չէր վերաբերում, այլ իմ վիճակին, թե ինչո՞ւ եմ մտել թատերական ինստիտուտ: Գուշակյանի խոսքն սկսեց պտտվել գլխումս. կասկածելով չի կարելի... Հեղափոխության մեջ մտնել: Ես գտա խաղային մոտիվը. Հեղափոխության մեջ պատահաբար ընկած մարդ եմ ու կասկածելով եմ գործում, ներսումս անորոշ թախիծ: Տեքստը ոչինչ չէր տալիս, ոչ այս, ոչ այն: Առաջին գործողությունում ինձ մի խոսք էր ասվում. «գուք գարձյալ սափրված չեք»: Ես այստեղից սկսեցի: Գրիմին վատ չէի տիրապետում: Երբ անցանք գրիմին ու զգեստին, վերցրի Յակով Սվերդլովի դիմանկարն ու ինձ նմանեցրի նրան: Մշակեցի բոլոր արտաքին նշանները երկրորդ գործողությունում՝ կարճ մորուք, հնառն ակնոց, կաշվե բաճկոն, երկարաճիտ կոշիկներ, ու նայում էի գրիմանոցի մեծ հայելուն, ջանալով իմաստ գտնել գոնե դերի կերպարանքի մեջ:

—Գլեք Մաքսիմիլիանովիչ Կրժիժանովսկի, —ասաց գրիմանոցի բաց դռան մոտ կանգնած Վավիկ Վարդանյանը:

Զգիտեմ, թե ինչ էի դուրս բերել, բայց բեմ մտնելու ցանկություն չկար: Կանգնած էի բեմի դռան մոտ ու մտածում էի, որ ատում եմ թատրոնն էլ, ինձ էլ այդ կեղծ վիճակում

— Հովհաննիսյա՞ն, — յսեցի Աճեմյանի ձայնը, — էդ դո՞ւ ես:

— Ես եմ:

— Ուրեմն ես սխալվե՞լ եմ: Դու դերասան ես եղել, ես չեմ իմացե՞լ: Լավ է, շատ լավ է:

— Լավ չի, Վարդան Նիկիտիչ: Սրա ի՞նչն է լավ: Սա իմ դերը չի: Բան չի ստացվել:

— Ինչո՞ւ: Ինչ որ տեսնում եմ, լավ է:

— Ներքին գիծը չեմ գտել: Բեմում անելիք չունեմ, ասելիքս էլ մի բան չի, ընդամենը հավանության խոսքեր:

— Ներքին գի՞ծ, չէ՛ մի... Բան եք գտել: Արտաքինը գտել ես, բավական է: Ի՞նչ անելիք: Հեղափոխություն է արվում և այլ, և այլ: Ներքին գիծը ո՞րն է: Մտնում ես բեմ, ձայնդ վատ չի, խոսքդ մաքուր, միզանսցենը դրված է: Ուրիշ ի՞նչ է պետք: Դերը խաղալու համար է, քննադատելու համար չի, մոռացիր թատերագիտությունդ:

Ինձ ուրախացրեց, «Ես սխալվել եմ» խոսքը, բայց դրա կարիքն այլևս չունեի: Չիմացա, ինձ հետ խոսելուց առաջ, Աճեմյանը դահլիճում եղե՞լ էր տեսե՞լ էր առաջին գործողությունը, որտեղ ես ուսանողական զգեստով էի, ոչ տպավորիչ: Ինձ թվաց, որ իր տեսածն այդ էր: Նրան բեմական անձի ակներեւությունն էր Հետաքրքրում և արտաքին տիպականն աչքից չէր վրիպում: Ես գտել էի ընդհանուր բնութագրական մի բան, որը նկատելու համար պարտադիր չէր ներկայացումը տեսներ: Դուան մոտ հանդիպելն էլ բավական էր կամ գուցե այդտեղ չլ պետք էր կանգ առնել: Ես թաքցրել էի անձս, ինքս ինձ հետ էի և

որքանո՞վ Ալլ: Ներկայացման ավարտին գրիմանոց եկավ Դավիթ Մալյանը, որ ժամանակին տպագորություն էր ստեղծել այդ գերում, և շնորհագորեց.

— Լավ ա:

Գուլակյանը մեզ սովորեցրել էր լուրջ չընդունել թե՝ կուզ ամենահեղինակավոր գովեստը: Եվ ամենազարմանալին ստացած գնահատականն էր՝ գերազանց: Երկու օր հետո Գուլակյանը միջանցքում ինձ կանգնեցրեց.

— Գիտես չէ՞ որ «գերազանցն» իմ որոշածր չի:

— Կարծում եմ:

— Ճիշտ էլ կարծում ես: Զարմանալի մարդիկ են. կողքից անց են կենում ու որոշում տալիս: «Գերազանց» առաջարկեցին, ես ինչի՞ պիտի դեմ կանգնեի: Բայց մենք գիտենք մեր արածն ու չարածր:

Ով էր կողքից անցնողը, գիտեի, բայց ո՞վ էր «գերազանց» առաջարկողը, չգիտեի:

Մեր վերջին ներկայացումը «Անհանգիտ ծերությունն» էր:

Վարագույրը փակվեց առանց ծափահարությունների: Գուլակյանը մեզ հրավիրեց իր տուն, հրաժեշտի խնդույթի և բաժակները բարձրացնելուց առաջ ասաց այն խոսքը, ինչին սպասում էի երկու տարի:

— Հենրի, Էն, որ երկու տարի ինձ խաբում էիր, կարծում էիր, քեզ հավատո՞ւմ էի: Եթե ես մի անգամ ցույց տայի, որ չեմ հավատում, էս մարդուն էլ, — ցույց տվեց Արմենին, — քեզ էլ՝ երկուսիդ էլ հեռացնել պիտի տայի ինստիտուտից: Բայց էդ բանը մտքումս չկար, ու որոշել էի քեզ հավատալ:

Մեր ավարտական քննությունը տևեց մեկ շաբաթից ավել: Ավարտում էինք ամեն մեկս երեք գերով: Իմր Հինգն էր, երկուսը անխոս, որոնցից մեկին ես կարևորություն էի տալիս: Իսկ «Կտակի» Սիմոնը, որին Գուլակյանն էլ կարևորություն էր տալիս, չներկայացվեց, որպեսզի Մամիկո-

նի կրկնորդը չտուժի: Գուլակյանը որոշեց, որ իմ տեսական հիմնավորման նյութը լինելու է Մամիկոնը՝ այն գրոն, որից ես, ինչպես ասում էր Արմենը, սալոնային ֆատ էի սարքել: Եթե ինձ մնար, կբազատրեի անխոս Վկայի էությունը: Դրանով էի պարզել բեմում լինելու արդարացումը տեքստից դուրս: Գուլակյանը գիտեր այդ, բայց Մամիկոնի կողմն էր: Հանձնաժողովում Վավիկ Վարդանյանը զարմանք հայտնեց, թե ինչո՞ւ չի բնտրված «լավագույն դերը»՝ Բոչարովը: Ասացի, որ դա հաջողված չէ: Գուլակյանը գլխով արեց, Վավիկը ժպտաց իր բարեկիրթ ժպիտով ու ձեռքերը տարածեց.

— Դուք գիտեք: Բայց ես, ի՞նչ մեղքս թաքցնեմ, հայանել եմ: Վարդանն էլ է հավանել:

Աճեմյանը ներկա չէր: Նրա կարծիքն ինձ համար ամենակարևորն էր, դերասան կհամարեր ինձ, թե թատերագիտ:

ԲԵՄԱԿԱՆ ԽԱՂԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ՄՏԱԾԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Я был не один, а с кем-то кого
искнал в себе, но не мог найти.

К.Станиславский

Սեղանիս դրված էր Ստանիսլավսկու հիմնական աշխատությունը՝ «Դերասանի ինքնին աշխատանքը»։ Գույակյանը վերցրեց, սկսեց թերթել։ Ինչոր բան էր փնտրում ու հարցրեց։

— *Ո՞ւմ գիրքն է :*

— *Իմը :*

Այո, սպասում էի։ Գիրքն էսպես կկարդան։ Ամենակարևոր տեղերը գծել ես, անգամ հակասությունները, խճողված ձևակերպումները։ Բան չես բաց թողել։ Փանի՞ անգամ ես կարդացել, երկո՞ւ… չէ, երեք գույնի մատիտ եմ տեսնում։ Աղել ու մաղել ես, քեզ ի՞նչ հարց տամ, որ ի՞նչ պարզենք…

Ի՞նչ պիտի պարզեինք, եթե երեք տարի պարզելով էինք զբաղված։

Հարցերն իմ մեջ էին ծագելու հետագայում, երբ կծանոթանայի համակարգի շուրջ ստեղծված գրականության հիմնական մասին։ Ես ունեի բոլոր պատասխաններն ուսումնական մակարդակում։ Կարդացածս ընդունել էի որպես վերին ճշմարտություն, կարծելով, թե ինչքան յավ իմանամ այդ համակարգը, այնքան յավ կիսադամ։ Այն, որ խաղը գերասանի անձի պարագոքսն է, վաղուց է ասված։ Ստանիսլավսկին, ունենալով դրա զգացումը որպես գերասան, ջանացել է համակարգել այն, դնել առօրյա ող-

ջամտության հողին: Այս ենք ստացել մեր ուսումնական փորձասենյակում ու բեմում, տարբեր լրացումներով ու շեշտագրումներով: Գեղագիտության լեզվով, սրան կա-սենք խաղի ներքին ձևի կառուցում:

Այսօր, երբ մեկ դարից ավել է անցել «սիստեմի» կի-րառման առաջին փորձերից (1912-13 թթ.) և ավելի քան վեց տասնամյակ իմ ուսումնառության շրջանից, արժե-մտածել՝ հոգեբանություն, թե՝ գեղագիտություն, «բե-մում գործելու գիտություն», թե՝ անձի խաղային ինքնա-ստեղծում: Մտածում ենք մի հարցի շուրջ առանց վերջ-նական պատասխանի հավակնության:

Այդպիսին է մեր առարկայի բնույթը:

Խաղը բացատրված չէ որպես համակարգ: Գրականու-թյան մեջ և թատրոնական առօրյա լեզվում ամենաշատ հոյովող այս բառը թեթև է հնչում, չունի իր ստույգ սահմանումը և ուսուցանելի չէ: Խսկ Ստանիսլավսկու «սիստեմը» բացատրելի և ուսուցանելի է. դիմում է խա-ղարկուի մտքին ու խղճին, թե բարոյակամային ինչ խնդրով է բեմ մտնելու, ինչ մղումով ու հեռանկարով, և ինչ վարքագիծ է մշակելու պայմանաբար առաջադրվող հանդամանքների հանդեպ կամ ինչ զաղափար է կրելու: Բայց մինչ օրս չէ հայտնի չէ՝ ինչպես են հաշտեցվում տեսությունն ու բեմը: Բեմը խաղի է հրավիրում և գգաս-տացնում միաժամանակ: Զգտում ենք այնտեղ և զգու-շանում: Լրջության ու անլրջության, տարերքի ու հավա-սարակշուռության, ներշնչման ու չափի սահմանում ենք հայտնվում, և կա՝ այնտեղ համակարգող մի սկզբունք: Այրատ (խաղալ) բայց խոնարհվում է Ստանիսլավսկու հատորների բազում էջերում, բայց այրա (խաղ) գոյականը չի գոյանում որպես ստորոգություն (կատեգորիա): Այ-սինքն՝ զանց է առնվում մի բան, որը հակում ունի գեղե-ցիկ լինելու և արվեստի նախասկզբունքներից մեկն է, եթե հիշենք Շիլերի նամակները գեղեցկագիտության շուրջ:

Շրջանցելով այս, Ստանիսլավսկին շրջանցում է իր իսկ արվեստը, իրեն որպես դերասան և անձի ներկայության գեղագիտությունը:

Նկատի առնենք, որ «սիստեմը», ըստ շարադրանքի տիպի, բեմական հոգեբանության փորձերի գրառում է, ըստ էության՝ բեմին մոտենալու գիտակցված եղանակ և մտածելու հրավեր, ոչ թե դավանանք: Ի՞նչ է արժեցել այդ հրավերը հրավիրողի համար և ինչպե՞ս է բնդունվել, փորձերի մղել ու մեկնաբանվել:

Հեղինակն ինքը չի թաքցնում իր տարակուսանքները:

«Տարիներ շարունակ, փորձերին, սենյակներում, միանգքներում, գրիմանոցներում, փողոցում հանդիպելիս ես քարոզում էի իմ credo-ն և՝ անարդյունք: Ինձ յուրաքանչիւնը հարգալից, յուրաքանչիւնը, հեռանում և շշնջում մեկմեկու՝ «ինչո՞ւ է սկսել վատ խաղալ»: Նրանք իրավացի էին: Ես իմ դերասանական ստեղծագործությունը ժամանակավորապես փոխարինել էի փորձարարությամբ, հետադիմել որպես դերասան <...> և մեծագույն կասկածանքով շարունակում էի իմ փորձերը, որոնք մեծագ մասսամբ սիսալ էին: Բայց ես չէի ուզում ու չէի կարող այլ կերպ աշխատել»¹:

«Սիստեմն» ստեղծողն ինքն է հիշեցնում, որ իր փորձը մտածելու հրավեր է: Բայց թատրոնի ու թատերական կրթության մարդկանցից քանի՞սն են հասկացել այդ:

Ստանիսլավսկու «սիստեմը» երկար ճանապարհ է անցել (1906-36 թթ.) մինչ գրքի վերածվելը և այդ ընթացքում ունեցել է քննադատներ, համակիրներ ու հետևորդներ: Քննադատներից ոմանք ծայրաչեղ որակումներ են տվել, մյուսները (Գ.Շպետ, Լ.Վիգոսսկի) էսթետիկական և հոգեբանական սխալներ են տեսել, համակիրները խոնարհվել են, ինչպես խոնարհվում են յավ չհասկացված բանի առջե, իսկ հետևորդները դիմել են գործնական կիրառման, երբեմն անարդյունք, երբեմն էլ ստեղծագործաբար՝ սե-

փական ճշտումներով ու խմբագրումներով։ Հեղինակը մեծ արդյունքի չի հասել գործնական առումով և, այնուամենայնիվ, առաջացրել է մեծ հետաքրքրություն ոչ միայն Ռուսաստանում, այլև Արևմուտքում ու Միացյալ Նահանգներում։ «Սիստեմ» ընդունվել է որպես բեմական վերապրումի տեսություն, և հետեւրդները փնտրել են անորսալին։

Ստանիսլավսկին ամենագեղեցիկ բնութագրումն է տարիս դերասանի արվեստին՝ «մարդկային ոգու կյանք», և որտե՞ղ է դա։ Նա որոնում է այդ կյանքն անձի գգացմունքների տրամաբանության մեջ, առօրյա փորձի ճանապարհով, և բացահայտում է բեմում օրգանապես ճշմարիտ լինելու մեխանիզմը։ Դա պայմանական վերաբերմունքն է կամ հակազդումը ենթադրվող իրականության հանդեպ՝ խաղային ինտենցիա իրենից բխող տրամաբանական քայլերով (ЛОГИКА ПОСТУПКОВ)։ Այս է «սիստեմի» էությունը, որ հանգեցրել է կենսական ճշմարտության բացարձակացմանը բեմում և արվեստագետին մոտեցրել փորձառական հոգեբանության սահմաններին։ Եվ այսպես՝ օտար դռներ բախելով նա հայտնվել է ոռւս Փիգիոլոգներ Սեչենովի ու Պավլովի փորձերի շրջագծում, արժանանալով արվեստից դուրս մարդկանց հիացմանը։ Ու՞ր մնաց այլևս «ոգու կյանքը»։ Ասել, թե «Պավլովի ու Ստանիսլավսկու նպատակները համրնկել են» (Լ. Օրբելի)², նշանակում է բնդունել, որ Ստանիսլավսկու «սիստեմը» գուտ հոգեբանական հիմքի վրա է, ոչ էսթետիկական։

Այստեղ ճշմարտություն կա, բայց խնդիրը թվացածից ավելի նուրբ է։ Բեմի պայմանականությունը բերում է իր էսթետիկան։

Այն ժամանակ, երբ Գեղարվեստական թատրոնի ստուդիայում առաջին փորձերն էին արվում ըստ «սիստեմի» (1912-13 թթ.), Կոլումբիայի համալսարանում Զոն Ուուսոնը կարդում էր իր առաջին դասախոսությունները վար-

քագծի հոգեբանության (բիհելվիորիզմ) տեսական հիմունքների շուրջ: Դա արտաքին դրդիչների հանդեպ մարդու զգացական հակազդման տեսական բացատրությունն էր այլ գործոններից (սոցիալական, բարոյական, էսթետիկական և այլ) դուրս³: Ստանիսլավսկին դրա զուգահեռ ճանապարհին էր և հայտնի չէ՝ տեղյա՞կ էր Ուսուսոնի մտքերից: Նա փնտրում էր մարդկային վարքագիծը դեկավարելու ազդակներն ու միջոցները բեմական հանգամանքներում: Հայտնագործում էր «Հեծանիվը» երկու տեղում միաժամանակ, մեկն իրական հանգամանքներում, մյուսն իրականության մեջ պայմանականացված հանգամանքներում, այն է՝ «Հեծանիվորդն» առանց հեծանիվի՝ «իցէ թե...» (“եւս նա...”): Ստանիսլավսկին նկատի ուներ նաև բարոյական ազդակները, և դրանով էլ նրա բնթացքն այլ էր՝ Ուսուսոնին զուգահեռ ու շեղորնթաց:

Չունենալով էսթետիկական հիմք իր ստուդիական փորձերում, Ստանիսլավսկին ուներ իր խարիսխը ժամանակի արվեստում: Նրա ուսմունքն իր ամբողջության մեջ տրամաբանական արդյունքն էր 19-րդ դարավերջի նատուրալիզմի ու հոգեբանական ռեալիզմի, նաև դրական քննադատության, որ հիմքում բարոյագիտական էր: Անմիջական ազդեցություն եվրոպական նատուրալիզմից Ստանիսլավսկին, թվում է, չի կրել (ոռոսական ռեալիզմը բավական էր), բայց պատմականորեն այդ համատեքստում է նա իր փորձերով ու որոնումներով: Իր արտիստական երիտասարդության տարիներին, երբ ինքը դեռ հետեւրդն էր խաղի ավանդական եղանակների, Փարիզում բեմ էր մտնում դրականության մեջ արդեն հաստատված նատուրալիզմը: Անդրե Անտուանն իր ստեղծած «Ազատ թատրոնում» (1887թ.) էմիլ Զոյալի ազդեցության տակ էր և ավելին՝ մերժում էր ոչ միայն բեմական աքսեսուարի պայմանականությունը, այլև դերասանական մասնագիտացումը: Նա թատրոն էր ընդունել սիրողների և բեմա-

կան կերպարն ընդհուպ մոտեցնում էր նատուրայի: Հակա-
դրված ժամանակի թատրոնի ավանդական ու սայոնային
ձևերին, Անտուանը թարմացնում էր բեմը անմիջական ու
անսպասելի ճշմարտությամբ՝ «չորրորդ պատ», կիսատոներ
և շղուկներ, թիկունքով խաղ, ընդհանուր տեսարանների
անհատականացում և միասնականացում ընդհանուր տո-
նայնության մեջ, խոսքի կենցաղային ոճ և այսպես՝ մինչև
ծայրահեղ նյութականացում՝ մսավաճառի խանութում
սպանդանոցից բերված տավարի կողը: Ի՞նչ էր մնում պայ-
մանականությունից, եթե ոչ հեղինակային տեքստը՝ մշակ-
ված ու ամրակայված հյուսվածք, որ ինչ տոնայնության
մեջ էլ դրվեր, դերասանի անձից գուրս էր ու թելադրում
էր պայմանական վարքագիծ: Ի վերջո այդ էլ հաղթա-
հարվեց յեզրական նատուրալիզմով ու ժարդոնով, և ամեն
ինչ՝ *a la vie* (ինչպես կյանքը), մինչև որ կտտնվեր ֆրան-
սիական բեմական խոսքի սկզբունքը՝ «ներհամաձայնու-
թյուն գրական և խոսակցական յեզուների»⁴: Բոլոր դեպ-
քերում նատուրալիզմը ժամանակի գեղարվեստական ուղ-
ղությունն էր և դրսելորվելու էր ոչ միայն ֆրանսիական
բեմում:

Անտուանի «Ազատ թատրոնի» բացումից երկու տարի
հետո՝ 1889 թվին, Բեովինում թատերական քննադատ Օտ-
տո Բրահմը բացեց իր թատրոնը՝ «Ազատ բեմ», համանման
ծրագրով. «ոչ թե օրյեկտիվ, այլ անհատական ճշմար-
տություն <...> կեցության բնական ուժերի ճանաչողու-
թյուն»: Փորձերի ընթացքում ծագեց այն միտքը, որ հե-
ղինակային տեքստը պատնեշ է «կեցության բնական
ուժի»⁵ առջև, որ մարդուս բնահոգեկան վիճակը դուրս է
գրավոր խոսքից, ուստի փորձը պետք է սկսել անմիջապես
միզանացենային վիճակից, տեքստի մոտավոր իմացու-
թյամբ, թեկուզ սեփական խոսքերով, և դրությունների
յուրացումից հետո դիմել տեքստին: Բրահմը խնդիր էր
դրել ազատել մարդուն իր ներքին արգելակներից և այն

կազմակերպվածքից, որ պայմանավորված էր անհատի հասարակական վիճակով, ի հայտ բերել նրա թաքնված հոգեկան ներկայությունը։ Իր այս տարերային էքզիստենցիայիզմով Բրահմը փորձում էր դերասանին դուրս բերել ընթերցողի վիճակից, հաղթահարել դերի և դերասանի միջև եղած հոգեբանական հեռավորությունը։ Այստեղ արմատապես փոխվում էր խաղի սկզբունքը՝ ոչ թե խոսքից դրություն, այլ դրությունից խոսք։ Նպատակը բեմում կենսական հավաստիության հասնելն էր և գեղարվեստական իմաստի ստորադասումը հոգեկան իսկությանը։ Այդ արվեստի սպառիչ բնութագրումը տվեց Գեորգ Զիմմելը երկու բառով՝ «կիրառական հոգեբանություն կամ հոգեբանության կիրառում»⁶։

Ինչ է մտածել Ստանիսլավսկին Բրահմի արվեստի մասին, նրա գրառումներում չի երևում, բայց ակնհայտ է սկզբունքների ընդհանրությունն արտատեքստային և արտաէսթետիկական միտվածության առումով։ Դա պայմանավորված էր դարավերջի թատրոնի բնդհանուր ձգտումով՝ հնարավորինս մոտ լինել իրականությանը։ Ճիշտ այդ ճանապարհին էր Մայնինգենի դուքսի թատրոնը Լյուդվիգ Քրոնեգկի ղեկավարությամբ, որ 1885-ին եղել էր Պետերբուրգում, 1890-ին՝ Մոսկվայում և հիացրել պատմական միջավայրի, գգեստների ու իրերի շոշափելի հավաստիությամբ, զանգվածային տեսարանների կենդանությամբ, անգամ բեմում սոսափող եղևնիների անտառի բույրով՝ «Ես բաց չէի թողնում ոչ մի ներկայացում, գրել է Ստանիսլավսկին.՝ ոչ միայն դիտում, այլև ուսումնասիրում էի դրանք։ Ես գնահատեցի այն լավը, որ բերեցին մայնինգենցիները, այն է՝ երկի հոգեկան էությունը բացահայտելու բեմական հնարները»⁸։

Այստեղից են սկսվում Ստանիսլավսկու որոնումները, որ յոթ տարվա ընթացքում հանգեցնում են Գեղարվեստական թատրոնի ստեղծմանը (1898 թ.), դերասանի հոգե-

կան էությունը բեմական արդյունքի վերածելու փորձերին և ի վերջո «սիստեմին», որ 1905-06 թվերին արդեն հասունանում էր բանագոր մակարդակում։ Ուշագրավ է, որ 1905-ին, Գեղարվեստական թատրոնի ստուդիայի բացմանը, Ստանիսլավսկին կարդում է զեկուցում Անտուանի տեսական սկզբունքների մասին⁹։ Դա նախ մերժումն էր բեմական անձնավորման այն պատրաստի, կրկնվող ու ամրակայլող կերպաձեերի, որ Անտուանն անվանում էր marque d'uposu (արված կնիք), և Ստանիսլավսկին անվանելու էր շտամպ։ Իսկ եթե պատրաստ էր տեքստը (ուրիշ կերպ էլ չէր կարող լինել), պետք էր ելնել ոչ թե բառից ու ֆրազից, այլ ներքին պատճառից (motif)։ Անտուանի այս կուաչումը ներշնչել էր նաև պոլսահայ հինգերասան Մարտիրոս Մնակյանին, որ գրուցներ էր ունեցել Անտուանի հետ (1909 թ.) և խորհուրդ էր տալիս դերասանին՝ «պատճառը քննե...»¹⁰։ Բայց սա չատ ավելի հին սկզբունք էր, հայտնի Արիստոտելի «Պոետիկայից»։ Խոսքի մեջ մարդն «ինչից է խուսափում և ինչի է ձգտում»¹¹։ Ստանիսլավսկին կոնկրետացրել ու առարկայացրել է հարցը, ի հայտ բերել դրամայի սուբստանցը բեմում՝ ներկա պահը ներկա ժամանակով, որպես ակտիվ նախասկիզբ անձի բեմական ներկայության մեջ։ Սրանով է բեմական արվեստն առանձնանում գրականությունից, և այստեղ է «սիստեմի» բանական հատիկը։ Բայց ահա Ստանիսլավսկու ստուդիական փորձերից անտեղյակ գրաքննադատ Յուլիուս Այխենվալդը հանդես էր եկել էքսցենտրիկ մի հայտարարությամբ (1913 թ.), թե թատրոնը գոյություն չունի որպես ինքնուրույն արվեստ՝ «անհուսալիորեն կառչած է գրականությանը», իսկ գրականությունը կարիք չունի տեսանելի ու լսելի ձևերի, հրապարակային ու հանդիսավոր միջնորդության և իրականանում է «խոսքի աննյութ վրձինով, լոռության ու մենակության մեջ»¹²։ Այխենվալդը ճիշտ էր գրականագիտական տեսակետից,

իսկ թատերական քննադատությունը գրաքննադատության մի ճյուղն էր, չէր հանգել թատերագիտության, չուներ իր հասկացական ու եզրաբանական համակարգը¹³, և ոչ միայն գրաքննադատի, այլև թատրոնի մարդկանց համար պարզ չէր բեմական արվեստի սուբստանցը։ Այս անորոշության մեջ էլ Ալիսենվալդի ընդդիմախոսները (Վ. Սախնովսկի, Ա. Գլագոլ, Դ. Օվայանիկո-Կուլիկովսկի, Վ. Նեմիրովիչ-Դանչենկո, Ֆ. Կոմիսարժենսկի և այլք) չկարողացան տեսականորեն հիմնավորել բեմական արվեստի ինքնուրույնությունը։ Ստանիսլավսկին այս բանավեճին չէր մասնակցում։ Նա իր անձով, ֆիզիկապես և հոգեպես, կրում էր բեմական արվեստը և չէր պարզել դրա մետաֆիզիկան։ Իր ամենանուրը կուահումներում իսկ նա մնում էր փորձարար-հոգեբան։ «Սիստեմը» ձևավորվում էր որպես աշխատանքի եղանակ, տեսական առումով՝ դերասանի բեմական վարքագծի արտալեզվական քերականություն, որ իր միակողմանիությամբ հանդերձ (խաղի ու թատերայնության գանցառումով) մեզ հանգեցնում է բեմական արվեստի ներքին ձևի գաղափարին։ Ստանիսլավսկին չի հանգել դրա տեսական սահմանումին, բայց տվել է դրա հնարավորությունը։ Սա նրա որոնումների հեռանկարային արդյունքն է, մեր խնդրի տեսակետից ամենաէականը։

Ստանիսլավսկու օրագրաձև շարադրանքում մոտավոր գծերով առկա է և հստակված չէ տեսական շերտը։ Եթե հստակվի էլ, միևնույն է՝ դա հոգեբանական տեսություն է։ Համոզված, որ բեմական վարքագծի հոգեբանական հավաստիությունը բավական չէ արվեստի հասնելու համար, Ստանիսլավսկին բարոյագիտություն է ներարկել իր «սիստեմին»։ Չունենալով էսթետիկական հիմք, նա էթիկական հիմք է որոնել և հայտնագործել է իր բարոյահոգեբանական կատեգորիան՝ «գերիսնդիրը»։ Ինչ է դա, եթե ոչ հեղինակի բարոյա-հասարական իդեալի գիտակցումը բեմա-

կան յուշի ներքո։ Դրա հիմքում 19-րդ դարի ռուս գրականությունն է և գրականությունից ելնող գեղանկարչությունը, որ Ալեքսանդր Իվանովից մինչև պերեղվիժնիկներ սյուժետային-միզանացենային է և բարոյահոգեբանական առումով տեսանելի։ Այս համատեքստում են Հե Տոլստոյն իր բարոյագիտությամբ և ամբողջ ռուսական արձակը։ Ստանիսլավսկին, որպես ռուս մարդ և ռուս մշակույթի ծնունդ, արվեստում որոնել է ամենից ավելի բարոյական իդեալներ, արվեստը՝ զուտ բարոյական արժեքներում, արտիստին՝ բարոյապես կատարյալ անհատների մեջ և ձևակերպել է իր հավատո հանգանակը։ «սիրիր արվեստը քեզանում, ոչ թե քեզ արվեստում»։ Բայց հնարավո՞ր էր դուրս քաշել ինքնահիացումը դերասանի հոգուց, եթե դերասանը ինքն իր նյութն է ու գործիքը, եթե նա սիրում է իր զգացմունքներն ու իր անձը գարդասենյակի հայելու առջեւ։ Նույնացնելով բարին ու գեղեցիկը, Ստանիսլավսկին դերասանի անձի մեջ փնտրել է «առաքյալին գեղեցկի ու ծշմարտության» և... դեմ է առել քաղքենուն՝ թատրոնի սոցիալական հենարանին։ Նրան օր ու գիշեր հանգիստ չի տվել քաղքենու ներկայությունը թատրոնում ու թատրոնի շուրջը, և հանուն «ոգու կյանքի» ձեռքն է առել խարագանը, թե «տուն իմ տուն աղօթից կոչեսցի...»։

Անցել է «սիստեմի» ստուդիական կիրառման տասնմեկ ամիսը, և Ստանիսլավսկին գրել է. «Կարծում էի՛ մեր գրեթե մեկ տարվա աշխատանքը հանգեցնելու է ինձ ներշնչման, բայց ցավոք այս առումով «սիստեմը» չարդարացրեց իմ սպասելիքը»¹⁴։ Թվում է, եթե ոչ տասնմեկ ամիսը, գոնե տասր տարին բավական էր եղրակացության համար, բայց ահա տասր տարի անց (1922 թ.) Ստանիսլավսկին իրեն զգացել է փակուղու առջեւ։ «Իմ և խմբի միջև պատնեշ գոյացավ <...> Դերասանների համար դժվար էր ինձ հետ աշխատելը, ինձ համար՝ նրանց հետ աշխատելը <...> փորձված արտիստներից ոմանք սովո-

րեցին կենտրոնանայ բատ «սիստեմի» և սկսեցին ավելի մշակված (отделкой) ներկայացնել իրենց նախկին միայները¹⁵: Սիստեմն բմբոնվել էր ավելի շատ լսածով (پոհածլութեա), ուստի մինչ օրս ցույց չի տվել սպասվելիք արդյունքը¹⁶: Պարզ է, «սիստեմը» գեռ բանավոր բացատրությունների մակարդակում էր: Ծրագրի ձեռվ շարադրված ընդհանուր դրույթներն ամեն մեկի ձեռքին չէին:

«Սիստեմը» նաև գիտական քննադատության էր հանդիպել: Առաջին քննադատը յեզվաբան, փիլիսոփա, հոգեբան և գեղագետ Գուստավ Շպետն էր՝ ամենահեղինակավոր գեմքերից մեկը ուսւագիտական միջավայրում և ամենահեղինակավորը թատրոնի գեղարվեստական խորհրդում: Ստանիսլավսկին այս մասին լուսմ է: Ինչպես նկատեցինք, նա իր երկրորդ խոստովանությունն արել է ստուդիական փորձերի տասներորդ տարում: Այդ նույն տարում էլ տպագրվել է Շպետի ընդարձակ հոդվածը, որտեղ Ստանիսլավսկու անունը չի տրվում և չի տրվում որևէ անուն, բայց պարզ է՝ նկատի է առնված «սիստեմի» շուրջ ստեղծված իրավիճակը: Հոգեբան փիլիսոփան մերժում է զգացմունքը որպես արվեստի ինքնին բովանդակություն: Նա անհնար չի համարում բեմական ապրումը, բայց անհեթեթ է համարում արվեստի գնահատումն այդ չափանիշով (“нелепа расценка игры”)¹⁷: Ստանիսլավսկին որքանո՞վ էր պատրաստ բանավեճի, եթե ասում էր՝ «ինձ հասկացան գլխով, ոչ թե զգացմունքով»¹⁸: Իսկ ստեղծագործական նահանջը, որ հրաշալիորեն գիտակցում էր ինքը, արդյո՞ք ժամանակավոր էր: Հետամուտ «Ճշմարտության զգացմանն ու համարական գործի դնելով «Հոգեկան կյանքի շարժիչները», նա իրենում իսկ կանխել էր խաղալին տարերքը և ի վերջո... ներկայացման պահին կանգ առավ ու ձեռքը տարավ սրտին:

Դա տեղի ունեցավ 1928-ի Հոկտեմբերի 29-ի երեկոյան, թատրոնի երեսնամյակի հանդեսի երկրորդ օրը, «Երեք

քուլր» պիեսի ներկայացման առաջին գործողությունում¹⁹:

Բեմ է մտնում Ստանիսլավսկիին Վերշինինի դերով: Ծափահարություններ: Նա արտասանում է առաջին բառերը և՝ սուր ցավ սրտի շրջանում: Լուսմ է, հաղթահարում իրեն և խաղը շարունակում մինչև այն պահը, երբ, բատ հեղինակային ռեժարկի, անցնելու է բեմի խորքը: Այստեղ նա իմաց է տալիս կույիսում կանգնածներին, որ հանդիսասրահում է իր անձնական բժիշկը, և շարունակում է խաղը²⁰: Հանդիսականը ոչինչ չի նկատում, խաղակիցները նույնպես, դաշլիճում հանդիսականի լուռ շարքերի մեջ բժիշկին են փնտրում, իսկ դերասանն ուշագնացության եզրին արտասանում է մարդարեական խոսքեր:

Վերշինին.<...> մեր ճակատագիրն է այսպես, ոչինչ չես կարող անել. այն, ինչը մեզ այսօր թվում է լուրջ, նշանակալից ու կարևոր, կգա ժամանակ, կմոռացվի կամ կթվա անկարեւոր: (Դադար): Եվ հետաքրքիր է, չենք կարող իմանալ՝ ինչը հատկապես կարող է համարվել բարձր, վեհ ու կարևոր, և ինչը ողորմելի ու ծիծաղելի²¹:

Ու՞մ մտքով էր անցնելու, որ սա դերասանի վերջին ելույթն է, և մարդն իր ճակատագիրն է կարդում:

Տեսարանն ավարտվում է, վարագույրը փակվում է, ծափահարություններ, դերասանը դուրս է գալիս ծափերն ընդունելու, երկրորդ անգամ են բեմ հրավիրում, երրորդ անգամ... բժիշկը նրան գտնում է բազմոցին պառկած: Սրտամկանի ինֆարկտ:

Հիվանդանոցում, տասներորդ օրը, սիրտը երկրորդ հարվածն է կրում: Առավել ծանր է լինում երրորդ հարվածը, որ արդեն ֆիզիկական չէր: Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնում լսվում է

մարքսիստ թատերագետ Պավել Նովիցյանը գեկուցումը՝ «ՄԳԹ Հոբելյանի սոցիոլոգիան», ուր քննադատվում է Ստանիսլավսկու և՝ արվեստը, և՝ «սիստեմը» որպես միատիկական ու իդեալիստական, «դարաշրջանից օտարված»²²: Իսկ կոմունիստական երիտասարդության օրաթերթը հրապարակում է ոմն ակտիվիստ իվան Զվեզդիչի մեկնաբանությունը՝ «ՄԳԹ Հոբելյանը մարքսիստական թատերագիտության դատաստանի առջև»²³: Որակումներն անհեթեթ էին, առարկելոր վտանգավոր, մնում էր փրկել արտիստի կյանքը:

Բուժումը տեսում է ամիսներ, և Ստանիսլավսկին այլևս բեմ չի բարձրանում:

Պատճառը գուցե «սիստեմը» չէր, բայց «սիստեմն» էր պատճառը, որ 1934 թվից Ստանիսլավսկին չմտավ այլևս իր թատրոնի: Նա շարունակեց իր աշխատանքը օպերադրամատիկական ստուդիայում, երեկոները փակվելով Լեռնտեյան նրբանցքի իր տանը, որպեսզի ավարտին հասցնի «սիստեմը»: Այցելուներին ընդունել է պատշաճորեն, բարեկիրթ ժամանով, բայց և չի թաքցրել իր մուայի մտքերը, դժողովությունը նախկին աշակերտներից, որ չեն հասկանում իրեն, անկեղծ չեն, դավաճանել են իրեն և այլն, և այլն: Վերապահումներով է խոսել իր նախկին աշակերտի՝ Վախթանգովի մասին, որ տասներկու տարի առաջ էր վախճանվել: Գեղարվեստական թատրոնի մասին ասել է, որ «դժվար չրջան է ապրում, ճգնաժամի եզրին է»²⁴: Ինչո՞ւ: Թատրոնը չէր ընդունել «սիստեմը»: Հույսը հիմա անդիրեն թարգմանությունն էր, որ հրատարակվելու էր Միացյալ Նահանգներում: Թարգմանությանը ձեռնարկել էր իր ամերիկյան բարեկամուհին՝ Էլիզաբեթ Հեփբուդը, որ օր-օրի հետեւ է գործի ընթացքին, մեկ առ մեկ ստանալով գիշերը գրված էջերը: «Ինձ սարսափեցնում է, — գրել է նա, — որ դու քեզանից քամում ես այս գիրքն ուշ գիշերներին, երբ այլևս ի վիճակի չես աշխատելու և

տեսնելու արվածի արդյունքը»²⁵: Նա գդադել է, որ այս մարդու հոգեկան դրամայում ոչ միայն անձի ու միջավայրի, այլև ստեղծագործողի ու հետազոտողի շխոստովանված հակասությունն է: Գիտական նպատակներ չհետապնդելով նա գիտության շափիղն էր ընկել ու տարակուում էր. «Գրում ու մտածում եմ, թե պե՞տք է այս ամենը <...> Մի քանի տարի, և այս գիրքը հնացած կլինի, ես բնդառաջ կդնամ մեկ այլ նորության, եթե ապրեմ»²⁶:

Ինչի՞ էր բախվել մարդը, երկրորդված կյանքի անհնարինությա՞ն, թե անհնարին կյանքի արվեստում: Նա ավարտել էր իր կյանքն արվեստում և կանգ առել որպես մտածող:

Գրքի ոռուսերեն տարբերակը նա ավարտին հասցրեց գաղափարական հարկադրանքի ու պետական ահաբեկչության ամենածանր շրջանում (1937 թ.)²⁷: Գաղափարական տուրքեր տալ չէր կարող, պաշտոնական գաղափարախոսությանը չէր տիրապետում: Բայց դրա փոխարեն նա ուներ իր բարոյագաղափարական հավատամքը և այդ էր շեշտում գրքի նախավերջին՝ 15-րդ գլխում. «Գերիննդիր»: Գաղափարական գրաքննիչը կանգ էր առել վերջին գլխի վրա ողջամիտ մի պահանջով՝ բացատրել ինտուիցիա և ենթագիտակցություն հասկացությունները, կամ՝ «ի՞նչ ասել է գեղարվեստական հոտառություն, ինչո՞ւմ է դա արտահայտվում»²⁸: Տրամարանական էր այս պահանջը: «Այստեմր» կառուցված էր ամբողջապես ողջամտության հողի վրա, ենթագիտակցականի գաղափարն այդտեղ չէր արդարանում, և գրաքննիչը ձեռքը դրել էր թույլ երակին: Հեղինակը պատրաստ չէր ոչ իրականացնելու նրա պահանջը, ոչ էլ բանավիճելու: Մնում էր արտիստի անօգնական արդարացումը. «ինչ որ բան ներքուստ տիրապետում է մեզ, և մենք հաշիվ չենք տալիս, թե ինչ է կատարվում մեզ հետ»²⁹:

1938-ի հուլիսի 10-ին նա տեսավ իր գրքի շարվածքը և հատվածներ գրական մամուլում։ Կարդաց ու հոգոց քաշեց։

— Ի՞նչ անհետաքրքիր է սա³⁰։

Ի՞նչ է մտածել, չգիտենք։

Սեղանին էին երկրորդ մասի նյութերը, որ ամբողջացված չէին որպես սիստեմ և այլ կողմ էին թեքում՝ հոգերանությունից ուրախ գուրս, իր խոսքով ասած՝ «Փիզիկական գործողությունների մեթոդին»։ Այդ նյութերը հետագայում հավաքեցին ու դասավորեցին ուսումնասիրողները և համարեցին «սիստեմի» շարունակությունն էր, պակասավոր էր, եթե այլ համակարգ էր, հակառակ էր «սիստեմին»։

Կիրառական հոգերանության դասրնթացն առաջին գրքով, անկախ որոշ ներքին հակասություններից, ամբողջանում ու փակվում է։ Երկրորդ գիրքը, որ կազմված է առանց որոշակի սկզբունքի, այլևս հոգերանություն չէ։ Դա կերպածեման արտաքին միջոցների բացատրությունն է առանձին-առանձին՝ տոն, պյաստիկա, տեմպառիթմ և այլն։ Սա արդեն ֆրանսիական դպրոցն է, որ ոռուս միջավայրում յուրացվել էր իշխան Սերգեյ Վոլկոնսկու աշխատություններով³¹։ Ինչպես են արտաքին միջոցները հարմարեցվելու «Հոգեկան կյանքի շարժիչներին», որտեղ է կապը, ո՞րն է ամբողջացյալը (ինտեգրալ) որպես բեմական գործողության էսթետիկական կարգավորիչ։ Այստեղ է կանգ առել «ոգու կյանքը» որոնողի միտքը։ Իսկ ենթագիտակցության խնդրի վրա գրաքննիչը կանգ չէր առնի, եթե հոգու կյանքը նյութականորեն դիտողի աշխատությունում չգործածվեր «ոգի» (ԾԱՀ) բառը։ Եվ արվեստագետն այստեղ պատասխան չուներ։ «Կան ստեղծագործական գգացողություններ,— ասում էր նա,— և եթե գիտակցենք մեր գործողություններն այդ պահերին, չենք համարձակվի դրանք վերարտադրել այնպես, ինչպես ի հայտ

ենք բերում»³²: Այսպես խոսել նշանակում էր հրաժարվել բեմական գգացմունքների կառավարման որևէ գիտակրթ-ված եղանակից: Մնում է մտածել, թե իսկապես ինչ կարող էր նշանակել հեղինակի վերջին խոսքը:

* * *

«Սիստեմի» շուրջն ստեղծված գրականությունը հիմ-նականում ջատագովական է (Ն. Գորչակով, Ն. Տոպորկով, Մ. Կեդրով, Ն. Աբալիկին, Մ. Կներել, Բ. Զախարավա, Պ. Եր-շով, Ն. Բերկովսկի, Վ. Ասմուս, Յու. Կալաշնիկով, Ա. Սմել-յանսկի, Ա. Մուր, Ռ. Հետմոն, Ռ. Լյուիս, Շ. Կարնիկե և այլք), չհաշված որոշ բացառություններ: Գիտական են Պ. Սիմոնովի աշխատությունները Փիզիոգիական և հոգե-բանական տեսակետից³³: Գիտականության են մոտենում Պյոտր Երշովի աշխատությունները որպես «սիստեմի» հե-տևողական մեկնաբանություն նեղ հոգեբանական տեսա-կետից³⁴: Երշովը նկատի ունի Ստանիսլավսկու որոնում-ների բուն առանցքը՝ բեմական գործողության ներքին գիծն առանց շեղումների: Ինչպես նկատել է գրքի առա-ջարբանի հեղինակ Վ. Տոպորկովը, «Երշովի աշխատու-թյունն առաջին շարժումն է այդ ուղղությամբ»³⁵: Այդ շարժումը չի շարունակվել: Դերասանի բեմական վարքա-գծի հոգեբանական իսկությունը Երշովը գիտում է որպես գեղարվեստական ճշմարտություն: Այդ է ասում իր երկ-րորդ գրքի վերնագիրը՝ «Ուեժիսուրան որպես գործնական հոգեբանություն»³⁶: Սա այն է, ինչ մերժել էր Գեորգ Զիմմելը Երշովից վաթսուներկու տարի առաջ:

Ծուս մեկնաբանների շարքում առանձնանում է հոգե-բան-գեղագետ Լև Վիգոստսկին: Ստանիսլավսկու հայեցա-կետը նա քննում է Դիգրոյի «Դերասանի պարադոքսի» լույսի ներքո և բեմական վերապրումը բացատրում է ոչ կենսաբանորեն, այլ որպես անհատի բարոյահասարակա-կան ձգտում: «Ստանիսլավսկու հոգեբանական նատուրա-

լիգմր, — գրում է նա,— ծառայում է բոլորովին այլ ոճաբանության»³⁷: Վիգոտսկին հանգեցնում է բեմական գդացմունքի թերևս ամենաձմարիտ բմբոնմանը՝ «դերասանի անձի սահմաններից դուրս», որ նշանակում է գդացմունքի իդեալականացում ըստ գրամատուրգիական երկի հասարակական բովանդակության:

Շարունակելով հետեւել Ստանիսլավսկու ռուս մեկնաբաններին, կանգ ենք առնում «Երկերի ժողովածուի» երկրորդ հրատարակության երկրորդ հատորի առաջաբանի վրա (1989): Հեղինակը՝ Ա. Սմելյանսկին առանձնանում է բոլոր մեկնաբաններից իր չափավոր ջատագովությամբ. ոչ խոնարհում, ոչ մերժում, այլ գիտականորեն անաչառ վերաբերմունք դերասանի արվեստի ռուսական դպրոցի տեսակետից: Սա նաև մերժումն է այն անքննադատ հիացման, որ, ինչպես ասում են, եղավ Ստանիսլավսկու «Երկրորդ մահը»³⁸:

Վերջին ժամանակներս ռուսական թատերական միջավայրում մերժողական տրամադրություններ են նկատվում Ստանիսլավսկու «սիստեմի» հանդեպ, բայց ոչ գիտական վերաբերմունք: Դրա դրսելորումներից է Տուլայի համալսարանի գոցենտ Բորիս Սուչկովի «Ապագայի թատրոնը» գիրքը (Տուլա, 2010 թ.): Հեղինակը փորձում է զարգացնել անորոշ մի գաղափար՝ «դեմիուրգիական թատրոն»³⁹, և ի՞նչ է դա, հայտնի չէ: Հեղինակի գեղարվեստական իդեալն անորոշ է, առավել անորոշ է էսթետիկական ելակետը, բայց ցցուն է հոետորական պաթուր, ուստի անիմաստ են դառնում նաև ճշմարիտ մտքերը, որ միշտ էլ կարող են լինել:

Ոուս մեկնաբանները հիմնականում անվերապահ են «սիստեմի» հանդեպ և ջանում են ամեն գնով ապացուցել իրենց վարդապետի հանճարեղությունը, ոմանք էլ գաղափարական հակառակորդներ են տեսնում «սիստեմի» արտասահմանյան քննադատների մեջ⁴⁰: Գիտության օգտին

չէ այս մոտեցումը։ Գիտության օգտին չէ նաև, երբ հիմնավորումները փնտրվում են «սիստեմից» դուրս՝ Ստանիսլավսկու տարբեր դատողություններում և գեղարվեստական որոնումներում, որոնք հրաշալիորեն ներկայացված են «Իմ կյանքն արվեստում» Հուշագրության մեջ և կապ չունեն կիրառական հոգեբանության հետ։

Այստեղ մի հանգամանք կա, որ չեն նկատում կամ տրամադրի չեն նկատելու Ստանիսլավսկու ոռւս ջատագովները։

Հուշագրության մեջ, խոսելով «սիստեմի» անարդյունք կիրառման մասին, Ստանիսլավսկին չունի որևէ ակնարկ իր ստուդիական փորձերի էության ու սկզբունքի մասին։ Այստեղ չի երևում «սիստեմ» որպես հայեցակետ, չկա այդ տեսակետից դիտված որևէ բեմական դեպք, խաղային դրվագ, դրական կամ բացասական առումով։ Հեղինակը պարզ ասում է, որ արդյունքի չի հասել և թատրոնում էլ դիմադրության է հանդիպել։ Նա այստեղ որևէ ակնարկ չունի, թե իր «Կյանքն արվեստում» գիրքն սկիզբն է «սիստեմի»։ Եվ միայն տասնհինգ տարի հետո գրում է. «Ես մտահղացել եմ մի մեծ, բազմահատոր աշխատություն գերասանի վարպետության մասին, այսպես կոչված, «Ստանիսլավսկու սիստեմ»։ Արդեն հրապարակված «Իմ կյանքն արվեստում» գիրքը դրա առաջին հատորն է՝ նախաբանը»⁴¹։

Հեղինակի այս ուշ մտածված խոսքն ընդունենք ի գիտություն և «սիստեմ» ասելով հասկանանք բոլոր գրքերը։

Հարզն այստեղ այլ բովանդակություն է ստանում։ Ստանիսլավսկու գրական ժառանգությունն ամբողջությամբ, ներառյալ գրառումները, հոդվածները, նամակները, կազմում են նրա ուսմունքը (ոռուսերեն՝ սկզբանական այս բառը հաճախ գործածում են համարական համարական կամ փոխնիփոխ, և հաս-

կազությունները շփոթվում են: Այս անորոշության դիրքից էլ քննադատվում են այն մեկնաբանները, ովքեր «սիստեմ» ասելով հասկանում են առաջին մասը՝ այն, ինչը վերաբերում է դերասանի հոգեբանական աշխատանքին: Բայց սա է, որ մտածված է որպես համակարգ՝ տարրերի փոխպատճառաբանված հարաբերություն ներփակ ամբողջության մեջ: Իսկ ուսմունքը (յշենու) ներփակ չէ. դա Ստանիսլավսկու գեղարվեստական աշխարհայացքի ամբողջությունն է, որ կարող է ենթադրել տարբեր համակարգերի համադրում (և այդպես է), և չպետք է շփոթել այդ իր մասնակի դրսերման՝ «սիստեմի» հետ: Ամերիկյան մեկնաբանները կողմնորոշվել են մեկ բառով՝ method, և «սիստեմի» որոշ ներքին շեղումներ տեսանելի են դարձել: Ստրասբերգը ճիշտ էլ բնդունել է առաջին մասը որպես մեթոդ՝ այն, ինչը համեմատաբար անհակասական է ներկայանում 1936 թվի անգլերեն հրատարակությամբ: Գայով տարբեր բանավեճերին, պետք է նկատենք, որ հակասությունը ոչ այնքան «վաղ» Ստանիսլավսկու և «ուշ» Ստանիսլավսկու միջև է, արքան արտիստի և տեսաբանի:

Ստանիսլավսկի արտիստը և Ստանիսլավսկի տեսաբանը տարբեր «մոլորակներում» են: Մեկը գեղարվեստական ձևաստեղծման իր ուղիներն է ճշտում, մյուսը՝ «հոգեկան կյանքի շարժիչները» բեմում և, այնուամենայնիվ, արվեստից դուրս: Մեկը ոգու (դյուք) ոլորտում է, մյուսը հոգու (դյուա):

Ոուս մեկնաբանները չե՞ն կարողանում, թե չեն ուզում տեսնել այս տեսանելի տարբերությունը:

Դիմենք հոգեվերյուծաբանին:

«Երբ մենք քննում ենք հոգեբանության հարաբերությունն արվեստի հետ, — գրում է Գուստավ Յունգը, — կարող ենք նկատի ունենալ միայն մեկ հայեցակետ՝ այն, ինչ վերաբերում է հոգեբանությանը <...> հոգեբանն ինչ էլ ասի արվեստի մասին, վերաբերելու է միայն ստեղծման

պրոցեսին, ոչ թե ներքին էռլթյանը։ Նա չի կարող բացատրել արվեստը...»⁴²։

Մեկնաբանները երկրորդ սխալն են գործում, երբ Գեղարվեստական թատրոնն ուղղակիորեն կապում են «սիստեմի» հետ։ Այդ կապն անուղղակի է։ «Սիստեմը» որոշակիորեն արդյունքն է ոռւսական ռեալիզմի, նաև Գեղարվեստական թատրոնի գեղագիտության, բայց թատրոնը «սիստեմի» արդյունքը չէ։ Թատրոնն ստեղծվել է ստուդիական փորձերից տասնհինգ տարի առաջ (1898 թ.)։ Նկատի առնենք նաև այդ փորձերին մասնակից Վախթանգովի վերաբերմունքը։ Նա տարրանջատել է Ստանիսլավսկու ուսմունքը և Գեղարվեստական թատրոնի էսթետիկան։ Հայտնի է նաև, որ առաջին ստուդիան մեծ արդյունքի տվել։ Երկրորդի շրջանավարտները եղել են Վախթանգ Մշեգիշվիլու աշակերտները՝ Նիկոլայ Խմելյովը, Ալլա Տարասովան, Միխայիլ Յանչինը, Անաստասիա Զուկան՝ տարբեր խառնվածքի ու ոճի դերասաններ։ Դժվար է ասել՝ նրանք նախկին վարպետների փո՞րձն էին բերում, թե «սիստեմն» էր նրանց միտք ու տաղանդ տվել։ Ստուդիական փորձի ամենաուղղափառ հետևորդը եղավ Միխայիլ Կեդրովը՝ Ստանիսլավսկու առաջին օգնականը «սիստեմը» գրքի վերածելու գործում, որ արվեստում չստեղծեց մեծ եղանակներ և ապավինեց պաշտոնապես բնդունված ուղղությանը՝ սոցռեալիզմին։

Ստանիսլավսկու անվան ու արվեստի օգտին չէր այն, ինչ կատարվեց նրա ուսմունքի շուրջ հետագայում։ «Սիստեմն» ընդունվեց և պարտադրվեց որպես բարոյագեղագիտական դավանանք ու վերածվեց «ավետարանի» ստայինյան մոնոկոնցեպտուալիզմի շրջանում, երբ յուրաքանչյուր բնագավառում գործելու էր մեկ սկզբունք և պաշտվելու մեկ հեղինակություն։ Գրականության մեջ և արվեստում միակն ու անվիճելին լինելու էր կյանքի արտացոլումն իր լուսավոր կողմերով և դրական հեռանկա-

բում: Ստանիսլավսկու բարոյահոգեբանական դոկտրինան դժվար չէր ծառայեցնել բարոյա-քաղաքական նպատակների և պաշտոնական լավատեսությանը:

Ստանիսլավսկին չէր նախատեսել ու չէր կարող կռաշել այդ:

Ստանիսլավսկին մեծարված անուն է Արևմուտքում ու Միացյալ նահանգներում: Գեղարվեստական թատրոնի ներկայացումները մեծ տպավորություն են թողել Բեռլինում, Լայպցիգում, Վիեննայում, Նյու Յորքում (1906 թ., 1922-24 թթ., 1928 թ.), բայց դա Ստանիսլավսկու արվեստի տպավորությունն է եղել, ոչ տեսության: Հետաքրքրությունը «սիստեմի» հանդեպ դրա արդյունքն է, և սկսվել է 1936 թ. անգլերեն հրատարակությամբ, որը խորությամբ են րմբռնել ամերիկյան թատրոնի գործիչները: Այստեղ առաջին տեղում է Լի Ստրասբերգը Նյույորքյան իր ստուդիայով, 40-ական թվականներից մինչև 80-ական թվականների սկիզբը, նույն շրջանում և մինչև 90-ական թվականները՝ Ստելլա Ագյերը, ապա Ռոբերտ Հետմոնը, Սոնյա Մուրը և այլք: Վերաբերմունքը «սիստեմի» հանդեպ հակասական է եղել: Ստրասբերգը, ինչպես երեսում է Հետմոնի հետ ունեցած գրույցներից, որոյ վերապահումներ է ունեցել: Նա հիշեցնում է, որ Ստանիսլավսկուն վերագրվող շատ սկզբունքներ նախկինում էլ գիտակցվել են, թեպետ չեն ամբողջացվել: «Ստանիսլավսկու մեթոդը սիստեմ չէ, — ասում է նա. — այնտեղից փոխառված շատ բան ես հարձարացրել եմ իմ սեփական փորձին (something of my own work)»⁴³: Այնուամենայնիվ Ստրասբերգը մնացել է ուղղափառ ստանիսլավսկիական: Նա որպես սկզբունք բնուդունել է դերասանի հոգեբանական աշխատանքը՝ այն, ինչն ամբողջական ու համակարգված է 1936 թվի անգլերեն հրատարակության մեջ: Արտաքին կերպածերին առնչվող ակնարկները նա «սիստեմից» դուրս է համարել:

Այս ինդրի շուրջ բանավեճ է ծագել Ստրասբերգի և Ստելլա Աղերի միջև, որին հետագայում անդրադարձել է Շարոն-Մարիա Կարնիկեն իր յուրահատուկ բացատրությամբ, թե հակասությունը վաղ Ստանիսլավսկու և ուշ Ստանիսլավսկու շուրջն է: Այն, ինչ Կարնիկեն համարում է «ուշ», գործի երկրորդ՝ անսիստեմ ու անավարտ մասն է, որ Ստանիսլավսկին չի հանձնել Հրատարակության: Հակասությունները մնացել են չյուծված:

Բոլոր հարցերը մեկնաբանները քննել են գործնական տեսակետից, առանց գիտական հիմնավորումների, և այս տակնուգլուխ վիճակը ժամանակին (1957 թ.) առիթ է տվել մի մեծ բանավեճի, որ կազմակերպել է գերասան, բեմադրիչ և թատերական մանկավարժ, «սիստեմը» որպես աշխատանքի եղանակ յրջորեն քննող Ռոբերտ Լյուիսը: Նա իր գործունեությունն սկսել էր Ստրասբերգի հետ և 1947-ին առանձնացել ու ստեղծել էր իր ստուդիան ու թատրոնը: Բանավեճն առիթ է տվել Լյուիսի «Մեթոդը, թե խելագարություն» (“Method-or Madness”) գրքին, որ տպագրվել է հաջորդ տարի՝ 1958-ին, նյու Յորքում: Լյուիսը բազում տարբերություններ ու հակասություններ էր տեսնում ինչպես ջատագովների, այնպես էլ մերժողների դատողություններում, օգտակար և անօգուտ (“...many different interpretations, some successful and some less so”)⁴⁴: Իրողությունն այն էր, որ «սիստեմի» շուրջ չկար սիստեմավորված մտածողություն, և Լյուիսն այս իրավիճակը բնութագրեց մեկ բառով՝ «խելագարություն»: Լյուիսը դեմ էր «սիստեմի» ինչպես մոլեուանդ ջատագովներին, այնպես էլ թանձրամիտ (lumped) բնդդիմացողներին: Լյուիսի գրքից յոթ տարի անց՝ 1965 թվին Հրապարակվեց Ստրասբերգի փորձի բնդարձակ գրառումը Ռոբերտ Հետմոնի ձեռքով, ապա՝ Սոնյա Մուրի մատչելի ձեռնարկները և այլն: Այս ամենի հիման վրա Կարնիկեն մեծ ջանասիրությամբ ու

եռանդով շարունակում է քարոզել Ստանիսլավսկու «սիստեմն» ու գաղափարները մինչ օրս:

Ստանիսլավսկուն հարևանցիորեն է անդրադառնում Հոգեբան-թատերագետ Գյենն Վիլսոնը: Նրա մոտեցումը բացարձակորեն դուրս է գեղագիտությունից: Հոգեբանությունը նա ոչ արվեստի, ոչ էլ ստեղծագործության վրա է տարածում, այլ արհեստի և աշխատանքային բնավորության: Տպագորությունն այնպիսին է, թե նա այնքան էլ լավ չի կարդացել Ստանիսլավսկու աշխատությունը, այլապես կօգտվեր իր խնդրին ծառայող դրույթներից, հատկապես առաջին գրքից, ուր արծարծվում է իրեն զբաղեցնող գյխավոր հարցը՝ բեմական հուգումը: Այստեղ, ինչպես կտեսնենք, Ստանիսլավսկու փորձերը շատ ավելին են ասում, քան Վիլսոնի խորհուրդները: Անդրադառնալով Ստրասբերգին, Վիլսոնը նկատում է, որ Ստանիսլավսկուց եկող նրա եղանակները կիրառելի են կենցաղային-Հոգեբանական պիեսների բեմադրություններում և ավելի շատ կինոյին են նպաստել⁴⁷, որտեղ դերասաննր դրսեորդում է մարդկային ակնհայտ նկարագրով և հավասարվում է նատուրայի, երբեմն չառանձնանալով իր հետ նկարահանվող պատահական մեկից:

Արևմտաեվրոպական բեմերի գրեթե բոլոր նշանավոր գործիչներն իրենց մեմուարային և այլ կարգի դատողություններում չեն մոռանում ուսւ բեմի մեծ բարենորոգչի անունը, բայց «սիստեմի» նրանց րմբոնումը մոտավոր ու ընդհանուր է, և բացակայում է քննական վերաբերմունքը: Գյխավոր ու ելակետային սկզբունքն այնքան էլ հստակ չէ կարծիքներում ու դատողություններում: Ինչպես սրամտորեն նկատել է Սմելյանսկին, «սիստեմը» շատերին հասել է «օդային ճանապարհով»: Բոյորը չէ, որ ամբողջությամբ կարդացել են այս երկարաբան ու կենցաղայնության միտու տրամախոսությունների շարքը: Շատերը դատում են ինչ-որ հատվածների կամ լսածների հիման

վրա, կարդացողներն էլ հետևողական չեն գտնվել ու կորցրել են միջանցիկ թելր։ Շատերն էլ յուրաքացի են սկզբունքը և Ստանիշավսկու անունը չեն տալիս։ Պիտեր Բրուքն օրինակ՝ շրջանառության է դրել «մեռած թատրոն» (deadly theatre) հասկացությունը⁴⁵ և չի ակնարկում ոչ Անտուանի ասած «տրված կնիքը», ոչ էլ Ստանիշավսկուն, որ նույն այդ երևույթն է մերժել շտամպ բառով։ Իսկ նրանք, ովքեր ուշադիր են կարդացել, իրենց սկզբունքային առարկություններն ունեն։ Ձո՞ն Գիլգրդն, օրինակ, նկատել է, որ «առաջարվող հանդամանքների» և զգացմունքների տրամաբանությամբ կարելի է մոտենալ դրամային, բայց ոչ կատակերգությանը։ Կատակերգություններ կան, որտեղ իրադրությունը հորինվում է զրոյական կետից կամ իրերի տրամաբանությանը հակառակ վիճակից, իսկ «սիստեմր» պարագոքսներ չի բնդունում։ «Սիստեմր» չի մոտենում նաև զգացմունքների պոետականացմանը, իսկ չափածո տեքստի հանդիպելիս պատասխան չունենք։ Արդարացված է Մայքր Ռեդգրեյվի կարծիքը, որ «սիստեմպ» անհնար է մոտենալ Շեքսպիրին։ Այս կարծիքին է նաև Ռոբերտ Լյուիսը, վկայարերելով Ձո՞ն Բարրիմորի և Գիլգրդի դերակատարումները։

«Սիստեմի» հանդեպ գրեթե անվերապահ են ամերիկյան թատրոնի և կինոյի գործիչները։

Ամերիկան թատրոնի երկիրը չէ, ինչպես Անգլիան կամ Ֆրանսիան։ Սա կինոյի երկիրն է, և այստեղ է Ստանիշավսկուն անվերապահորեն ընդունելու հիմքը։ Ստրասբերգն ու նրա հետեւորդները կինոաստղեր են պատրաստել։ Դա բնական է, եթե նկատի առնենք կինոյի բնույթը որպես կենդանի իրականության առանձնահատուկ բնկայում՝ դիտակետերի ու պատկերային կապակցումների (մոնտաժ) խաղ, որտեղ դերասանը գործող սուբյեկտ չէ, ինչպես բեմում, այլ դիտվող օբյեկտ, որ ներկայանալու է իրական ու իրային։ Այստեղ նրա առջև դրվում է բնահոգեկան հա-

վաստիության խնդիր, որ այլ գեղագիտություն է: «Նկարահանվել, ոչ թե խաղալ», ասել է Սերգեյ Յուլյակին⁴⁶, երբ տեսել է իր առաջին փորձի արդյունքն էկրանում: Նկարահանված դերասանը կարող է գործող սուբյեկտի տպավորություն թողնել, բայց դա պատրանք է, ոչ թե անձի խաղային ներկայություն: Դա ունի իր դժվարությունները բեմում վարպետացած դերասանի համար, նաև դյուրությունները, երբ պատահական մեկր տպավորություն է թողնում դերասանի կողքին: Հեշտ է, եթե չկա անձերի շփման և գործողության անընդմիջությունը պահելու խնդիր, երբ դա մոնտաժով է ստեղծվում ու սիթմավորվում: Դա խաղային ոիթմ չէ, այլ պատկերաժամանակային կառույց, որին դերասանը մասնակցություն չունի և տեսնելով իրեն զարմանում է, թե ինչ է արել իր կարողությունից վեր: Եվ կա մի հաղթահարելի, բեմին վարժվածի համար անընդունելի դժվարություն. լինել ֆիզիոլոգիապես բնական: Եվ այնուամենայնիվ «սիստեմի» կիրառումը նման «խաղի» մեջ մեծ կարողություն ու ջանք չի պահանջում, և դյուրացրել է դերասանի գործը կինոյում:

Այսպիսով, Ստանիլավսկու «սիստեմը» 21-րդ դար է մտել ոչ բեմական որոնումների, այլ կինոտեխնիկայի զարգացման շնորհիվ և ի հայտ բերել իր նորագույն կիրառում:

«Սիստեմի» ամենահետևողական քարոզչուհի միսիս Կարնիկեից հետո ասպարեզ մտավ իրեն ու իր դպրոցը ռեկամող տիկին Իվանա Զաբբարը «տասներկու քայլ դեպի Հոլիվուդ» հայտարարությամբ: Նրա տասներկու դասից է կազմված «Դերասանի կարողությունը» (2004 թ.): Այս ուսումնական ձեռնարկը կարծես նախատեսում է թատերական կրթությունը, բայց ծնունդ է տվել նոր կինոաստղերի: «Այս գիրքը կօգնի ձեզ բացահայտելու ձեզանում հանճարեղ (՞ – Հ.Հ.) դերասանին», – գրել է

«Հոս Անջելես թայմղի» թատերական մեկնաբանը: Բայց ինչո՞ւ անպայման «Հանճարեղ»: Ի՞նչ կասեր այստեղ իր գրքի շարժածքին հարցականորեն նայող Կոնստանտին Սերգեևիչը: Այս գրքի ներածությունում թեթևակիորեն տրվում է Ստանիսլավսկու անունը, բայց բոլոր «տասներկու քայլերը» ոչ այլ ինչ են, եթե ոչ «սիստեմի» ստեղծագործական պարզեցումն ու մեկնությունը: Տիկինը գրում է, որ «դերասանի խաղի անբաժանելի մասն են կազմում մարդու սեփական ապրումների ուսումնասիրությունն ու ըմբռնումը, և դա հանրահայտ ճշմարտություն է շնորհիվ Ստանիսլավսկու»: Դրանից Հետո արժե՞ասել, թե իր մեթոդը «տարբեր է նախորդ բոլոր մեթոդներից: Ինչո՞վ: «Նրանով,— ասում է,— որ ես սովորեցնում եմ դերասանին քննել սեփական հույզերը ոչ որպես վերջնական արդյունք, այլ նպատակին հասնելու եղանակ»⁴⁷: Այս դատողությունը պարզ շարունակությունն է Ստանիսլավսկու գրքի «Էմոցիոնալ հիշողություն» գլուխի: Սկզբունքը սակայն այլ կերպ է գարդացվում՝ հանգեցվում է ֆիզիոգիական հիշողության, հասցվում այկոհոլիկմի, սեքսի, հետապնդման, սարսափի, սպանության ու կաթվածահարության գիտակցմանը: Դերասանն այստեղ վերջնականապես հասցվում ու դիտվում է որպես ֆիզիոգիական օբյեկտ, որ գուցե պետք է նյարդեր կեղեքող ֆիլմեր արտադրող ամեն օպերատորի, բայց ոչ թատրոնին:

Իվանա Զարբաքի կիրառական հոգեֆիզիոգիան իր դրական կողմերում էլ ազատ չէ նախորդ փորձերի ու տեսությունների պակասություններից: Դժվար չէ բեմում, կամ կինո և հեռուստատեսության խցիկի առջև հասնել վիճակների օրգանականության, բայց որքանո՞վ է դա արվեստ, եթե դերասանի ներսում չի գործում էսթետիկական հույզը, եթե խաղային տարերքը չի գալիս գեղեցիկի զգացումից: Ինչպես նախորդների մոտ, այնպես էլ այստեղ բացակայում է խաղի գաղափարը՝ այն, ինչ գի-

տակցվել է ռոմանտիզմի դարաշրջանում և մտածելու առիթ տվել 20-րդ դարի գեղագետ-հասարակագետին (Յոհան Հայզինգա): Խաղի գաղափարին անուղղակիորեն մոտեցնում է Զաբբաքի մի դիտարկումը դրությանը նախորդող դրությունների և գերի կենսագրության շուրջ: «Սիստեմում» այդ գաղափարը շոշափվում է էմոցիոնալ հիշողության առումով, որպես հուզականության հասնելու միջոց, բայց դա քիչ է, եթե չի արթնացնում մարդու հոգում նիրհող խաղային տարերքը: Բեմում լինի, թե դիտող խցիկի առջև, չատ հեշտ է սարսափեցնելը և չատ դժվար խաղի մեջ մտնելն ու ժայռ առաջացնելը: Արվեստում էսթետիկական հույզ են առաջացնում ոչ թե ապրվող կամ ճիգ ու ջանքով քամփող, այլ դիտվող ու խաղի արվող գգացմունքները: Սա այն է, ինչին տրվել է քավություն (կաթարսիս) անունը: Դա իրական է թատրոնում ու թատերական կրթության մեջ որպես անհատին տրված բնագդ ու ենթագիտակցություն: Եվ այստեղից են ծագում բոլոր կասկածները «սիստեմի» ու նրա գործնական մեկնությունների հանդեպ, եթե դրանք անժամիտ հայտարարություն ու թերադրանք են, ոչ թե փորձ, հարց ու մտածելու հրավեր:

ԱՎԱՐՏ

1958 թվականի հունիսի վերջին գեղարվեստա-թատերական ինստիտուտում սկսվելու էին դերասանական բաժնի ընդունելության քննությունները, և ընդունողն Արմեն Գուլակյանն էր:

— Քեզ հետ գործ ունեմ,— ասաց,— ինձ պիտի օգնես:
Քեզ սպասում եմ առավոտյան ժամը 9-ին:

— Ի՞նչ եմ անելու,— գարմացա ես:

— Կգաս, կիմանաս:

Առավոտյան, ժամը 9-ից տասր րոպե պակաս ես ինստիտուտում էի: Ուսումնական մասի վարիչը հարցրեց՝ ինչու եմ ինստիտուտում, ի՞նչ կապ ունեմ ընդունելության քննության Հետ: Հետո նա խոսում էր Գուլակյանի հետ առանձին: Լսեցի Գուլակյանի մի խոսքը.

— Թույլ տվեք՝ ես որոշեմ:

Մտանք քննասենյակ: Դա մեր պարասրահն էր, կենտրոնում մի նստարան, պատի մոտ մի շիրմ, որպես իրային պայմաններ: Հանձնաժողովի սեղանից աջ ու մի քիչ հեռու դրված էր մի փոքր սեղան, վրան թուղթ ու մատիտ, սեղանի մոտ երկու աթոռ:

— Դու էստեղ կնստես,— ասաց Գուլակյանը:

Ես գեռ չգիտեի ինչ է իմ դերը: Հանձնաժողովը հավաքված էր, Գուլակյանը դադար էր պահում: Նա ուներ այդպիսի սովորություն՝ յուռթյուն ստեղծել խոսքից ու գործից առաջ: Դա սոսկ ձեւ չէր, ինչպես կարծում էին ոմանք, այլ կենտրոնացում: Այդպես էլ նա մի քիչ սպասեցրեց ներս մտնող առաջին դիմորդին, ապա բացատրեց, թե ինչ է պահանջվում՝ արտատեքստային վարժություն, որ նշանակում էր դրություն և խնդիր ու արգելք դրության մեջ: Բացատրեց հանգամանորեն ու հիշեցրեց, որ

խոսքի կարելի է դիմել ծայրահեղ դեպում, թերևս մեկ բառ կամ մեկ պարզ նախադասություն: Բացարեց և ուղարկեց ինձ մոտ:

— Հիմա յսիր ասիստենտին, կասի ինչ ես անելու:

Դիմորդը նստեց կողքիս: Էտյուդը հետեւալն էր: Մարդը սենյակում արթնանում է ծխից ու գեռ չգիտի ինչից է ծուխը: Պարզվում է, որ հրդեհ է, մոտ կամ հեռու: Ես բացատրեցի, որոշելու է սենյակի չափը, դռան ու յուսամուտի տեղը ենթադրաբար, ոչ այս սենյակում, ոչ այս դռան, ոչ այս լուսամուտի մոտ: Ասացի ինչ է անելու, գուցե բացելու է լուսամուտը, բախելու է երեսակայական դուռը կամ փնտրելու է բանալին, բացելու է դուռն ու դուրս գալու և դրանով ավարտելու սյուժեն: Դիմորդը յսեց, մի նշում արեց, մի քիչ մտածեց ու ներկայացրեց գործողությունը: Գուլակյանը նորից բացատրեց, ցույց տվեց սխալները և հավելումներ արեց. «Չո՞գ է, թե՞ց ցուրտ, հագիդ ի՞նչ կա, բանալին հեշտությա՞մբ գտար, թե՞ց դժվարությամբ, և իմացիր՝ դա գործողության շեշտն է»: Այսքանն ասաց ու նորից ուղարկեց ինձ մոտ: Ես դարձյալ բացատրեցի, թե ինչը ինչից հետո է յինելու, և պետք է չձգձգել՝ բանալու անցքը դժվարությամբ գտնել, բայց արագ: Էտյուդը երկրորդ անգամ ներկայացվեց: Գուլակյանը դարձյալ բացատրեց, թե ինչն էր թերի, ինչը ճիշտ, և հայտնեց գնահատականը:

Քննության այս րնբացքը կրկնվում էր տարբեր էտյուդների ու խնդիրների առաջադրումով: Մի աղջկա, որ երկար զգեստով էր, Գուլակյանն էտյուդ չառաջարկեց, ուղարկեց անմիջապես ասիստենտի մոտ: Էտյուդը ես էի առաջարկելու, ասել է՝ ես էի քննություն հանձնելու: Ես առաջարկեցի մի էտյուդ Փիրմեն Ժեմիելի գրույցների գրքից, որի ռուսերեն թարգմանությունը նոր էր յույս տեսակ: Աղջկան հանձնարարեցի դույլով ջուր տանել, այսինքն՝ որոշել աղբյուրի տեղը, դույլը լցնել ու պատ-

կերացնել, որ ծանր է, տանել, մի տեղ դնել, հանգստանալ, ապա վերցնել ու և այլն: Աղջիկը հեշտ պատկերացրեց վարժությունը, հեշտ էլ արեց: Գուլակյանն ասաց, թե ջուրը կարող է թափվել, ի՞նչ է արվելու: Աղջիկը նստեց կողքիս, ես հուշեցի, որ ջուրը կարող է թափվել փեշին ու փեշը թրջել: Աղջիկը հասկացավ, էտյուդը կրկնեց երկար փեշը կողքից ձախ ձեռքով մի թեթև հետ քաշելով: Գուլակյանը հարցրեց՝ «ջուրը սա՞ռն էր, որոշիր»: Կրկնել տվեց ջրի թափվելու պահն ու որոշեց գնահատականը:

Քննությունը տևեց մինչև ժամը մեկը և ընդմիջումից հետո շարունակվեց մինչև ժամը վեցը: Զգիտեմ ով ավելի հոգնեց, ե՞ս, թե՞ Գուլակյանը: Տեսա որ սա քննություն էր նաև ինձ համար: Գուլակյանի հարցին՝ հո չե՞մ հոգնել, պատասխանեցի՝ հոգնել եմ ու ստացա իր պատասխանը.

— Իսկ ե՞ս ինչ ասեմ: Էսպես ենք աշխատում:

Նա կարծես ուզում էր ճշտել իմ ոեժիսորական ունակությունն ու համբերությանս չափի: Եվ ճշտեց այնքանով, որ ասաց.

— Ճիշտ աշխատեցիր:

Այստեղ վերջակետ դրվեց իմ աշխատանքին ոչ իր կամքով: Ինստիտուտում բարյացակամ չէին նրա նախաձեռնությունների հանդեպ, և ինձ հետ կապված մտադրությունը չիրականացավ: Տարի էր անցել, պատահաբար հանդիպեցի իրեն ինստիտուտի առաջին հարկի միջանցքում: Շատ կարճ տևեց մեր գրույցը: Պահը հարմար չէր, դասի էր մտնելու:

— Ես ամեն օր դասի եմ,— ասաց,— լավ կանես դաս: Արի, կիսուենք:

Սա նրանից լսածս վերջին խոսքն էր:

Ժամանակ անցավ՝ մի ամբողջ կյանք: Թատրոնն աստիճանաբար, ապա միանգամից փոխեց իր դեմքն ու խորհուրդը: Պակասեց լույսը, վերացավ գրիմը որպես արվեստ, հետնավարագույրը մթնեց, խամրեցին հույզերը, պակասեց

Ժայիտր: Մինչ օրս զգում եմ «քեմում գործելու գիտության» մարդու բացակայությունը մեր թատրոնական միջավայրում ու թատերական կրթության մեջ։ Նրա հետ շփվելով հասկացել եմ, որ բնդունել եմ թատրոնը ոչ որպես կենսաձև, այլ գաղափար, որ չպիտի քարշ գա իրականության պոչը բռնած, եթե արվեստ է ոչ թե կենցաղի կցորդ։

Իսկ թատերագիտություն ասվածը կեղծ գիտություն է, եթե չի սկսվում բեմից։ Ես այդտեղից էի սկսել, ճիշտ կամ սխալ։ Մարդս ինչ էլ սովորի, ինչ կրթություն ու գիտելիք էլ ձեռք բերի, ունենում է մի ելման կետ, հանգում ինչ-որ իմացության, որով չափում ու կշռում է իրեն։ Ես, անբավական իմ ստացած պաշտոնական կրթությունից, ստացել եմ մի բան, որ կրել եմ մինչ իմանալս որպես տեղ իմացության։ Կես դարից ավել գիտական հաստատությունում ու մեկր մյոււսին հաջորդող ուսանողական յսարանների առջև եղբեմն կիսակատակ ու լուրջ հիշեցնում եմ՝ ինչ է գրված իմ կրթության վկայականում։ «Դրամատիկական թատրոնի գերասան»։ Կրում եմ այդ որպես արդարացում իմ գրադարձունքի, որպես անձի ներքին եղանակ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԸ ԹԱՏՐՈՆՆ ԻՐԵՆՈՒՄ

Համառոտ տարբերակը տպագրվել է «Հայություն» ամսաթերթում (1996 թ., օգոստոս-սեպտեմբեր, 5-6), այնուհետև Լ. Հախվերդյանի կազմած «Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (Երևան, 1997 թ., էջ 235-265) խմբագրական քմահաճ միջամտություններով: Խմբագիրը՝ ոմն Ս. Հայրապետյան, անուշադիր է թողել հեղինակիս ուղղումները և ափեկտիվ գործողությունների մասին իմ խոսքը, նոր տողից չբերելով, վերագրել է Աճեմյանին (էջ 243):

1. Կ. Ստանիսլավսկի, Իմ կյանքը արվեստում, թարգմ. Ա. Տեր-Հովհաննի, Երևան, 1954, էջ 7:
2. «Մեղու Հայաստանի», 1864, թիվ 34:
3. Տե՛ս Հ. Հովհաննիսյան, Դերասանի արվեստի բնույթը, Երևան, 2002, էջ 253, 255:
4. Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, Երևան, 1956, էջ 112:

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԸ ԵՎ «ԲԵՄՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»

Համառոտ տարբերակը գետեղված է հեղինակիս «Թատրոն. Հին և նոր արժեքներ», գրքում (Երևան, 1986, էջ 162-184): Երկրորդ անգամ, որոշ հավելումներով, գրված է «Թատրոն և թատերախոսություն» գրքում (Երևան, 2004, էջ 302-335): Ներկա հրապարակումը լրացված է հնարավոր մանրամասներով և ճշգրտված:

1. Բառը չակերտների մեջ է առել հեղինակն ինքը. так называемая "система" (К. Станиславский, Собрание сочинений, т. I, М., 1988, с.431).
2. Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ. Յ., Երևան, 1952, էջ 107:
3. Նույն տեղում, էջ 627:
4. Նույն տեղում, էջ 109:
5. Պ. Աղամյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 11:

6. Գ. Սունդուկյան, հ. 3, էջ 109:
7. Մ. Волошин, Лики творчества. М., 1988, с. 349.
8. "Советская культура", 1958, 27 мая. «Սովետական արվեստ», 1958, N7, էջ 16-17:
9. Տետրը Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում է, հեղինակիս չմշակված ֆոնդում:
10. Ե. Զարենց, Անտիպ և Հավաքված երկեր, Երևան, 1983, էջ 35: Ծանոթագրություններում ասված է. «Բանաստեղծության ինքնագիրը պահպում է ռեժիսոր Ա. Գուլակյանի (1889-1960) թղթերում: Տպագրության է արամագրել ռեժիսորի դուստր Ս. Գուլակյանը: Գրված է «Նոյեմբեր» միության բլանկի վրա» (էջ 501):

**ԲԵՄԱԿՈՆ ԽԱՂԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄՏԱԾԵԼՈՒ
ՀՐԱՎԵՐ**

1. К. Станиславский, Собрание сочинений, т. I, М., 1988, с 429.
2. С. Гипиус, Гимнастика чувств, СПб., 2007, с. 270.
3. Sh'և Э. Торндайк, Дж. Уотсон, Бихевиоризм, пер. с англ., изд. "Act", М., 1998, с. 263-267.
4. P. Lartomas, Le langage dramatique, Parisy 1997, p. 331.
5. Sh'և "История западноевропейского театра", под ред. Г. Боядзиева и Е. Финкелштейн, М., 1970, с. 537.
6. Г. Зиммель, Избранное, т. II. пер. с нем., изд. "Юрист", М., 1996, с. 295.
7. Sh'և "Хрестоматия по истории русского театра", под ред. Г. Гояна, изд. "Искусство", Л.-М., 1940, с. 176-178.
8. К. Станиславский, т. I, с. 189.
9. Sh'և И. Виноградская, Жизнь и творчество К. С. Станиславского. Летопись., т. I, изд. ВТО, М., 1971, с. 507: Այսուհետև Լетопись.
10. Գ. Ստեփանյան, Արվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 3, Երևան, 1975, էջ 377:
11. Аристотель, Сочинения, т. IV, изд. "Мысль", М., 1984, с. 653.
12. "В спорах о театре" (сб.), СПб., 1913, с. 13.

13. *Տե՛ս “Психология процессов художественного творчества”* (сб.), изд. “Наука”, Л. 1980, с. 265-266.
14. **Կ. Станиславский**, Статьи. Речи. Беседы. Писма. М., 1953, с. 117.
15. **Կ. Станиславский**, т. I, с. 432.
16. *Նույն տեղում, էջ 429, 432:*
17. **Г. Шпет**, Театр как искусство, “Мастерство театра”, М., 1922, N 1, с. 52-53.
18. **Կ. Станиславский**, т. I, с. 431.
19. *Նույն տեղում, հ. 2, էջ 224, 371 (նկատի ունենք գլուխների վերնագրերը):*
20. *Տե՛ս Летопись*, т. IV, М., 1976, С. 152.
21. **А. П. Чехов**, Собрание сочинений, т. IX, М., 1963, с. 542.
22. *Տե՛ս Летопись*, т. IV, с. 156.
23. “Комсомольская правда”, 1928, 25 ноября.
24. *Տե՛ս Летопись*, т. IV, с. 412.
25. *Տե՛ս նույն տեղում, էջ 411:*
26. **Կ. Станиславский**, т. II, с. 33 (*Սմելյանսկու առաջարանից*):
27. *Տե՛ս Летопись*, т. IV, с. 529.
28. **Կ. Станиславский**, т. II, с. 34. (*Սմելյանսկու առաջարանից*):
29. *Նույն տեղում:*
30. *Տե՛ս Летопись*, т. IV, с. 537.
31. **Տե՛ս С. Волконский**, Человек на сцене, СПб., 1912, Выразительное слово, СПб., 1913, Выразительный человек, СПб., 1914.
32. **Կ. Станиславский**, т. II, с. 34 (*Սմելյանսկու առաջարանից*)
33. *Տե՛ս П. Симонов*, Метод Станиславского и физиология эмоций, М., 1962.
34. *Տե՛ս П. Ершов*, Технология актерского искусства, изд. “ВТО”, М., 1959.
35. *Նույն տեղում, էջ 5:*
36. **П. Ершов**, Режиссура как практическая психология, изд. “ВТО”, М., 1970.

37. **JL Выготский**, Собрание сочинений в 6-и томах, т. 6, изд. “Педагогика”, М., 1984 (*բերվում է լատ համացանցի* <http://www.tovievich.ru>).).
38. **K. Станиславский**, т. II, с. 34 (*Ամելյանսկու առաջարարներ*):
39. **Տե՛ս Բ. Сушкив**, Театр будущего, Тула, 2010, с. 36-49, 76-108.
40. **Տե՛ս Հ. Сибиряков**, Станиславский и зарубежный театр, изд. “Искусство”, 1967, с. 144.
41. **K. Станиславский**, т. II, с. 41.
42. **K. Юнг, Э. Нойман**, Психология в искусстве, пер. с нем., 1996, с. 34.
43. "Strasberg at the Actors Studio", New York, 1965, p. 40.
44. **R. Lewis**, Method-or Madness?, New York, 1986, p. 76.
45. **Տե՛ս P.Brook**, The Empty Space, London, 1990, p. 11-46.
46. **С. Юрский**, Кто держит паузу, М., 1989, с. 77.
47. И. Чаббак, Мастерство актера, пер. с англ. М., 2018, с. 7.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Մուտք</i>	<i>5</i>
<i>Թատրոնի մարդը թատրոնն իրենում</i>	<i>10</i>
<i>Թատրոնի մարդը և «բեմում գործելու գիտությունը</i> ..	<i>64</i>
<i>Բեմական խաղի համակարգումը որպես մտածելու հրա-</i>	
<i>գել</i>	<i>128</i>
<i>Ավարտ</i>	<i>155</i>
<i>Ծանօթագրություններ</i>	<i>159</i>

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԵՐԱՍՍԱՆԻ ԻՆՔՆԱՃԱՆԱԳՈՒՄԸ

Կազմի վրա օգտագործված է Վասիլի Կաղինսկու գրավյուրը
 «Փոքրիկ աշխարհներ» շարքից (1922թ.)
 Համակարգչային շարվածքը և էջադրումը
 Վերա Պապյանի

Հրատ. պատվեր N
 Ստորագրված է տպագրության 2020թ.:
 Զամփուր՝ 60 x 84^{1/16} : Թուղթ՝ օֆսեթ N 1:
 10,25 տպագր. մամուլ:
 Տպաքանակ՝ 250 օրինակ:
 Գինը՝ պայմանագրային: